

Նվեր մտքեր

Դպիր

ՄԻՄՈՆ
ՍՈՒՈՎԵՅՉԻԿ

Միմոն Սուլվեյչիկ

Նվեր մտքեր

Բովանդակություն

<u>Ազատ մարդ</u>	թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի
<u>Երեսառած երեխանե՞ր</u>	թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի
<u>Քաղաքավարի երեխանե՞ր</u>	թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի
<u>Հոգատար երեխանե՞ր</u>	թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի
<u>Առատաձեռն երեխանե՞ր</u>	թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի
<u>Սովորում եմ անգլիական դպրոցում</u>	թարգմանությունը՝ Արևիկ Ներսիսյանի
<u>Սովորում եմ ամերիկյան դպրոցում</u>	թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի
<u>Սովորում եմ շվեդական դպրոցում</u>	թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի
<u>Սովորում եմ չեխական դպրոցում</u>	թարգմանությունը՝ Մարինե Ամիրջանյանի
<u>Նվեր մտքեր</u>	թարգմանությունը՝ Սուսան Մարկոսյանի
<u>Ինչպե՞ս սովորեցնենք այնտեղ, որտեղ ուսումը չեն գնահատում</u>	թարգմ.՝ Անի Գրիգորյանի

Սուլվեյչիկյան ընթերցումներից

<u>Որքան տարբեր դպրոցները շատ են, այնքան մոտ ենք երեխաներին</u>	թարգմ. Ս. Մարկոսյանի
<u>Դպրոցը երեխայի կողմից է</u>	թարգմանությունը՝ Նաիրա Դալուզյանի
<u>Երեխաներին դաստիարակելն ինչու է դժվար մեզ համար</u>	թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի

Ազատ մարդ

Բարձրագույն արժեքը

Նախկին գաղափարախոսությունը հեռացավ ոչ թե չարանենգ մարդկանց կամքով, ինչպես երբեմն կարծում են, այլ որովհետև նրա հիմքում ուտոպիա էր՝ մի բան, որն աշխարհում չկա, չի կարող լինել: Գեղեցիկ, բայց անիրականանալի երազանք: Իրականում շատ քչերն էին հավատում դրան, այդ պատճառով էլ դաստիարակությունը մշտապես անարդյունավետ էր լինում: Պաշտոնական պրոպագանդան, որն իրականացնում էր նաև դպրոցը, շժմելու չափ չէր համապատասխանում իրական կյանքին:

Հիմա իրական աշխարհ ենք վերադառնում: Ահա, թե ինչն է կարևոր. այն խորհրդային չէ, բուրժուական չէ, այն իսկական է, իրական, աշխարհ, որտեղ մարդիկ ապրում են: Լավ, թե վատ, բայց ապրում են: Յուրաքանչյուր ժողովուրդ իր պատմությունն ունի, իր ազգային բնավորությունը, իր լեզուն և իր երազանքները. յուրաքանչյուր ժողովուրդ իրենը, հատուկն ունի: Բայց ամբողջությամբ աշխարհը միասնական է, իրական:

Եվ այս իրական աշխարհում սեփական արժեքներ գոյություն ունեն, յուրաքանչյուր մարդու համար սեփական բարձրագույն նպատակներ կան: Կա նաև մի բարձրագույն արժեք, որի համեմատ դասավորվում են մնացած նպատակներն ու արժեքները: Ուսուցչի, դաստիարակի, դաստիարակության համար չափազանց կարևոր է հասկանալ, թե որն է այդ բարձրագույն արժեքը:

Մեր կարծիքով այդ բարձրագույն արժեքը, որի մասին մարդիկ երազում և հազարամյակներ շարունակ վիճում են, որը մարդու համար ամենադժվար ընկալելին է, ազատությունն է:

Հարցնում են՝ հիմա ինչպիսի՞ մարդ դաստիարակենք:

Պատասխանում ենք՝ ազատ մարդ:

Ի՞նչ է ազատությունը

Այս հարցին պատասխանելու համար հարյուրավոր գրքեր են գրվել, և դա հասկանալի է. ազատությունն անվերջ հասկացություն է: Այն մարդու բարձրագույն հասկացությունների թվին է պատկանում և սկզբունքորեն չի կարող ճշգրիտ սահմանում ունենալ: Անվերջը չի կարելի սահմանել բառերով: Նա բառերից բարձր է:

Քանի մարդիկ ապրում են, նրանք ձգտելու են հասկանալ, թե ինչ է ազատությունը, և ձգտելու են դրան:

Աշխարհում ոչ մի տեղ իրական սոցիալական ազատություն չկա, յուրաքանչյուր մարդու համար տնտեսական ազատություն նույնպես, ըստ ամենայնի, չկա. բայց հսկայական թվով ազատ մարդիկ կան: Դա ինչպե՞ս կարող է պատահել:

«Ազատություն» բառի մեջ միմյանցից խիստ տարբերվող երկու հասկացություն է

պարունակվում: Ըստ էության բոլորովին տարբեր երկու բաների մասին է խոսքը:

Փիլիսոփաները, վերլուծելով այս դժվար բառը, եկել են այն եզրակացության, որ կա «ազատությունից» ինչ-որ արտաքին պարտադրանքից և ճնշումից ազատություն, և կա «ազատություն – համար»՝ մարդու ներքին ազատությունը ինքնիրագործման համար: Ինչպես արդեն ասվեց, արտաքին ազատությունը բացարձակ չի լինում: Բայց ներքին ազատությունը կարող անսահման լինել նույնիսկ ամենածանր կյանքի դեպքում:

Մանկավարժության մեջ վաղուց է քննարկվում ազատ դաստիարակությունը: Այդ ուղղությանը հարող ուսուցիչները փորձում են դպրոցում երեխային արտաքին ազատություն տալ: Մենք խոսում ենք մյուս՝ ներքին ազատության մասին, որը ցանկացած պայմանների դեպքում հասանելի է մարդուն, որի համար հատուկ դպրոցներ ստեղծելու անհրաժեշտություն չկա:

Ներքին ազատությունն արտաքին ազատությունից ամուր կապված չէ: Ամենաազատ պետության մեջ կարող են լինել կախված, անազատ մարդիկ: Ամենաանազատ պետության մեջ, որտեղ բոլորն են այս կամ այն կերպ ճնշվում, կարող են լինել ազատ մարդիկ: Այսպիսով, ազատ մարդ դաստիարակելը երբեք շուտ չէ և երբեք ուշ չէ: Ազատ մարդիկ պետք է դաստիարակենք ոչ այն պատճառով, որ մեր հասարակությունն ազատություն է ձեռք բերել, դա վիճելի հարց է, այլ այն պատճառով, որ ներքին ազատությունը պետք է հենց մեր սանին՝ ինչ հասարակության մեջ էլ ապրի:

Ազատ մարդը ներքուստ ազատ մարդն է: Ինչպես բոլոր մարդիկ, արտաքուստ նա կախված է հասարակությունից: Բայց ներքուստ նա անկախ է: Հասարակությունը կարող է արտաքին ազատություն ձեռք բերել (ճնշումներից), բայց ազատ դառնալ կարող է միայն այն ժամանակ, երբ մարդկանց մեծ մասը ներքուստ ազատ լինի:

Մեր կարծիքով, հենց սա էլ պետք է լինի դաստիարակության նպատակը՝ մարդու ներքին ազատությունը: Ներքուստ ազատ մարդիկ դաստիարակելով՝ մենք ամենամեծ օգուտն ենք տալիս և՛ մեր սաներին, և՛ ազատության ձգտող մեր երկրին:

Այստեղ ոչ մի նոր բան չկա. նայե՛ք լավագույն ուսուցիչներին, հիշե՛ք ձեր ամենալավ ուսուցիչներին. նրանք բոլորը ջանում էին ազատ մարդիկ դաստիարակել, դրա համար էլ հիշվում են:

Ներքուստ ազատ մարդկանց վրա է հենվում և նրանցով է զարգանում աշխարհը:

Ի՞նչ է ներքին ազատությունը

Ներքին ազատությունը նույնքան հակասական է, ինչքան ազատությունն ընդհանրապես: Ներքուստ ազատ մարդը, ազատ անհատը ինչ-որ տեղ ազատ է, ինչ-որ տեղ՝ ոչ:

Ինչի՞ց է ազատ ներքուստ ազատ մարդը: Նախ և առաջ՝ մարդկանց ու կյանքի նկատմամբ վախից: Մովորական հասարակական կարծիքից: Նա անկախ է ամբոխից: Ազատ է մտածողության կարծրատիպերից. ունակ է իր, սեփական հայացքն ունենալու: Ազատ է

նախապաշարումներից: Ազատ է նախանձից, շահամոլությունից, իր սեփական ագրեսիվ նկրտումներից:

Կարելի է ասել՝ նրա մեջ մարդկայինն է ազատ:

Ազատ մարդուն հեշտ է ճանաչելը. նա հասարակ պահվածք ունի, ինքնատիպ է մտածում, երբեք չի ցուցաբերում ո՛չ ստրկամտություն, ո՛չ վրդովվեցնող հանդգնություն: Նա գնահատում է յուրաքանչյուրի ազատությունը: Նա իր ազատությամբ չի գոռոզանում, ամեն գնով ազատության չի ձգտում, չի պայքարում սեփական ազատության համար. դա մշտապես ունի: Դա նրան տրված է հավերժ օգտագործման: Նա ազատության համար չի ապրում, այլ ազատ է ապրում: Նա թեթև մարդ է, նրա հետ հեշտ է, նա լի է կենսական շնչառությամբ:

Յուրաքանչյուրս հանդիպել է ազատ մարդկանց: Նրանց միշտ սիրում են:

Բայց կա մի բան, որից իրապես ազատ մարդն ազատ չէ: Շատ կարևոր է սա հասկանալը:

Ինչի՞ց ազատ չէ ազատ մարդը:

Խղճից:

Ի՞նչ է խիղճը

Եթե չհասկանանք, թե ինչ է խիղճը, ապա չենք հասկանա նաև ներքուստ ազատ մարդուն: Առանց խղճի ազատությունը կեղծ ազատություն է, դա ծանրագույն կախվածության տեսակներից է: Կարծես թե ազատ, բայց անխիղճ մարդն իր նկրտումների գերին է, կյանքի հանգամանքների ստրուկը, և իր արտաքին ազատությունը նա ի չարն է գործադրում: Այդպիսի մարդուն կարելի է ցանկացած անուն տալ, բայց ոչ ազատ: Ազատությունը հասարակական գիտակցության մեջ ընկալվում որպես բարություն:

Ուշադրություն՝ ն դարձրեք մի կարևոր առանձնահատկության. այստեղ չի ասվում՝ ազատ չէ իր խղճից, ինչպես սովորաբար ասում են: Որովհետև իր խիղճ չի լինում. Խիղճը և՛ սեփական է, և՛ ընդհանուր: Խիղճն այն ընդհանուրն է, որը յուրաքանչյուրի մեջ առանձին կա: Խիղճն այն է, որ միավորում է մարդկանց:

Խիղճը այն ճշմարտությունն է, որը մարդկանց միջև և յուրաքանչյուր մարդու մեջ է ապրում: Նա միակն է բոլորի համար, այն ընկալում ենք լեզվի միջոցով, դաստիարակության հետ, միմյանց հետ շփվելով: Պետք չէ հարցնել, թե ինչ է ճշմարտությունը. ազատության նման, դա էլ հնարավոր չէ բառերով արտահայտել: Բայց այն զգում ենք արդարության զգացողությամբ, ինչը յուրաքանչյուրս զգում է, երբ կյանքը ճիշտ է ընթանում: Եվ յուրաքանչյուրը տառապում է, երբ արդարությունը խախտվում է, երբ ճշմարտությունն է ոտնահարվում: Խիղճը՝ խիստ ներքին, բայց միաժամանակ հասարակական զգացողություն, մեզ ասում է, թե որտեղ է ճշմարտությունը, և որտեղ՝ սուտը: Խիղճը մարդուն ստիպում է կառչել ճշմարտությանը, այսինքն՝ ճշմարտությամբ, արդարացի ապրել: Ազատ մարդը խստորեն ենթարկվում է խղճին, բայց միայն նրան:

Ուսուցիչը, որի նպատակը ազատ մարդու դաստիարակությունն է, պետք է պահպանի արդարության զգացողությունը: Կրթության համար սա է գլխավորը:

Ոչ մի դաստարակություն էլ չկա: Դաստիարակության համար ոչ մի պետպատվեր հարկավոր չէ: Դաստիարակության նպատակը մեկն է բոլոր ժամանակների համար՝ մարդու ներքին ազատությունը, ազատությունը ճշմարտության համար:

Ազատ երեխա

Ներքուստ ազատ մարդու դաստիարակությունն սկսվում է մանկությունից:

Ներքին ազատությունը բնածին նվեր է, հատուկ տաղանդ, որը կարելի մարել, ինչպես և ցանկացած տաղանդ, բայց կարելի է նաև զարգացնել: Յուրաքանչյուր մարդ այս կամ այն չափով օժտված է այդ տաղանդով, ինչպես յուրաքանչյուրը խիղճ ունի. բայց մարդը կամ լսում է նրան և ձգտում խղճով ապրել, կամ այն խլացվում է կյանքի հանգամանքներով ու դաստիարակությամբ:

Նպատակը՝ ազատ մարդու դաստիարակությունն է որոշում երեխաների հետ շփվելու բոլոր ձևերը, միջոցներն ու մեթոդները:

Եթե երեխան չի ճնշվում և սովորում է խղճով ապրել, ինքնաբերաբար ձեռք է բերում կենցաղային և հասարակական բոլոր կարողությունները, որոնց մասին այդքան շատ է խոսվում դաստիարակության տեսություններում: Մեր կարծիքով, ներքին ազատության, որն առանց մեզ էլ կա երեխայի մեջ, զարգացումը, պահպանումն ու պաշտպանությունն է դաստիարակությունը:

Բայց երեխաները լինում են ինքնակամ, կամակոր, ագրեսիվ: Շատ մեծահասակների, ծնողների և ուսուցիչների թվում է, թե երեխաներին ազատություն տալը վտանգավոր է:

Այստեղով է անցնում ջրբաժանը դաստիարակության երկու մոտեցումների միջև:

Նա, ով ազատ երեխա է ցանկանում մեծացնել, նրան ընդունում է այնպիսին, ինչպիսին կա. նրան սիրում է ազատագրող սիրով: Նա երեխային հավատում է, և այդ հավատը նրան օգնում է համբերատար լինել:

Նա, ով ազատության մասին չի մտածում, վախենում է դրանից, երեխային չի հավատում, նա անպայման ճնշում է երեխայի ոգին և դրանով ոչնչացնում, լռեցնում է նրա խիղճը:

Երեխայի նկատմամբ նրա սերը դառնում է ճնշող: Այդպիսի անազատ դաստիարակությունն է հասարակությանը տալիս վատ մարդիկ: Առանց ազատության բոլոր նպատակները, նույնիսկ եթե դրանք շատ բարձր են թվում, դառնում են կեղծ և մարդկանց համար վտանգավոր:

Ազատ ուսուցիչ

Ազատ մեծանալու համար երեխան մանկությունից սկսած իր կողքին պետք է տեսնի ազատ մարդկանց և ամենից առաջ՝ ազատ ուսուցիչ: Քանի որ ներքին ազատությունը հասարակությունից ուղղակի կախված չէ, միայն մի ուսուցիչը կարող է խիստ ազդել

երեխայի մեջ թաքնված ազատության տաղանդի վրա, ինչպես պատահում է երաժշտական, մարզական, գեղարվեստական տաղանդների հետ:

Ազատ մարդ կարող է դաստիարակել մեզանից յուրաքանչյուրը, ամեն առանձին ուսուցիչ: Ահա այն դաշտը, որտեղ մեկն էլ զինվոր է, որտեղ մեկը կարող է ամեն ինչ անել: Որովհետև երեխաները ձգտում են դեպի ազատ մարդիկ, վստահում են նրանց, հիանում են նրանցով, շնորհակալ են նրանց: Դպրոցում ինչ էլ պատահի, նեքուստ ազատ ուսուցիչը կարող է հաղթող դուրս գալ:

Ազատ ուսուցիչը երեխային ընդունում է որպես իրեն հավասար մարդու: Հենց դրանով նա իր շուրջը ստեղծում է մթնոլորտ, միայն որտեղ կարող է աճել ազատ մարդը: Հնարավոր է՝ նա երեխային միայն մի կուր ազատություն է տալիս և դրանով փրկում նրան, սովորեցնում գնահատել ազատությունը, ցույց է տալիս, որ հնարավոր է ապրել որպես ազատ մարդ:

Ազատ դպրոց

Ուսուցչի համար շատ հեշտ է ազատ մարդու դաստիարակության ուղղությամբ առաջին քայլն անել, հեշտ է ազատության նկատմամբ սեփական տաղանդը ցուցաբերել, եթե աշխատում է ազատ դպրոցում:

Ազատ դպրոցում ազատ երեխաներ են և ազատ ուսուցիչներ:

Աշխարհում այդպիսի դպրոցներն այնքան էլ շատ չեն, բայց կան, և դա նշանակում է, որ այդ երազանքն իրականացնելի է:

Ազատ դպրոցում կարևորն այն չէ, որ երեխաներին թույլատրում են անել այն ամենը, ինչ ցանկանան, կարգ ու կանոնից ազատելը չէ, այլ ուսուցչական ազատ ոգին, ինքնուրույնությունը, հարգանքը ուսուցչի նկատմամբ: Աշխատում շատ կան խիստ դպրոցներ՝ ավանդական կարգ ու կանոնով, այնուամենայնիվ հենց այդ դպրոցներն են աշխարհին տալիս ամենարժեքավոր մարդկանց: Քանի որ այդ դպրոցներում աշխատում են ազատ, տաղանդավոր, ազնիվ ուսուցիչներ, որոնք իրենց գործի նվիրյալներն են, և այդ պատճառով դպրոցում խրախուսվում է արդարության ոգին: Բայց այդպիսի ավտորիտար դպրոցներում բոլորն ազատ մարդիկ չեն դառնում: Որոշ երեխաների՝ թույլերի ազատության դաղանդը լռեցվում է, դպրոցը նրանց կոտորում է:

Իսկապես ազատ դպրոցն այն է, ուր երեխաներն ուրախությամբ են գնում, որտեղ յուրաքանչյուր դասի ընթացքում է ազատություն տիրում:

Երեխաները հենց այդպիսի դպրոցում են գտնում կյանքի իմաստը: Նրանք սովորում են ազատ մտածել, ազատ դրսևորվել, ազատ ապրել և գնահատել ազատությունը՝ իրենց և յուրաքանչյուրի:

Ազատների դաստիարակության ճանապարհը

Ազատությունը և՛ նպատակն է, և՛ ճանապարհը:

Ուսուցչի համար կարևոր է բռնել այդ ճանապարհն ու քայլել՝ առանց շատ շեղումների:

Ազատության տանող ճանապարհը շատ դժվար է, այն առանց սխալների չես անցնի, բայց պետք է նպատակասլաց լինել:

Ազատ մարդ դաստիարակողի առաջին հարցն է՝ արդյո՞ք երեխաներին չեմ ճնշում: Եթե նրանց ինչ-որ բան էմ պարտադրում, ապա հանուն ինչի: Ինձ թվում է՝ նրանց օգուտի համար, բայց արդյո՞ք չեմ սպանում մանկական ազատության տաղանդը: Իմ առջև դասարան է, և պարապմունք անցկացնելու համար կարիք ունեմ որոշակի կարգապահության, բայց արդյո՞ք չեմ կոտրում երեխային՝ ձգտելով նրան ենթարկել ընդհանուր կարգապահությանը:

Հնարավոր է, որ ամեն մի ուսուցիչ չկարողանա այս հարցերի պատասխանները գտնել, բայց կարևոր է, որ յուրաքանչյուրն այս հարցերը ինքն իրեն տա:

Ազատությունը մեռնում է այն պահին, երբ հայտնվում է վախը: Հնարավոր է, որ ազատ մարդ դաստիարակելու ճանապարհը վախից ամբողջովին ազատվելն է: Ուսուցիչը երեխաներից չի վախենում, բայց և երեխաներն էլ ուսուցչից չեն վախենում, և ազատությունն ինքն իրեն դասարան է գալիս:

Վախից ազատագրվելը դպրոցում ազատության տանող ճանապարհի առաջին քայլն է: Մնում է ավելացնել, որ ազատ մարդը միշտ գեղեցիկ է: Ուսուցչի երազանքը հոգեպես գեղեցիկ, հպարտ մարդկանց դաստիարակությունը չէ՞:

Երեսառած երեխանե՞ր

Շատ դժվար է համարձակվել ու ասել մի բան, որն ընդհանուր կարծիքին հակառակ է: Բոլոր ծնողները բողոքում են, որ երեխաների հետ լեզու չեն գտնում. համարվում է, որ հանկարծ բոլոր երեխաները դարձել են երեսառած, փափկակյաց, և նույնիսկ տղաներին սպառնում է «ֆեմինիզացիայի» վտանգը, դաստիարակության մեջ բացահայտ զգացվում է «տղամարդկային» պակասը: Եվ այս պայմաններում բարձրաձայն հայտարարվի, թե պետք է երեխաներին երես տա՞լ: Դրա համար նույնիսկ ծեծ է հասնում:

Եվ այնուամենայնիվ...

Երեխաներին երես տալն անհրաժեշտ է:

Ըստ Ուշակովի բառարանի՝ «երես առնել» նշանակում է «չարություն անել, թռչկոտել, խաղալ զվարճանալով և չարաճճիություն անելով»: Հենց այս «խաղալ զվարճանալով և չարաճճիություն անելով»-ը պետք է երեխաներն անեն իրենց կյանքի առաջին 5-6 տարիներին, եթե ցանկանում ենք, որ նրանք որպես խաղաղ, ինքնավստահ ու կամային մարդ մեծանան:

Ականջ դնենք ժողովրդական խոսքին:

- Վա՛յ, երեսառա՛ծ,- ասվում է սիրալիր նրբերանգով:
- Թոռնիկս չարաճճի է, երես տված,- քնքշանքով:

- Տեղում տիտիկ անողը չէ,- հիացմունքով:

Պսկովյան գյուղերից մեկում մի պառավ բողոքում էր հարսից.

- Բարի չէ, իր երեխաներին երբեք չի փաղաքշում, երես չի տալիս... Երեխաներին պետք է երես տալ:

Գեղջկական ընտանիքում, համենայն դեպս Պսկովի մարզում, որտեղ հեղինակը հատուկ ուսումնասիրել է այս փոքր խնդիրը, մինչև հինգ տարեկան երեխան անտանելի էակ է:

Նրա հետ հնարավոր չէ հանգիստ ապրել. սլանում է տնով մեկ, կարող է կոպիտ

պատասխանել մորը ու կատաղի դիմադրել, եթե մայրն ուզենա շպապցնել: Նա ամեն

քայլափոխի չարաճճիություն է անում, և նրան ամեն ինչ ներվում է: Դեռ ավելին, նրա

ամեն մի շարությունն առաջացնում է ծնողների հիացմունքը: Եթե չարաճճիություն է

անում, ուրեմն խելացի է, եռանդուն, երջանիկ: Երբ մայրը հարևանուհուն բողոքում է, թե

իր որդին անկարգ բաներ է անում, նա ձևական է բողոքում, իսկ իրականում

հպարտանում է: Չլսող, երեսառած երեխան ավելի բնական, նորմալ է համարվում...

Թվում է, թե այդպիսի դաստիարակությունից բան դուրս չի գա: Եթե հինգ տարեկանում երեխային կառավարել չի լինում, ապա (ոմանց ձեռնտու է այսպիսի

«տրամաբանությունը») տասը տարեկանում խուլիզան կդառնա, իսկ տասնհինգում՝ ավագակ: Բայց մանկավարժությունն իր տրամաբանությունն ունի՝ մանկավարժական:

Իրականում ահա թե ինչպիսին է պատկերը. քիչ տեղերում կհանդիպես այնպիսի

աշխատասեր, կատարող և մեծերի հետ հարաբերություններում համեստ դեռահասների,

ինչպիսիք Պսկովի մարզում են: (Բավական է ասել, որ արդեն տասը-տասնմեկ

տարեկանում երեխաներն ամռանը սկսում են աշխատել կոլտնտեսությունում ու աշխօր

վաստակում): Քաղաքային, մոսկովյան կյանքից էլ կարող են ծանոթների գոնե հինգ

երեխաների օրինակ բերել, որոնց փոքր հասակում հյուր տանելը տան համար փորձանք

էր դառնում (հազիվ հասցնում էինք փրկել բաժակները, փորձում էին քաշել ու հատակին

զգեղ սեղանի սփռոցը, մեկ էլ տեսար՝ արդեն հեռուստացույցի կոճոկներն էին քանդում)։

հիմա այդ երեխաները դարձել են պատանիներ և ինչպիսի՝ փայլուն պատանիներ:

Երեսառած երեխան լսող դեռահաս է: Մանկավարժական տրամաբանությունը կարող է

և այսպիսի ձևակերպում ունենալ: Պետք է միայն ճշտել, թե ինչ է նշանակում

«երեսառած»: Ինչի՞ց երես առած: Ուշադրությունից, նախ և առաջ ծնողների

ուշադրությունից: Ինքն իրեն թողնված մանչուկը, որն իր բակային աշխարհից

հազվադեպ է տուն խուժում, երես տված երեխա չէ: Հակառակը, նրան բոլորը քշում են,

նախատում ու սպասում, թե երբ է իր մի կտոր հացը վերցնելու և աչքից չքվելու:

Երեսառածը նա է, ում համար տանը շատ լավ է, ում բոլորը սիրում են: Դրանից էլ նա

այս աշխարհում իրեն բացարձակ վստահ է զգում, համարում է, որ իրեն ամեն ինչ

կարելի է, ոչ մեկից չար բանի չի սպասում: Նա դյուրահավատ է, ուրախ ու միամիտ.

խորամանկելու կարիք չունի, քանի որ առանց դրա էլ ստանում է այն ամենը, ինչ

ցանկանում է: Հազվադեպ են երեսառած երեխաները ժլատ մարդ դառնում:

Մեծերի այդ սիրուց, այդ անապակ գոյությունից են կուտակվում ապագա մեծահասակի

բարոյական ուժերը: Նույնիսկ ամենաստվորական կյանքն ապրելու համար մեծ

արիություն է անհրաժեշտ: Որտեղի՞ց դա վերցնես, եթե մանկության տարիներին չես

պաշարել: Երես տված երեխաները երջանիկ երեխաներ են, իսկ երջանիկ երեխաները երջանիկ մեծահասակ են դառնում:

«Երջանիկ, խնամված, կերակրված» երեխան ամեննին էլ եսասեր չի դառնում, ինչպես երբեմն կարծում են: Եթե երեխային «ամեն ինչ կարելի է», եթե նա ուրախ վերաբերմունք ունի կյանքի նկատմամբ, ապա խղճահարության առաջին զգացումը նա կունենա ոչ թե իր, այլ ուրիշի նկատմամբ: Երես չտված երեխան, որ դաստիարակվել է խիստ կանոններով, որ շրջապատված է ամենատարբեր «չի կարելի»-ներով ու «չհամարձակվեալ»-ներով, որ կյանքի առաջին տարիներից ծանոթ է պատիժներին, ամենից առաջ իրեն է խղճում, կենտրոնանում սեփական անախորժությունների ու դժբախտությունների, իր անձի վրա: Նա էգոիստ դառնալու ավելի մեծ հնարավորություն ունի:

«Երեսառած երեխա» ամեննին չի նշանակում «կամակոր երեխա»: Մանկական պարզունակ քմահաճությունը մեծերի ուռճացած քմահաճության արտացոլումն է: Մեկ բոլորը խաղում ու զվարճացնում են փոքրիկին, մեկ էլ հանկարծ հայրը խոժոռովեց. «Ժամը ինն է՝ քնելու ժամանակ»: Ցանկանաս, թե չէ, լաց լինես, թե չլինես, պետք է քնես: Ինչո՞ւ: Ո՞վ է այդ «ռեժիսոր», որի պատճառով բոլորը նյարդայնանում ու զայրանում են: Փոքրիկին դա անհասկանալի է, նրան այդ ամենը թվում է մեծերի անհասկանալի քմահաճություն, որի դեմ կարելի է պայքարել միայն նույն միջոցով՝ կամակորությամբ:

Ծնողներին ուղղված բոլոր գրքերում գովերգվում է խիստ ռեժիսոր: Իսկապես, ռեժիսորը ապրելը հեշտ է, բայց ո՞ւմ համար: Ծնողների: Եվ ո՞վ է ուսումնասիրել, թե ինչպես են մեծանում խիստ ռեժիսոր դաստիարակված երեխաները, և ինչպե՞ս՝ առանց դրա: Ավելի ուշադիր դիտարկելու դեպքում կարող է հանկարծ պարզվել, որ ռեժիսոր ոչ միայն օգտակար հայտնագործություն է, այլ ինչ-որ տեղ նաև վնասակար, մանկան հոգին ճնշող: Ազատության սովոր երեխայի համար դժվար կլինի հարմարվել դպրոցի կանոններին, նա շատ գլխացավանք կպատճառի իր ուսուցիչներին: Բայց ո՞վ է ասել, որ դաստիարակության իդեալը հոգսից հեռու դաստիարակությունն է: Եվ այդ չլսողների ց չեն մեծանում ամենաեռանդուն և հասարակությանը պիտանի մարդիկ: Երես առած, փոքր հասակում ոչ մեկից չվախեցող երեխաներն ավելի արագ են հասնում են բարոյական անկախության, ինչը հոգեբանները համարում են անձի ամենակարևոր որակներից մեկը: Այնպես ենք վախենում երեխաների հետագա չլսելուց, որ վարժեցնում ենք սանձել իրենց ցանկությունները նրանց կյանքի համարյա առաջին քայլերից, ավելի վաղ, քան երեխան կտվորի զգալ իր ցանկությունները և արտահայտել: Գուցե հենց դա է պատճառը, որ երբեմն մեծանում են ցանկությունների շատ աղքատ ցանկով երեխաներ. նրանց ամեն ինչ հենց սկզբից թվում է անհասանելի, անհնար: Դրանից են ծնվում կամազրկությունն ու անտարբերությունը: Մենք ազահորեն կարդում ենք գրքույկներ, թե ինչպես ամրացնենք երեխայի կամքը, բայց հենց այն ժամանակ, երբ այդ կամքն արմատ է տալիս, երբ դեռ մի թույլ ծիլ է, շտապում ենք պոկել՝ որպես մոլախոտ, հանում «հնազանդ երեխա» անունով գեղեցիկ ծաղկի: Անցնում են տարիներ, հնազանդության ծաղկին անխուսափելիորեն թռչնում է, ու մնում է անկամությունը:

Եթե երեխան չսովորի ծնողից իր ուզածն ստանալուն, հետո ե՞րբ և որտե՞ղ է սովորելու ինչ-որ մեկից ինչ-որ բանի հասնել: Արդյո՞ք շահավետ է, որ ծնողների հետ յուրաքանչյուր բախման դեպքում հաղթանակը հորը կամ մորն է հասնում: Օգտվելով տարիքի և ուժի առավելությունից՝ մենք երեխաներից անխղճորեն խլում ենք ամենաքաղցր զգացողությունը՝ հաղթանակի զգացումը: Յուրաքանչյուր մայր իր երեխային ուտելիքի ամենալավ կտորն է տալիս: Բայց բախումների ժամանակ հաղթանակը՝ ուրախության այդ քաղցր պատառը, նա ձգտում է խլել: Իսկ դաստիարակչական նկատառումներով գուցե երբեմն զիջե՞լը օգտակար լինի մեր երեխաներին: Եթե յուրաքանչյուր բախումից երեխան պարտված է դուրս գալիս, ե՞րբ է նա հաղթել սովորելու:

Վստահությունը, սերը, բարությունը այն հիմքերն են, որոնց վրա իրենք իրենց կառուցվում են ավելի բարդ զգացմունքները: Դաստիարակե՞ք երեխային բարությամբ, և նա կատի չարը, երբ իրականում հանդիպի դրան: Նա չարն ատելու և դրան չվարժվելու ուժ կունենա: Դաստիարակե՞ք երեխային ատելության մեջ և բացի ատելությունից ոչինչ չեք դաստիարակի: Ի դեպ, միայն երեսառած երեխան է կարողանում նեղացնողին պատասխանել, ընդ որում բացահայտ և ոչ թե «տականց»: Երես տված երեխաները մեծանում են ավելի համարձակ, քանի որ չգիտեն, թե ինչ է վախը. մանկության տարիներին նրանք վախենալու բան չեն ունեցել:

Երեխային երես տալով դաստիարակելը դժվար է: Երեսառածը հսկողություն է պահանջում: Ինչքան երեխայի համար հեշտ լինի մանկության տարիներին, այնքան հեշտ կլինի նաև հետագա կյանքում, քանի որ ավելի լավ, ավելի ազատ կբացվեն նրա կենսական ուժերը: Եվ որքան դժվար լինի ծնողների համար, քանի դեռ երեխան փոքր է, ինչքան շատ նրանք հանդուրժեն երեխայի չարաճճիությունները, այնքան հեշտ կլինի նրանց համար հետո, քանի որ երեխան ինքուրույն կդառնա: Երբ երեսառած երեխաները մեծանում են, նրանք շատ բան են ցանկանում և ավելի շատ բանի են հասնում կյանքում: Հինավուրց իմաստությունն ասում է. «Մինչև հինգ տարեկանը երեխան արքա է, մինչև 15-ը՝ ծառա, տասնհինգից հետո՝ ընկեր»: Եթե ծնողները երեխային երես են տալիս վաղ հասակում, նրանք կկարողանան նրան խիստ վերաբերվել դեռահաս տարիքում, երբ նրան իսկապես պետք է ամուր կարգապահություն և ուղեցույց: Մանուկ հասակում երես տված երեխային 11-13 տարեկանում կարելի է շատ խիստ պահել՝ առանց վախենալու, թե նրա կամքը կկորտրվի: Բայց հաճախ հակառակն է լինում. մանուկ հասակում երեխային խստավարժության են սովորեցնում, ձգտում են բացարձակ հնազանդության, իսկ հետո, երբ այդ հնազանդությունն անհրաժեշտ է, չեն կարողանում հասնել դրան. և՛ ծնողներն են հոգնում այդ բազմամյա պայքարից, և՛ երեխաներն են շտապում ազատվել ծնողների՝ արդեն զզվելի դարձած բռնապետական իշխանությունից:

Ցավոք, ոչ բոլոր ծնողներն ունեն երես տալու հնարավորություն: Ամեն դեպքում դրան պետք է ձգտել՝ դրսևորելով համբերություն և վստահելով բնությանը: Համբերություն, ահա թե ինչը հաճախ չի բավարարում ծնողներին:

Մի մանկաբույժ, ում մի երիտասարդ մայր բողոքում էր, թե իր երեխայի ատամներն

ուշանում են, հարցրեց.

- Իսկ շա՞տ եք տեսել մարդ, որն ատամ չի հանել:

Մեզ անընդհատ թվում է, թե մեր երեխայի ատամները չեն ծլի, թե նա չի սովորի խոսել, հետո կարդալ... Ա՛յ թե հնարավոր լիներ միանագամից ստանալ պատարաստի մեծահասակներ, գիտուն ու ինտելիգենտներ, ինչքա՛ն հեշտ կլինեիր ծնողների համար: Ու ի՛նչ ձանձրալի...

Երեխաները պետք է անցնեն, ապրեն երես առնելու, ինտելիգենտ չլինելու, չլսելու ժամանակները. դա զարգացման անհրաժեշտ փուլ է: Ոչ մի հարց, նույնիսկ բարոյական ու կարգապահական կանոնների ներարկման հարցը, լուծելիս պետք չէ շտապել: Ամեն ինչ իր ժամանակն ունի, ատամներն անպայման դուրս կգան: Մեզ անհանգստացնում է դեռահասների ու պատանիների պարզունակությունը, բայց կաթից վառվելուց հետո արժե՞ ջուրը փչել: Երեխաների ժամանակից շուտ զարգանալը, նրանց անսահման արքայության ժամանակի կրճատումը նույնքան տագնապալի են, ինչքան դեռահասի ուշացած բարոյական զարգացումը: Իսկ գուցե այս երկու երևույթները փոխկապակցվա՞ծ են: Բնությունն իր գործն է անում, բնույթը չի կարող ավելի արագ զարգանալ միայն այն պատճառով, որ մարդու ինտելեկտն փչել է հեռուստացույց հորինել ու երեխային նստեցնել այդ նկարներով ապակե խողովակի առաջ:

Կարող են ասել, թե երեխաները մտորներում ու մանկապարտեզներում են մեծանում, իսկ այնտեղ նրանց ոչ մեկը երես չի տալիս:

Այո՛, այնտեղ, որտեղ երկու-երեքից ավելի փոքր երեխա կա, երես տալը վտանգավոր է. երեխաները միմյանց հրահրելով բոլորովին անկառավարելի են դառնում: Այդ պատճառով մանկական հաստատություններում ստիպված են լինում պահպանել խիստ կարգապահություն, չնայած հաճախ խստությունն անցնում է անհրաժեշտության ու բանականության սահմանները:

Թերևս լավը կարելի է համարել ոչ թե այն մանկապարտեզը, որտեղ երեխաները հնազանդ են ու կազմակերպված, այլ այն, որտեղ երեխաներն աղմկում ու չարաճճիություն են անում, բայց միևնույն ժամանակ պահպանվում է կարգապահության որոշակի մակարդակ, որն անհրաժեշտ է երեխաների անվտանգությունն ապահովելու համար: Միայն մինիմումը:

Ի դեպ, երեխաների համար գոյություն չունի այդպիսի հարցը, թե կարելի՞ է երես առնել: Նրանք երես են առնում առանց մեր թույլտվությունը հայցելու և դառնում են առողջ մարդիկ:

Քաղաքավարի երեխանե՞ր

Համարձակվում եմ կասկածել կարծես անքննելի այս ճշմարտությանը՝ պե՞տք է արդյոք երեխաներին քաղաքավարություն սովորեցնել:

Թերևս ոչինչ այնքան չի վրդովում, որքան քաղաքավարի, բայց անսիրտ մարդը: Հրաշալի

գիտենք, որ միայն արտաքին քաղաքավարությունը քիչ է, պետք է նաև ներքին քաղաքավարություն:

Բայց ոչ բոլորն են հասկանում, որ այդ երկու տեսակի քաղաքավարությունները, թեև նույն բառով են արտահայտվում, բնույթով բոլորովին տարբեր երևույթներ են: Արտաքին քաղաքավարությունը սովորությունների, վարքի հմտությունների հավաքածու է. ներքին քաղաքավարության հիմքում ինչ-որ հոգեբանական կարողություն կա, հիշողության, ուշադրության, երաժշտական լսողության նման մի բան: Դա՝ այդ կարողությունը, համանմանությամբ կարելի է սրտի լսողություն անվանել:

Պարտադիր չէ մասնագետ լինել նկատելու համար, որ մարդկանց սովորությունները (հմտությունները) և ընդունակությունները տարբեր կերպ են ձևավորվում: Հմտությունը պատվաստում են, ընդունակությունը՝ զարգացնում: Սովորությունը կապվում է մեքենայացման, իսկ ընդունակությունը՝ կյանքի նկատմամբ ստեղծագործական մոտեցման հետ: Ինչն օգտակար է սովորություն ձևավորելիս, հաճախ վնասակար է ընդունակության զարգացման համար, և հակառակը:

Հյուր եք գնացել և փոքրիկ տղային նվեր եք տարել: «Ի՞նչ պետք է ասես», - խիստ հիշեցնում է մայրը: «Շնորհակալություն», - մոթմոթում է որդին: Միայն այդ մի «կախարդական բառ» ասելով՝ նա կարծես հյուրի հետ բոլոր հաշիվները փակում է: Կարծես երախտագիտությունը ժպիտով, ուրախությամբ արտահայտելու հարկ այլևս չկա: Քաղաքավարության սովորությունն ամրապնդվեց, սրտի լսողությունը բթացավ... Հարյուրավոր կամ հազարավոր այդպիսի վարժություններ, և բնածին թանկարժեք այդ հատկությունից հետքն էլ չի մնա:

Կարծում եմ, որ բոլոր երեխաները չեն, որ կարող են միաժամանակ և՛ քաղաքավարությանը վարժվել, և՛ զարգացնել սրտի լսողությունը: Մանավանդ որ քաղաքավարության կանոնները հաշվարկված են հենց այնպես, որ մարդը շնորհակալություն հայտնի նաև այն դեպքում, երբ երախտագիտություն չի զգում: Ժամանակից շուտ որդուն կամ դստերը վարժեցնելով, որ բառերով արտահայտի զգացումներ, որ դեռ չի զգում, կարող ենք այդ զգացումները հավերժ լռեցնել:

Ինչո՞ւ ենք, օրինակ, երեխային ստիպում «շնորհակալություն» ասել: Կարծում եմ՝ որպեսզի մարդկանց մոտ լավը երևանք, ցույց տանք մեր երեխայի դաստիարակվածությունը:

Քաղաքավարության դաստիարակությունն այնքա՛ն նման է դաստիարակությանը: Սակայն համոզված եմ, որ իսկական դաստիարակությունը միայն և միայն այն դեպքում է տեղի ունենում, երբ հարկ է լինում հոգեկան ուժերի գոնե մի կաթիլ ներդնել: Իսկ քաղաքավարության վարժեցնելիս, համաձայնեք, սովորաբար ոչ թե հոգի ենք ծախսում, այլ նյարդեր. դա ամենևին էլ նույն բանը չէ: Առանց հայր կամ մայր լինելու էլ կարելի է քաղաքավարության վարժեցնել: Անգամ առանց երեխային սիրելու էլ կարելի է: Եթե Հեքլբերի Ֆինը մի քիչ ավելի երկար դիմանար Դուգլասի այրու մոտ, վերջինս

հավանաբար քաղաքավարի տղա կդարձներ նրան:

Նույնիսկ նրբանկատությունը, օրինակ՝ գնորդի նկատմամբ վաճառողի նրբանկատությունը, կարելի է զգալիորեն ավելացնել զրույցի, դիտողության և հատկապես պարզաստրումների միջոցով: Սրտի լսողությունը նման նման ազդեցությունների չի ենթարկվում: Դա ոչ թե բառերի, այլ վիճակի լսողություն է: Այդ պատճառով էլ այդ ընդունակությունը զարգացնելու համար դաստիարակության սովորական բոլոր մեթոդները, սկսած համոզելուց մինչև պատժելը, անկարող են, քանի որ հաշվարկված են նախ և առաջ բառերի միջոցով ազդելու համար:

Ինչպե՞ս զարգացնենք երեխայի սրտի լսողությունը:

Մա շատ ավելի բարդ խնդիր է, քան «շնորհակալություն» և «խնդրեմ» բառերին վարժեցնելը:

Մայրը որդուն կարևոր հասկացություն է սովորեցնում՝ «չի կարելի»: Որդին ձեռք է տվել տաք առարկայի, լաց է լինում: Մայրը խրատում է. «Տեսնո՞ւմ ես՝ ցավում է: Լսի՛ր, երբ մայրիկն ասում է՝ չի կարելի, թե չէ կցավի»: Եվ այդպես ամեն քայլափոխի՝ «Չի կարելի, կրնկնես», «Չի կարելի, ջարդուփշուր կլինես», «Չի կարելի, կմրսես», «Չի կարելի, ատամներդ կցավեն»... Մինչդեռ իսկական «չիկարելին» այն դեպքում չէ, երբ քեզ ցավ կպատճառվի, այլ երբ ուրիշին ես ցավ պատճառում: Զգացումների ուղղվածությունը դեպի ուրիշը, ուրիշին զգալը՝ ահա սրտի լսողության զարգացման առաջին պայմանը: Ընտանիքը հեռուստացույց է դիտում, տղային անհրաժեշտ է անցնել էկրանի դիմացով. կթեքվի՞, կցատկի՞ նա: Կշտապի՞: Նշանակում է՝ տղան լավ վիճակում է. զգում է ուրիշների ներկայությունը, վախենում է նրանց խանգարելուց: Իսկ եթե հանգիստ, առանց շտապելու է անցնում, ուրեմն տանը փորձանք է հասունանում, և ընտանեկան խորհուրդ հրավիրելու ժամանակն է:

Որպեսզի երեխան սովորի ուրիշ մարդկանց զգալ, պետք է նաև նրա մեջ ուրիշ մարդու տեսնենք: Մայրը որոշել է աշխատասիրություն դաստիարակել. «Տո՛ւր... Բե՛ր... Օգնի՛ր...»: Միթե՛լ է սովորեցնում «Այնքա՛ն հոգնել եմ... Խղճա՛ մայրիկին... Տո՛ւյց տուր, թե ինչքան ես մայրիկին սիրում... Ո՞ւմ ես շատ սիրում՝ հայրիկի՞ն, թե՞ մայրիկին»: Իսկ ի՞նչ օրինակ է նա տեսնում կյանքի հենց առաջին օրերից: Իր առջև միշտ տեսնում է մարդու (և այնքան հեղինակավոր, ինչպիսին մայրն է), որ մշտապես բողոքում է, հոգնում, օգնության կարիք ունի, չի կարողանում ինքնուրույն գնալ և վերցնել մատնոցը, ամոթալի չի համարում ամեն բոպե դատարկ խնդրանքներով դիմելը: Ուրեմն ես էլ կարող եմ բողոքել, նեղություն տալ ուրիշներին, և եթե ցավ եմ զգում, բարձրաձայն հայտարարեմ ցավի մասին, թող մայրիկն էլ տառապի:

Կարծում եմ, որ այդպիսի ընտանիքում երեխան երբեք չի հասկանա, որ սիրող մարդուն բողոքելն անխղճություն է: Մարդկանց ոչ մի նեղություն մի՛ պատճառիր, մի՛ տխրեցրու նրանց քո անախորժություններով, հնարավորության դեպքում ի՛նքդ հարցերդ լուծիր: Մեծերս այս դասը պետք է տանք: Իսկ եթե հարկ է լինում երեխայից ինչ-որ բան խնդրել, նրան ոչ թե մեկ, այլ տասն անգամ «խնդրում եմ» ասենք, որպեսզի տեսնի, թե ինչքան

դժվար է խնդրելը, ուրիշին նեղություն պատճառելը, և որպեսզի չկարողանա մերժել խնդրանքը: Երբ երեխային դիտողություն ենք անում, կարծես վարքն ենք ուղղում, բայց հաճախ բթացնում ենք սրտի լսողությունը:

Ուրի՛շը, ուրիշի՛ զգացմունքները... Հոր արտաբերած «Հոգնած եմ» և «Մայրդ հոգնած է» արտահայտությունների միջև է դաստիարակության ջրբաժանը:

Երեխաների համար այնքան դժվար է ուրիշի վիճակը հասկանալը, որ շատերին հանկարծ թվում է, թե ծնողներն իրենց չեն սիրում: Նրանց այդ տառապանքների մասին իմանում ենք միայն շատ տարիներ հետո...

Այո՛, սրտի լսողությունը սկզբում կարող է նաև խաբել: Իսկ գուցե չի՞ խաբում, միգուցե ինչ-որ պահի իսկապե՞ս քիչ ենք սիրել երեխային: Կզայրանայինք, եթե մեզ այդպիսի բան ասեին, իսկ նա զգացել է...

Փոքրիկը հեշտ է հասկանում ուրիշի վիճակը, եթե ինքն է առաջացրել այդ վիճակը: Նեղություն մի՛ տուր ուրիշին և աշխատի՛ր ուրախացնել նրան: Ընտանեկան առաջին հոգսն այն է, թե ո՛ւմ և ինչ նվիրեն:

Մի ինժեներ կին իր երկու փոքրիկ երեխաների մասին ինձ ասում էր.

- Ես ջանում եմ նրանց տալ սովորեցնել: Վերցնելը նրանք ինքները կսովորեն:

Եվ իսկապես, նրա չորս տարեկան աղջիկը միայն նվերով է հյուր գնում մոր հետ. մորը հաջողվել է հասնել այն բանին, որ աղջկա համար հաճույք լինի տալը, նվիրելը, ուրիշի ուրախությամբ ուրախանալը:

Ըստ մեր առօրյա պատկերացումների՝ սրտացավ մարդն ամենից առաջ արձագանքում է ուրիշի ցավին: Մարդկանց համար հեշտ չի եղել ապրելը, և լեզվի մեջ մնացել են «ցավակց-ություն», «կարե-կց-անք», «ապրումա-կց-ում» արտահայտությունները: Իսկ «խնդակց-ում» լեզվում չկա: Ցանկալի է ավելի հաճախ լսել սրտաբույժ «Ուրախ եմ քեզ համար»-ը, քան «Նախանձում եմ քեզ»:

Սովորեցնենք երեխաներին ուրախանալ ուրիշների հաջողություններով, ընդ որում ուրախանալ անշահախնդիր՝ չհակադրելով դրանք սեփական անհաջողություններին: Երբ աղջիկդ հայտնում է, որ իրենց դասարանում գերազանցիկ կա, սրտանց ուրախացեք անձանոթ երեխայի համար և ոչ թե շտապեք հանդիմանել՝ «Ա՛յ, տեսնո՞ւմ ես, իսկ դո՞ւ»: Օրինակ բերելիս ընդհանրապես պետք է շատ զգույշ լինել: Հասակակցին օրինակ բերելով՝ հաճախ ոչ թե ընդօրինակելու ցանկություն ենք գրգռում, այլ նախանձ:

Եվ ոչ մի հանդիմանություն մի՛ արեք, եթե երեխան չի շտապում նվիրել, տալ, եթե դեռևս չի կարողանում ուրախանալ ուրիշի համար: Մեզանից միայն մի բան է պահանջվում՝ ինքներս նվիրենք, ինքներս ուրախանանք և... սպասենք: Տազնապախառն հույսով սպասենք, սպասենք ու սպասենք, որ կգա այն օրը, երբ երեխան իր առաջին նվերը կանի ուրիշ մարդու (ոչ թե մորը, ոչ թե պապիկին): Երբեմն երեխային ուժեղ տպավորություններ մատուցենք: Որպես սնունդ՝ նպատակահարմար է երեխային օրական մեկ խնձոր տալը, դաստիարակության տեսակետից ավելի լավ է տարվա մեջ մի

անգամ մի պարկ խնձոր բերելը...

Սրտի լսողության դաստիարակությունը պահանջում է բարոյական լռություն: Թե չէ կաթսայատանն ի՞նչ լսողություն:

Հայրը առաջին դասարանցի որդու հետ տանը մոտենալիս զգուշացնում է. «Դռան զանգը չտանք, մայրիկը հիվանդ է: Ավելի լավ է բանալիով դուռը բացենք»:

Հոյակա պ դաս է...

Բայց հայրը չի հասցնում խոսքն ավարտել, տղան սեղմում է զանգի կոճակը: Եվ այդ ժամանակ

- Քեզ բա՛ն ասացի: Ձրիակե՛ր:

Այնտեղ, որտեղ բավական է տխրելը, բոլորովին անտեղի է ջղայնությունը:

Մինչդեռ դաստիարակված երեխայի համար պատիժ կարող է լինել մեծահասակի ձայնում զգացվող թույլ զարմանքը, հոնքը թեթև բարձրացնելը՝ «Քեզ ի՞նչ եղավ, ջանի՛կս»: Եթե ծնողները ստիպված են լինում դիտողություն անել, հանդիմանել, դատապարտել երեխային, ուրեմն դաստիարակությունը վտանգավոր ուղղությամբ է գնում: Երեխան պետք է իր սրտի՝ լսողությամբ զգա մեծահասակների վշտանալը: Երբ վշտանալը վեր է ածվում բառերի, հանդիմանության, կշտամբանքի, սրտի լսողությունը կարծես անպետք է դառնում և, հետևաբար, բթանում է: Եթե այսօր միայն հանդիմանում եմ որդուս, վաղը ստիպված կլինեմ երկար կշտամբել: Եվ օրըստօրե նա կսկսի ինձ ավելի ու ավելի վատ լսել: Այդ ժամանակ մանկավարժական փոքր հավաքածուին՝ «Ի՞նչ է, չէ՞ս լսում, իլացե՛լ ես: Ո՞ւմ եմ ասում: Ռուսերեն չես հասկանո՞ւմ», անպայման կհետևի մեծ մանկավարժականը՝ սեղմված բռուցքներ, վզակոթին խփել, գոտի, ընդհուպ մինչև ոստիկանության մանկական սենյակ: Իմ կարծիքով, անհնար է դաստիարակել այն երեխային, որի սրտի լսողությունը բթացվել է: Կարելի է միայն խղճալ այն ուսուցչին, ում այդպիսի աշակերտ է հանդիպում:

Իհարկե, լարից ընկած դաշնամուրին կարելի է բռունցքով հարվածել: Բայց դրանից աշխարհում ոչ մի գործիք ավելի մաքուր չի հնչել:

Հաճելի չէ տեսնել մի տղայի, որ մշտապես դատում ու քննադատում է ընկերներին, մանավանդ մեծահասակներին: Երբ երեխան վատ է արտահայտվում մեր հյուրի մասին, սովորաբար աշխատում ենք նրան ուղղել: Բայց ահա ամեն երեկո ընտանիքը հեռուստացույց է նայում, հաղորդում հաղորդման ետևից, և սկսվո՞ւմ է. այս դերասանը վատն է, մյուսը կրկնվում է, և, ընդհանրապես, հիմարություն է: Չարախոսության այս ամենօրյա ընտանեկան դարոցն ահավոր անսրտության է վարժեցնում: Մեզ համար աննկատ երեխաներին թույլ ենք տալիս անիմաստ ու անխիղճ մեղադրել ու դատել մեծերին: Հետո պահանջելու ենք՝ «Վատ մի՛ խոսիր ուսուցչի մասին: Ուսուցիչը միշտ ճիշտ»: Իսկ ինչո՞ւ վատ բան չասի, երբ մյուս մեծերի մասին կարելի է: Իմիջիպալոց, հորն ու մոր հերթն ավելի շուտ կգա, քան ուսուցչինը...

Հաղորդումը դուր չի գալիս, անջատենք հեռուստացույցը որևէ պատրվակով: Մի՞թե հյուր ենք կանչում, որ հետո նրանց միսը ծամենք:

Երեխաներին սովորեցնենք մարդկանց սիրել, իսկ դատել իրենք իրենց էլ կսովորեն...

Սրտի լսողությունը բարոյական հատկություն չէ, այլ, կրկնում եմ, հոգեբանական ունակություն: Այստեղից հետևում է, որ սրտի զարգացած լսողություն ունեցողը կարող է լինել և՛ պատվարժան, և՛ վատ մարդ: Յուրաքանչյուրս էլ հանդիպել է սրտացավ մարդկանց, որ իրենց թուլությունների պատճառով յուրայիններին շատ տառապանք են պատճառում:

Մյուս կողմից՝ թուլությունը սրտացավության պարտադիր ուղեկիցը չէ, և սրտացավ երեխան միշտ չէ որ հնազանդ տղա է: Կարող է նաև առաջնորդ լինել. ընկերները նրան սիրում են, քանի որ միայն անպատկառին է նեղացնում, իսկ եթե ինչ-որ մեկի վրա է ծիծաղում է, ապա բոլորն են ուրախանում: Մյուս երեխաների նման նա էլ կարող է չափն անցնել, անհամ բաներ անել, բայց անմիջապես կսթափվի, երբ տեսնի, որ չափն անցել է, և իր կատակն ինչ-որ մեկին ցավ է պատճառում: Նա սիրով ուրիշի մեղքը իր վրա է վերցնում, և նրա գլխավոր դերը պաշտապանողի դերն է: Ոչ թե այն պատճառով, որ ինքն ամենուժեղն է, այլ որ մյուսներից սուր է զգում ուրիշի ցավը: Աշխարհում ոչ մեկին ավելի շատ չեն սիրում, քան սրտացավ մարդկանց, և չնայած սրտի նուրբ լսողությամբ տղան հեշտ է զիջում ու հեշտ է տալիս, հենց այդ պատճառով էլ նա ամենաշատն է ստանում:

Սրտի լսողություն ունեցող երեխային պարզևատրելն ամենալավ բանն է, որ կարող են անել ծնողները, և նա երջանիկ կզգա:

Իսկ ինչ վերաբերում է քաղաքավարության կանոններին, մեծերին ընդօրինակելով՝ մարդ շատ հեշտ կտիրապետի դրանց, եթե սրտի լսողությամբ մեծանա:

Սրտի լսողությունն ու քաղաքավարությունը վերջավոր հատկություններ են: Միայն մարդկանց հասկանալու աշխատանքն է անվերջ: Ամբողջ կյանքի ընթացքում ենք սովորում մարդկանց հասկանալ:

Բայց մինչև իր վերջին րոպեն, նույնիսկ անկողնուն գամված վիճակում, սրտի զարգացած լսողություն ունեցող մարդը կանհանգստանա. ախր, նեղություն է պատճառում բժիշկներին և յուրայիններին:

Հավանաբար այդ պատճառով է, որ սրտացավ մարդիկ քիչ են հիվանդանում ու երկար են ապրում: Կյանքը սրտին մոտ ընդունելով՝ նրանք մշտապես սնում են այդ կյանքը:

Հոգատար երեխանե՞ր

Ընտանեկան սովորական իրավիճակ է:

- Կոլյա՛, հացի՛ գնա:
- Հիմա:
- Կոլյա՛, հացի գնա՛:

- Դե, հիմա, էլի՛ :

- Կոլյա, քանի՞ անգամ ասեմ:

Կոլյան փողը, պայուսակը վերցնում ու գնում է խանութ: Նա դա անում է ամեն օր, դա նրա «ընտանեկան պարտականությունն է», ինչը գովերգվում է բոլոր մանկավարժական գրքերում («Երեխաները պետք է մշտական ընտանեկան պարտականություններ ունենան»), բայց ամեն օր լավ մշակված տեսարանը կրկնվում է բացարձակորեն միանման՝ սյուժեն, հնչերանգը, դիմախաղը և նույնիսկ որդու քայլվածքը՝ հատուկ մշակված քայլվածք, որը կարծես արտահայտում է. «Ո՛նց եք ինձ բոլորդ զգվեցրել»: Եթե մայրը մի օր դուրս գա իր դերից և Կոլյային չհիշեցնի «ընտանեկան պարտականությունները», նա իսկի չի էլ մտածի խանութ գնալու մասին: Խանութ գնալու գործը Կոլյայինն է, իսկ Կոլյայի աշխատանքի մասին հոգսը՝ մայրիկինը:

Իսկ դպրոցակա՞ն գործերը: Իրականում սովորողը՝ դպրոց գնացողը, դաս սովորողը, որդին է, բայց ո՞վ է մտածում, թե դաս սովորելու ժամանակն է, թե արդեն դպրոց գնալու ժամանակն է, թե չէ ուշացումն անխուսափելի է: Մայրը: Նա է համառություն ցուցաբերում և որդուն ստիպում դպրոցն ավարտել, հետո աշխատանք գտնելուն ու մասնագիտություն ստանալուն է օգնում. ամեն ինչ նա է անում, և հենց այս հոգսերի հետ է մշակվում ամուր բնավորությունը:

Երբեմն չենք էլ նկատում, որ բնավորություն դաստիարակում է ոչ այնքան աշխատանքը, իրական գործողությունը, որքան դրա մասին հոգալը, դա կատարելու սեփական ձգտումը:

Երբ կարդում ենք, թե դպրոցականներն իրենց ձեռքերով մարզադաշտ են կառուցել կամ վերասարքավորել են ֆիզիկայի կաբինետը, ձեռնպահ մնանք հիանալուց: Հասկանալի է, որ աշխատանքը կոփում է մարդուն, ունակություններ ձևավորում, բայց նրա գլխավոր դաստիարակչական արժեքը դա չէ: Գլխավոր հարցն այն է, թե ո՞ւմ խնդիրն է եղել մարզադաշտ կառուցելը կամ կաբինետ վերասարքավորելը: Ո՞վ է նախագծել, ո՞վ է առավոտներն արթնացել սպասվող աշխատանքի մասին մտածելով: Դպրոցի տնօրե՞նր: Ուսուցի՞ չը: Թե՞ իրենք՝ երեխաները: Ով խնդիր դրեց, նա էլ բնավորություն ցուցաբերեց, նա էլ աշխատանքի ավարտից հետո լրիվ բավարարվածություն ստացավ, իրականում նա և միայն նա էլ դաստիարակվեց: Ցանկացած աշխատանք դաստիարակում է, բայց պետք է հստակել, թե ո՞ւմ:

Ինքներս հիմնականում այնպիսի պայմաններում ենք մեծացել, որ, բնականաբար, հազար ու մի հոգս էր ընկնում մեր գլխին: Մեզանից ոմանք 12-13 տարեկանում արդեն զբաղվում էին տնտեսությամբ, 14 տարեկանում աշխատում էին գործարանում: Եվ շատ լավ գիտենք, թե դժվար պայմաններում ինչպես պետք է երեխաներին դաստիարակել. կարելի է ասել, այդպիսի դաստիարակության բազմադարյան փորձ ունենք:

Բայց ինչպե՞ս երեխաներին դաստիարակենք բարօրության պայմաններում:

Այստեղ քիչ փորձ ունենք և պետք է շատ զգույշ լինենք կարծիք արտահայտելիս և

գործողության դիմելիս: Ամենաքիչը օգտակար կլինեն երեխաների հաշվին մանկավարժական անվտանգությունից ազատվելու փորձերը. «Ամեն ինչ կա... Միայն թռչնի կաթն է պակաս... Ա՛յ, ես առաջին կոստյումս գնել եմ երեսուն տարեկանում...»: Բայց երեխաները բացարձակապես մեղավոր չեն, որ իրենք «ամեն ինչ ունեն», ինչպես և մեղավոր չեն, որ մենք «ոչինչ չենք ունեցել»: Երեխաները նույնիսկ չենք կարող գնահատել այն, ինչը նրանց տրվում է, քանի որ գնահատել կնշանակի համեմատել, իսկ համեմատելու համար նրանք ոչինչ չունեն: Միննույն ժամանակ, եթե երեխաներին ամեն ինչ տալիս ենք, բայց մոռանում ենք տալ այն հնարավորությունը, որն ունեցել ենք և որով հիմա այդպես հպարտանում ենք՝ հոգ տանելու հնարավորությունը, ապա երեխաներն իրավացիորեն կարող են իրենց գրկված համարել, ինչպիսի շքեղությամբ էլ որ շրջապատված լինեն:

Հիշենք Մակարենկոյին: Նա երեխաներին այնպիսի հոգածությամբ էր շրջապատում, որ նրանք կյանքում չէին տեսել, բայց միննույն ժամանակ նրանց կոլեկտիվի, նրա կյանքի և պատվի մասին հոգալու հնարավորություն էր տալիս: Ամենամեծ հոգածությունը երեխաների նկատմամբ և ուրիշների նկատմամբ հոգ տանելու ամենամեծ հնարավորության ընձեռում. թերևս սա է իդեալական դաստիարակությունը: Բայց ինչպե՞ս հասնենք այդ մակարդակին:

Գլխավոր դժվարությունն այն է, որ հոգածությունը ներքին, սեփական մղում է, և այդ պատճառով հնարավոր չէ այն փոխարինել որևէ տեսակի արտաքին հարկադրանքով: Կարելի է երեխային ստիպել, որ դասերը սովորի, բայց ինչպե՞ս ստիպես, որ իր դասերի նկատմամբ հոգածություն ցուցաբերի: Ստիպելը հենց նշանակում է հոգածությունը հանել, և ինչքան շատ ենք ստիպում, այնքան ավելի վատ արդյունքների ենք հասնում, չնայած արտաքուստ կարծես թե ոչինչ, երեխան սովորում է: Կյանքի շատ հանգամանքներում համեմատաբար կանոնավոր գործող դաստիարակության սովորական և հեշտ միջոցները՝ հանդիմանանք, նախատինք, հոգածության դաստիարակման հարցում բոլորովին անպետք են:

Ամենապարզ դիտարկման միջոցով էլ կարելի է տեսնել, որ ցանկացած գործ որոշակի հոգածության կարիք ունի: Միգուցե արժե՞, որ ֆիզիկայի հայտնի պահպանության օրենքներին մեկն էլ կեսկատակ ավելացնենք՝ հոգածության ծավալի պահպանության օրենքը: Հարկ չկա, որ ամբողջ ընտանիքն առավոտվանից մտածի, ասենք, խանութ կամ լվացքատուն գնալու մասին: Այդ անհրաժեշտ գործը պահանջում է հոգածության ոչ մեծ, բայց որոշակի ծավալ: Եթե խանութի մասին հոգ է տանում մայրը, ապա որդին կամ դուստրը այդ մասին հոգ չեն տանի, որքան էլ որ նրանց մեղադրենք անսրտության մեջ: Եթե մայրը որդու դաս սովորելու հոգսն իր վրա է վերցնում, նա մեքենայորեն որդուն ազատում է այդ դրանից. որդին բոլորովին էլ դասագրքերին ձեռք չի տա, մինչև չհնչի մոր խիստ հիշեցումն այդ մասին: «Տնային հանձնարարություններ» աշխատանքի համար, ինչպես և աշխարհում ցանկացած աշխատանքի համար, անհրաժեշտ է հոգածության որոշակի ծավալ, և, երբ ծնողներն այդ ծավալի մի մասը վերցնում են իրենց վրա, ճիշտ այդքանով պակասում է երեխայի մասը: Չափից դուրս հոգատար ծնողները երեխաներից

խլում են ամբողջ հոգսը՝ մինչև վերջին կաթիլը, և «անհոգ» մանկությունը համարյա դժբախտություն է դառնում թեկուզ այն պատճառով, որ ուժասպառ ծնողների համար դժվար է լինում հանդիմանանքը զսպելը: Բոլոր հոգսերի անհագ սեփականումը էգոիզմի մյուս տեսակներից տարբերվում է նրանով, որ մարդուն տոգորում է այն գիտակցությամբ, թե հենց ինքն է այլախոհը:

«Եթե երեխայիս չհիշեցնեմ դասերի մասին, ինքնուրույն ոչ մի դեպքում չի սովորի, - այսպես են սովորաբար ասում: - Երեկ տանը չէի, և խնդրեմ, ամբողջ օրը թռվո՞ւցե՛լ է»:

Բայց թռվո՞ւցե՛լ է հենց այն պատճառով, որ վարժված է ստիպելուն: Այստեղ խառնվել են պատճառը և հետևանքը: Հոգածությունը միանգամից, մի օրում չի առաջանում, այն պետք է աստիճանաբար հասունանա, և անպայման կհասունանա, եթե զինվենք համբերությամբ և հոգածության այդ աննկատ ընթացող և հաճախ հոգնեցուցիչ դանդաղ աճը չընդհատենք, եթե չնմանվենք այն երեխային, որը սերմ է ցանում և ամեն բույս հանում է, որ տեսնի, թե ծիլը չի՞ հայտվել...

Իհարկե, եթե ցանկանում ենք հոգածություն աճեցնել, պետք է պատրաստ լինենք, որ երեխան սկզբում անցնի մեծ դժվարությունների ու անախորժությունների միջով: Միայն մեծերի հսկողությամբ դաս սովորելուն վարժված երեխան, հանկարծ զրկվելով այդ հսկողությունից, անպայման վատ թվանշաններ կստանա: Հավատանք մեր որդուն, դժվարությունները հաղթահարելու նրա կարողությանը, հավատանք դպրոցին, լինենք համբերատար, և ինքնուրույն հոգածությունը անպայման կհայտնվի:

Ցավոք, հաճախ, դպրոցն է երեխային ներշնչում, թե ուսուցումը ոչ թե երեխաների, այլ ծնողների հոգսն է: Ամեն առիթով, մի բան չեղած՝ բողոքում են ծնողներին, գրառում անում օրագրում, ծնողին դպրոց կանչում: Երեխան աստիճանաբար կարծիք է կազմում, որ իր գործերը վերաբերում են ում ասես՝ ուսուցչին, տնօրենին, մայրիկին, հայրիկին, բայց ոչ իրեն:

Արդյո՞ք դա ճիշտ է: Դա՞՞ է արդյոք մանկավարժությունը: Ավելի ճիշտ չէ՞ր լինի խնդիրն այսպես ձևակերպել՝ դու ես սովորում, դու էլ քո գործերն արա ու անախորժություններից զրո՞ւյն հանիր, եթե դրանք առաջանում են, ի՞նքո՞ կարողացիր ազատվել դրանցից: Մենք սովոր ենք, որ երեխաներին պետք է հսկել: Բայց հսկելը չի ենթադրում ազատել հոգածությունից: Խելամիտ հսկողությունը հենց պետք է բարձրացնի պատասխանատվությունը, այլ ոչ թե իջեցնի, պետք է օգնի սովորելուն, ոչ թե խանգարի:

Ինչ վերաբերում է դպրոցական հոգսերին, դրանք ոչ մեկին տալ չի կարելի: Ընտանեկան հարցերի պարագայում ամեն ինչ ուրիշ կերպ է:

Իմ ջոկատում գործերը շատ թե քիչ լավ էին, միայն մի դժվարություն կար՝ տարածքը մաքրելը: Իմ տասնամեկամյա տղաները բոլորովին չէին սիրում այդ գործը: Ամբողջ ջոկատով օրական համարյա մի ժամ, միմյանց վրա զայրանալով, ավլում ու հավաքում էինք թղթերը, բայց դա աշխատանք չէր, այլ տանջանք: Մի անգամ տեսա, թե ինչպես

հարևան՝ ավագ տղաների ջոկատի ղեկավարը՝ Տանյա Գավրիլուշկինան, հանգստի ժամին վերցրեց ավելի և 10 րոպեում մաքրեց իրենց ջոկատի տնակների շրջակայքը: Մենակ: Ինքը: Առանց երեխաների: Սկզբում սարսափեցի. տասնվեց տարեկան էի և մանկավարժության մասին ավելի հստակ պատկերացումներ ունեի, քան հիմա. «Ախր, դա բոլոր կանոններին դեմ է: Ախր դա... Բա աշխատասիրություն դաստիարակե՞լը»: Եվ այսպես, մինչ ես երեխաների հետ վիճելով ու կռվելով, աշխատասիրություն էի դաստիարակում, Տանյան հանգիստ ավելում էր իրենց տնակների շրջակայքը: Բայց շուտով պարզվեց, որ հենց ի՛մ երեխաներին է դժվար աշխատեցնելը, իսկ Տանյայի երեխաներն առաջինն էին և՛ կոլտնտեսության դաշտերում, և՛ այգիներում, նրանք ձգտում էին Տանյային ազատել հոգսերից: Տանյան չէր նրանց համոզում, որ ավլեն, նրանք էին Տանյային խնդրում, որ չզբաղվի մաքրելու աշխատանքով, նրանք տնակը զարմանալի մաքուր էին պահում: Ավելի ուշ հասկացա, որ ինչ-որ վերացական դաստիարակության գաղափարի համար երեխաներին աշխատել ստիպելը կնշանակի խախտել հարաբերությունների բնականությունը և կեղծիք մտցնել, խաթարել այն մանկավարժությունը, հանուն որի այդ գործողությունները կատարվում են: Ինչը կարող էս ինքդ հանգիստ անել, պետք է անես, առանց անհանգստանալու դաստիարակության մասին: Աշխատանքը ստանձնելու այդ ձգտումն աննկատ չի մնա, կփոխանցվի երեխաներին:

Ընդհանրապես, լավ ընտանիքում ոչ մեկը մյուսին չի դաստիարակում. բոլորն ապրում են համերաշխ, յուրաքանչյուրը ձգտում է ավելի շատ աշխատանք կատարել, ահա և ամբողջ մանկավարժությունը: Երեխաներին ուղղված «ծառայությունների բյուրոն» տարիների ընթացքում փոքրացնում է գործունեությունը, և կամաց-կամաց ծավալվում է երեխաների կողմից մեծերին մատուցվող «ծառայությունների ոլորտը»: Այստեղ ոչ մի խնդիր չկա, այստեղ իրենք իրենց զարգանում են հոգատարությունը և այն թանկարժեք նրբանկատությունը, որ բնորոշ են իսկապես դաստիարակված մարդուն. երբեք, ոչ մի պարագայում ուրիշին անհանգստություն չպատճառել, դժվարություններ չստեղծել նրանց կյանքում. սեփական անձի նկատմամբ հոգատարություն չպահանջել և անընդհատ ձգտել թեթևացնել շրջապատողների կյանքը:

Հոգատարությունը չի կարելի պահանջել ո՛չ երեխաներից, ո՛չ ուրիշ մեկից: Պահանջով հոգատարությունը դադարում է բառի իսկական իմաստով հոգատարություն լինելուց: Հոգատարությունը կարելի է միայն ցուցաբերել, և համբերատար, հույսով ու հավատով սպասել, որ երեխաներն էլ կսովորեն դրսևորել: Եթե, չնայած մեր ցուցաբերած հոգատարությանը, երեխաներն անշնորհակալ լինեն, կնշանակի ինչ-որ տեղ սայթաքել ենք: Հնարավոր է՝ ինչ-որ ժամանակ պակասել է մեր շռայլությունը կամ համբերությունը, և ընտանիք ենք ներմուծել չարչիական հաշվարկ. «Ես քո պատճառով գիշերները չեմ քնում, իսկ դու ...»: Մտաբերենք՝ չի՞ եղել այդպիսի օր, այդպիսի պահ:

Եթե սովորենք դաստիարակել այնպիսի երեխաներ, որոնք կարող են հոգ տանել իրենց դպրոցական և մյուս գործերի մասին, հոգածություն ցուցաբերեն փոքրերի և մեծերի նկատմամբ, կարելի է ասել, որ դաստիարակության բոլոր կամ համարյա բոլոր

խնդիրները լուծված կլինեն:

Ինչ վերաբերում է անհոգ մանկությանը և խաղաղ պատանեկությանը, ապա, երբ երեխաները մեծանան, նրանք մանկությունը և պատանեկությունը հենց այդպես էլ կհիշեն՝ երջանիկ:

Առատաձե՞ռն երեխաներ

«Տղաս մի տարեկան, երեք ամսական է: Վաղ հասակից ոչ միայն իր խաղալիքները ուրիշին չի տալիս, այլև ուրիշներին է խլում: Ինչ ասես, որ չեմ փորձել. համոզել եմ, ձեռքից խլել եմ, բայց նա այնպե՛ս է ձայնը գլուխը գցում... Պատկերացնո՞ւմ եք, նույնիսկ իմ ափսե՛ն է խլում ճաշի ժամանակ, չնայած դիմացի ճաշով լի ափսեհին: Խորհո՞ւրդ տվեք, թե ինչպես վարվեմ այդ ազահության հետ»:

Երևում է, որ խմբագրություն դիմած երիտասարդ մայրիկը լրջորեն է վերաբերվում որդու դաստիարակությանը: Բայց նամակում լիքը մանկավարժական սխալներ կան, ինչ միայն հնարավոր է կատարել... Խոսենք դրանց մասին...

Թվում է, ի՛նչ խոսք, ազահությունը զգվելի հատկություն է: Ժլատության համար բակում երեխաները վաղ են սկսում իրար ձեռ առնել: Հավանաբար, բարոյախոսությունը մարդկային այս առաջին օրենքից էլ սկսվում է՝ տո՛ւր, մի՛ խլիր, մյուսների՛ն էլ թող, մտածի՛ր ուրիշի մասին: Եվ առաջին բանը, ինչին վարժեցնում են երեխային, սա է՝ մայրիկի՛ն տուր... Հայրիկի՛ն տուր... Ապերիկի՛ն տուր... Տո՛ւր տղային...

Եվ առաջին անհարմար իրավիճակը՝ չի տալիս: Եվ ծնողական փառասիրության առաջին փորձությունը՝ մայրը զբոսնում է փոքրիկի հետ, իսկ նա բոլորի աչքի առաջ խաղալիք է խլում. ա՛յ քեզ խայտառակություն: Ընդհանրապես, իմ կարծիքով, մանկական շատ թերությունների դեմ սկսում ենք պայքարել ոչ թե այն պատճառով, որ դրանք մեզ իսկապես տխրեցնում են, այլ որ ամաչում ենք մարդկանցից: Եվ դա լավ է: Հաճախ դժբախտությունները սկսվում են նրանից, որ մարդկանց առաջ ամոթը կորչում է:

Թվում է՝ անհանգստանալու հարկ չկա. տղան մի քիչ կմեծանա և ազահություն էլ չի անի: Բայց ո՛վ չգիտի, որ մեկը մեծանում է և պատրաստ է վերջին շապիկն էլ տալու, իսկ մյուսից ձմռանը ձյուն ուզես՝ չի տա: Որոշ մարդիկ էլ ամբողջ կյանքում տառապում են իրենց ազահության պատճառով. չնայած որ շտապում են տալ՝ ինչ իրենցից ուզում են, բայց և տառապում են. ազահությունը կրծում է հոգիները:

Իհարկե, կարող ենք երեխային հետ վարժեցնել ուրիշի խաղալիքը խլելու վատ սովորությունից, բայց արդյոք դրանով թերությունն ավելի խորը չե՞նք տանի: Արդյոք

չե՞նք մեծացնի ազահ մարդու, որն իր ազահությունը կարողանում է թաքցնել: Գուցե և այդ թերությունը միայն ժամանակավորապե՞ս է քողարկվում, իսկ քսան, երեսուն տարեկանում, երբ մարդը շրջապատից ավելի քիչ կախված լինի, հանկարծ կբացահայտվի: Մենք էլ կգարմանանք, թե որտեղի՞ց:

Բոլորս ցանկանում ենք, որ մեր երեխաների մեջ բարի զգացմունքները զարգանան և ոչ թե վատերը թաքցնելու կարողությունը: Ահա, առաջին սխալը սա է՝ մայրը խորհուրդ է հարցնում, թե ինչպե՞ս պայքարի ազահության դեմ: Այնինչ պետք է այլ հարցադրում անել՝ ինչպե՞ս առատաձեռնությո՞ւն դաստիարակի: Այս երկու հարցադրումների հիմքում սկզբունքորեն երկու տարբեր մոտեցումներ են դաստիարակության նկատմամբ:

«...Երեխայի սիրտը տանող ճանապարհին անցնում է ոչ թե հարթ արահետով, որը մանկավարժի հոգատար ձեռքն անընդհատ մաքրում է մոլախոտ-թերություններից, այլ մշուշապատ դաշտով, որտեղ զարգանում են բարոյական արժանիքների ծիլերը... Թերություններն իրենք իրենց են դուրս մղվում, երեխայի համար աննկատ անցնում, և դրանց ոչնչացումը ոչ մի ցավազին երևույթով չի զուգակցվում, եթե դրանց դուրս է մղում արժանիքների բուռն աճը»:

Շատերը, որպես կանոն, Վ. Սուխոմլինսկու այս հիանալի խոսքին, նրա մտքին, որ թերություններն «իրենք իրենց» արմատախիլ կլինեն, հավատալուց հրաժարվում են: Մենք յուրացրել ենք պահանջելու, պատժելու, համոզելու, խրախուսելու մանկավարժությունը՝ թերությունների դեմ պայքարի մանկավարժությունը. հաճախ այնպիսի ոգևորությամբ ենք պայքարում երեխայի թերությունների դեմ, որ նրա արժանիքները չենք էլ նկատում: Իսկ գուցե պետք չէ՞ պայքարել: Գուցե այնուամենայնիվ պետք է ա՞յլ կերպ վարվենք՝ երեխայի մեջ նկատենք ու զարգացնենք ամենալա՞վր: Թե չէ ստացվում է, որ սկզբում մեր անփութության, անկարողության կամ անբարյացակամության պատճառով չար ծիլեր ենք աճեցնում, իսկ հետո ազնիվ մղումներով այդ չարի դեմ պայքարի մեջ ենք մտնում: Սկզբում դաստիարակությունը տանում ենք կեղծ ճանապարհով, իսկ հետո նետվում ենք պայքարել:

Տեսեք, երբ երեխան չի ուզում խաղալիքը տալ, մայրը խլում է: Ուժով է խլում: Եթե ուժեղ մայրիկը խաղալիքն ինձանից՝ թույլիցս, խլում է, ապա ինչո՞ւ ես չեմ կարող, մայրիկին ընդօրինակելով, ինձանից թույլից խլել: Չի կարող երկու տարեկան երեխան հասկանալ, որ մայրիկը «չարին է հակառակվում», հետևաբար իրավացի է, իսկ ինքը՝ երեխան, չարություն է անում, դրա համար էլ ճիշտ չէ: Նման բարոյական նրբություններից, ցավոք, մեծերն էլ միշտ չեն գլուխ հանում: Երեխան մի՞ դաս է ստանում, որ ուժեղը խլում է: Ուժեղին թույլատրվում է խլել:

Ուզում էին բարություն սովորեցնել, բայց ագրեսիվություն սովորեցրին: Չեմ ցանկանում ծայրահեղության հասցնել. մայրը խլեց՝ ոչինչ, ոչ մի սարսափելի բան էլ հավանաբար չեղավ: Դե՛, խլեց՝ խլեց, չեմ ցանկանում վախեցնել: Միայն նշեմ, որ այդ գործողությունն արդյունավետ չէր:

Բայց հիշենք՝ նամակի հեղինակ մայրը փորձել էր նաև ուրիշ ճանապարհ՝ համոզելը: Սովորաբար համոզելը հակադրում են պատժին: Իրականում դա նույնքան քիչ է օգնում, ինչքան պատիժը: Ի՞նչ միտք ունի համոզել երեխային, որը տարիքի կամ բարոյական զարգացման պակասի պատճառով ուղղակի չի հասկանում համոզելը:

Շատ լավ, ուժով՝ չէ, համոզելով՝ չէ, ապա ինչպե՞ս: Հնարավոր գործողությունների ցանկը մայրիկին սպառված է թվում... Սակայն դեռ առնվազն մեկ միջոց էլ կա ցանկալիին հասնելու համար: Մանկավարժական գիտությունն սկսել է ներշնչման օգուտների մասին ավելի բարձր խոսել: Իմիջայլոց, ինքներս, առանց ուշադրություն դարձնելու, ամեն քայլափոխի օգտվում ենք այդ մեթոդից: Ամեն քայլափոխի երեխայի ներշնչում ենք՝ փնթի ես, ծույլ ես, չար ես, ժլատ ես... Եվ ինչքան երեխան փոքր է, այնքան հեշտ է տրվում ներշնչանքին:

Բայց ամբողջ հարցն այն է, թե երեխային ի՞նչ ներշնչենք: Միայն մի, միշտ մի բան. ներշնչենք, որ նա բարի է, քաջ, առատաձեռն, արժանավոր: Ներշնչենք, քանի դեռ ուշ չէ, քանի դեռ ինչ-որ հիմք ունենք այդպիսի հավաստիացումների համար:

Ինչպես բոլոր մարդիկ՝ երեխան գործում է իր մասին ունեցած պատկերացումներին համապատասխան: Եթե նրան ներշնչենք, որ ժլատ է, ապա հետո ոչ մի ուժով չենք կարող այդ արատից ետ կանգնեցնել: Եթե ներշնչենք, որ առատաձեռն է, առատաձեռն կդառնա: Միայն պետք է հիշենք, որ ներշնչանքը համոզել չէ, ուղղակի խոսք չէ: Ներշնչել՝ նշանակում է բոլոր հնարավոր միջոցներով օգնել երեխային՝ իր մասին լավագույն պատկերացումը կազմի: Դաստիարակության լավագույն ռազմավարությունը թերևս սա է. սկզբում՝ հենց առաջին օրերից՝ ներշնչանք, հետո՝ աստիճանաբար, համոզվածություն (և միշտ՝ գործնականորեն):

Փորձել ենք երեխային ստիպել խաղալիքները ուրիշին էլ տալ, փորձել ենք նրանից խլել այդ խաղալիքները, փորձել ենք ամոթանք տալ, փորձել ենք համոզել՝ չի օգնել: Փորձենք այլ կերպ, ավելի ուրախ.

- Իմ ափսե՛ն էլ ես ուզո՞ւմ: Խնդրեմ, չեմ ափսոսում: Էլի լցնե՞մ: Մի՞ ափսե, երկո՞ւ: Ի՞նչ լավ տղա ունենք, հավանաբար հսկա է լինելու, եթե այսքան ճաշ է ուտում: Չէ՛, նա ազահ չէ, ուղղակի ճաշ շատ է սիրում:

Խաղալիքներն ուրշին չի տալի՞ս:

- Չէ, ամեննին էլ ժլատ չէ, ուղղակի ուշադիր է իր խաղալիքների նկատմամբ, չի կոտրում, չի կորցնում: Հասկանո՞ւմ եք, ինչայդ է: Եվ հետո, նա այսօր չի ցանկանում խաղալիքը տալ, իսկ երեկ տվել է և վաղն էլ կտա, ինքը կխաղա, հետո կտա. ժլատ չէ: Մեր տանը ժլատներ չկան. և՛ մայրիկը ժլատ չէ, և՛ հայրիկը ժլատ չէ, իսկ մեր տղան մեզանից ամենաառաձեռնն է:

Իսկ հիմա պետք է երեխային հնարավորություն տալ իր առատաձեռնությունը

դրսևորելու: Ժլատության, ազահության հարյուր դեպքը պետք է թողնենք աննկատ, չքննադատենք, իսկ առաձեռության մի դեպքը դարձնենք երևույթ: Օրինակ՝ նրա ծննդյան օրը կարող ենք կոնֆետներ տալ. «Մանկապարտեզում բաժանի՛ր երեխաներին, չէ՞ որ այսօր քո տոնն է...»: Եթե երեխան բլիթը ձեռքին վագում է բակ՝ խաղալու, մի քանի հատ էլ տվե՛ք ընկերների համար. բակում երեխաները սիրում են ուտել, կարծես նրանց դարերով չեն կերակրել:

Ես տուն գիտեմ, որտեղ երբեք երեխային մի հատ կոնֆետ, մի հատ խնձոր, մի հատ ընկույզ չեն տվել, այլ միշտ երկուական: Նույնիսկ հացի կտոր տալիս կիսում էին, որպեսզի երկու կտոր լինի, և երեխան այն զգացողությունը չունենա, թե «վերջին կտորն» է, այլ միշտ նրան թվա, որ ինքը շատ ունի և այդ պատճառով կարող է ուրիշին էլ տալ: Եվ որպեսզի չառաջանա այն զգացողությունը, թե չարժե տալ, ավստու է: Իսկ հյուրասիրել չէին ստիպում և չէին հրահրում. միայն հնարավորություն էին ստեղծում:

Երբ կասկածում ենք, թե երեխան ազահ է, մտածենք, թե ինչն է պատճառը: Միգուցե երեխային չափից շատ ենք տալիս, իսկ գուցե չափից քիչ: Հնարավոր է՝ ինքներս ենք ժլատություն անում նրա նկատմամբ, իհարկե, դաստիարակչական նպատակներով:

Եվ, վերջապես, ամենապարզ պատճառը, ինչից և պետք էր սկսել: Հավանաբար մայրը՝ նամակի հեղինակը, չգիտի, որ որդին մտել է զարգացման կրտիկական փուլը՝ այսպես կոչված՝ «սարսափելի երկու տարին»՝ համառության, բացասման, ինքնակամության շրջանը: Հնարավոր է, որ տղան խաղալիքը չի տալիս ոչ թե ժլատության պատճառով, այլ ընդամենը համառության, որը շուտով կանցնի: Ցանկացած նորմալ երեխա այդ տարիքում ամեն ինչ վերցնում է, կոտրում, չի լսում, չի ընդունում ոչ մի «չի կարելի»: Սարսափելի է: Ի՞նչ կդառնա, երբ մեծանա:

Ախր, նա միշտ այդպիսին չի լինելու: Մարդը չի կարող հավասարաչափ ու սահուն աճել, ինչպես շաղգամը:

Այդ տարիքի մի աղջնակի էի ճանաչում՝ մի տարեկան ութ ամսական: «Գնդակը մայրիկի՛ն տուր». թաքցնում էր: «Մայրիկին կոնֆե՛տ տուր». աչքերը փախցնում էր և կոնֆետն արագ գցում բերանը, քիչ էր մնում՝ խեղդվի: Անցել է կես տարի, և հիմա, երբ մի կտոր խնձոր են տալիս, մեկնում է մորը՝ կծի՛ր: Եվ հայրիկին է առաջարկում: Եվ կատվի բերանն է խոթում: Նրան չես կարող բացատրել, որ խնձորը կատվին պետք չէ, և ստիպված ես դիմանալ այդ հիզիենիկ մղձավանջին. խոթում է կատվի բերանը, հետո՝ իր:

Իսկ, եթե երեխան չփոխվի՞: Այդ դեպքում ստիպված կլինենք առաջվա նման նրան ներշնչել, որ նա առատաձեռն է, ներշնչենք մի տարի, հինգ տարի, տասը տարի, տասնհինգ տարի, առանց հոգնելու, քանի դեռ այդ արատը չի փոխվել ինչ-որ օգտակար բանի, օրինակ՝ հոգատարության: Կամ նույնիսկ գիտելիքի, կյանքի նկատմամբ

ագահության:

Այդպիսի ագահությունը բոլորս ենք ողջունում:

Սովորում եմ անգլիական դպրոցում

Սովորում եմ անգլիական դպրոցում, այնքան սարսափելի, որ եթե հավատանք տեղական մամուլին, նույնիսկ արքայական ընտանիքն է երեխաների ուսուցման հետ կապված խնդիրներ ունենում, և, օրինակ, ինչպես վերջերս է հայտնի դարձել, արքայազն Էդուարդը՝ այժմ արդեն չափահաս մարդ, երեխա ժամանակ ատել է դպրոցը:

Բայց ես ոչ թե արքայազնների հետ եմ սովորում, այլ Ուրչեսթերյան տարրական դպրոցում՝ հինգ հարյուր սպիտակ ու սև փոքրիկների հետ: Դպրոցը մոդեռնիստական անկյունավոր ամրոցի տեսք ունի, առջևում զինահրապարակ հիշեցնող, վառ դեղին գծով եզրագծված ընդարձակ ասֆալտապատ տարածություն է: Դասամիջոցներին (իսկ մեծ դասամիջոցը մի ժամից ավելի է) երեխաները խաղում են հրապարակում, սակայն ոչ մեկը գիծը չի անցնում. արգելված է: Պարիսպ չկա, հսկիչ չկա, ոչինչ չկա, այլ ուղղակի արգելված է, և երեխաները վազվզում են եզրագծված տարածության մեջ՝ ոտքը գծին չկպցնելով անգամ: Անգլիացի երեխաներ են: Բերանս բաց երկար կանգնել էի՝ դիտարկելով այդ մանկավարժական հրաշքը. դա ինձ վրա նույնքան ուժեղ տպավորություն էր գործել, որքան բրիտանական թանգարանում տեսած Պարթենոնի բեկորները:

Ամեն դասի անցում եմ հաջորդ դասարան: Սկզբում իմ դասընկերները երեք տարեկան երեխաներ էին. ցածրիկ սեղանների շուրջ խմբված՝ մենք նրանց հետ նկարում էինք, հետո նրանք վերցրին տանից բերած ուտելիքով պլաստասե թասիկները, շարվեցին ու գնացին նախաճաշելու, իսկ ինձ տարան առաջին «Ս» դասարան: Երկար ժամանակ չէի կարողանում կենտրոնանալ. փորձում էի գուշակել, թե ինչու «Ս», գուցե այդ տառի հետևում թաքնված է ինչ-որ ընտրություն, գուցե ամենախելոքների կամ հակառակը, ամենադժբերների մեջ էի: Պարզվեց՝ «Ս» տառն է, որովհետև ուսուցչուհուն անվանում էին միսս Մարիա Սվիթմեն: Հետո սովորեցի միսս Լին Էվանսի երկրորդ «Է»-ում և վեցերորդ «Թ»-ում՝ միսսր Քլայվ Թեյլորի դասարանում: Վեցերորդ դասարանից հետո, անկախ իրենց հաջողություններից, երեխաները տեղափոխվում են միջին դպրոց: Դա հսկայական փոփոխություն է անգլիական կրթության մեջ:

Դեռ ոչ այնքան վաղուց Անգլիայում կար «11 պլյուս» համակարգը, որով անցկացնում էին 11 տարեկան երեխաների գլոբալ թեստավորում և նրանց բաժանում էին տարբեր որակի դպրոցների. բարձրագույն կրթության դուռը մեկի համար բացվում էր, մյուսի համար՝ փակվում: Թեև կարծես ըստ ընդունակությունների էին բաժանում, սակայն փաստորեն ստացվում էր, որ աղքատ երեխաների արդյունքներն էին ավելի վատ լինում: Իվերջոն արդարությունը հաղթեց, և «11 պլյուս» համակարգը հանեցին, սակայն նորից լրագրերի վերնագրերում հայտնվում էր «տեսակավորում» բառը: Երեխաների՝ տեսակավորում: Երևում է՝ «11 պլյուս» ետնամուտքով է վերադառնում, ինչպես գրում է «Դեյլի

թելեգրաֆը» (խորագիր էր ամբողջ էջով մեկ):

Ինչպե՞ս: Սա հետաքրքիր պատմություն է, որ նաև մեզ է վերաբերում: Բանն այն է, որ աստիճանաբար նոր կարգ է ներմուծվում, ըստ որի դպրոցները փող են ստանում ոչ թե տեղական ադմինիստրացիայից, այլ ուղղակի կառավարությունից. նա դպրոցին վճարում է ամեն մի երեխայի համար, որին ծնողներն իրենց ընտրությամբ բերում են այդտեղ: Թվում է, թե չի կարող ավելի լավ լինել:

Բայց ինչպես հաճախ է լինում մանկավարժական լայնամասշտաբ նորարարությունների հետ, ի հայտ է գալիս հարցի անսպասելի կողմը. դպրոցները չեն ընդունում թույլ աշակերտներին, սկսվում է երեխաների նկատմամբ խտրականությունը: Ինչքան քիչ են թույլերը, այնքան լավ է արդյունքը, այնքան շատ են երեխա բերում, այնքան դպրոցը հարուստ է... Բա մյուսներն ո՞ւր գնան: Անցյալը վերադառնում է, և ավելի վատ տարբերակով: Տարօրինակ շրջադարձ է. ինչը մեզանում համարվում է ժողովրդավարական, առաջադեմ, լիբերալ, ուրիշ երկրում որպես պահպանողականություն է դիտվում:

Դպրոցական գործը բոլորովին հեշտ չէ, և թվում է՝ չկա մի համակարգ, թեկուզ ազնվագույն մտահղացման արդյունք, որը չխելի մե՛րթ այս երեխաների ճակատագրերը, մե՛րթ այն: Սկսում ես մտածել, թե արդյո՞ք կրթության մեջ պետք են ընդհանուր համակարգերը:

Անգլիական դպրոցը շտապողական չէ: Դասի ժամանակ անգլիացի երեխաները մի հինգ անգամ, եթե ոչ տասը, պակաս նյութ են ստանում, քան մերոնք: Բայց այդ նյութը ուրիշ տեսակի և ուրիշ որակի է: Երեխաները շարքով դրված նստարաններին չեն նստում, նրանց նոր դաս չեն բացատրում, տնային աշխատանք համարյա չեն տալիս, դաս չեն հարցնում, իսկ գնահատականի փոխարեն ուսուցիչն ուրախ կամ հեզնական տարբեր բառեր է գրում: Նրանք չեն սերտում և չեն պատասխանում քերականական կանոնները, նրանց գրատախտակի մոտ չեն կանչում, տեղից էլ չեն կանչում: Եթե ուսուցչուհին ցանկանում է ինչ-որ բան հարցնել, մոտենում է և ցածրաձայն հարցնում, աշակերտն էլ տեղից նույնքան կամաց պատասխանում է, ոչ թե զեկուցում շարքից դուրս կանչված զինվորի նման:

Երեխաները կամացուկ մտան դասասենյակ ու խիտ խմբով այնպես տեղավորվեցին անկյունում՝ գորգի վրա, որ ստացվեց մեծ ծաղկեփնջի նման մի բան: Միսս Սվիֆենը՝ կանաչ բլուզով, սպորտային տաբատով ու սպորտային կոշիկներով (սա ի՞նչ է որ, հադիպել եմ ձախ ականջին երեք օր կպցրած ուսուցչի. Անգլիայում ուսուցիչը պարտավոր չէ համեստության տիպար լինել), առաջին տարին աշխատող երիտասարդ ուսուցչուհի, ներկա-բացակա է անում, երեխաները պատասխանում էին ֆիլմերից ծանոթ արտահայտություններով՝ «Այո, միսս» կամ ուղղակի Միսս»: Հետո ուսուցչուհին հարցեց՝ ինչքան կանի երկու անգամ երեքը, փոքրիկ մի աղջիկ խիզախորեն հայտարարեց, թե տասնչորս: Միսսը մտածկոտ ուղղեց նրան և, հավանաբար որոշելով,

որ հյուրի ներկայությամբ հարցնելն անքաղաքավարություն է, դադարեցրեց բանավոր հաշիվը: Սկսվեց այն գործունեությունը, որն այսօր տիրապետող է անգլիական դպրոցում՝ ինքնուրույն անհատական կամ փոքր խմբերով աշխատանքը:

Սովորում եմ անգլիական դպրոցում. սա նշանակում է, որ ամբողջ օրը՝ առաջին պահից մինչև վերջինը, ինչ-որ բան անում եմ: Կարելի է ասել՝ աշխատում եմ, սակայն դա շատ վերամբարձ բառ է այն պարզ պարապմունքների համար, որոնցով զբաղվում եմ հինգ-վեց դաս:

Անգլիացիները դաստիարակվում են հանգիստ աշխատանքով: Ուսուցչուհին, առանց հուզվելու և բարկանալու, իր գործն է անում, իսկ երեխաները հանգիստ անում են իրենց դպրոցական գործերը, որ հանձնարարել է ուսուցչուհին: Եվ քանի որ սաստելու և կարգի հրավիրելու հարկ չի լինում (հանձնարարությունը տրվեց՝ անշտապ սկսում են աշխատել), ուստի ո՛չ դասը, ո՛չ էլ դպրոցական կյանքը բոլորովին նման չեն մեր դպրոցին՝ իր մշտական լարմամբ, որը զարմանալիորեն միանում է նույնքան մշտական անգործությամբ:

Սովորում եմ անգլիական դպրոցում, և տարբերությունը նրա և մեր դպրոցի միջև, այն է, որ անգլիականում երեխաները զբաղված են, մերում՝ անգործ, ժամերով նստում են՝ գլխում ոչ մի միտք ու ձեռքին ոչ մի գործ չունենալով, ինչպես ասում էր ռուս մեծ մանկավարժներից մեկը:

Ահա թե մեզանում դա որտեղ է սկսվում (եթե տնտեսությունը դնենք մի կողմ). դպրոցում: Օր օրի, տարեցտարի, տասը տարի շարունակ երեխաների, դեռահասների և պատանիների հսկայական բանակը նստում և քնկոտ լսում է սկզբում՝ դաս պատասխանողներին, հետո՝ ուսուցչի բացատրությունը, հետո՝ ուսուցչի խրատներն ուղղված նրանց, որ դաս չէին լսում: Եթե կողմնակի դիտորդն իրեն հարց տար՝ ինչի համար, ինչպիսի կյանքի են նախապատրաստում այս երեխաներին, ամենայն հավանականությամբ այս պատասխանը կգտներ՝ երևի մանկությունից սովորեցնում են այս երկրի գլխավոր գիտելիքը՝ ժողովներին լուռ ու համբերատար նստելը:

Անգլիական դպրոցում, նորից ու նորից եմ ասում, սա չկա: Ներկա-բացական վերջացնելուց հետո ուսուցչուհին երեխաներին հանձնարարեց վերցնել կապույտ տետրերը, որ դարակում էին, և անցնել աշխատանքի: Յոթ տարեկան երեխաները հանգիստ վերցրին իրենց տետրերն ու սկսեցին լուծել իրենց օրինակները՝ ով՝ մտքում, ով՝ մատների օգնությամբ, ով՝ մեծ տուփից հանած գունավոր խորանարդիկների: Դասարանում ո՛չ լռություն էր, ո՛չ աղմուկ, բոլորը զբաղված էին, ուսուցչուհին մե՛կ մեկին էր մոտենում, մե՛կ մյուսին, երեխաները ջանասիրաբար հաշվում էին, լարվածությունից հոգոց հանում, լեզուները հանում, թեքվում էին տետրերի վրա, գրում սարսափելի խզբզոցով, ու ոչ ոք չէր ուղղում: Ոչինչ, տասներկու տարում կսովորեն սիրուն գրելը: Ոչ ոք չէր ձգտում միօրինակ տետրերի, ոչ ոք չէր թելադրում, թե քանի վանդակ բաց թողնեն, ամբողջ դասին ոչ մի երեխայի նկատողություն չարեցին: Սակայն

երբ դասի վերջում բոլորը հոգնեցին ու սկսեցին աղմկել, ուսուցչուհին անսպասելի բարձր ձայնով հանկարծ սաստեց նրանց, և նրանք լռեցին: Ես հետո նկատեցի, որ անգլիացի յուրաքանչյուր ուսուցիչ պահեստում նաև որոտացող ձայն ունի: Նրանք չեն գոռում երեխաների վրա, այլ արագ կարգի են բերում դասարանը հատուկ մանկավարժորեն մշակված ձայնով. ոչ մի զգացում, ոչ մի բարկություն, ուղղակի բարձր, խիստ և ուրիշ ձայնով: Միանգամից կարգուկանոն է տիրում:

Եվ այսպես ամբողջ օրը՝ կա՛մ հաշվում էին, կա՛մ կարճ հեքիաթի թեմայով նկարում էին, և ուսուցչուհին համբերատար փորձում էր հասկանալ յուրաքանչյուրի նկարը, կա՛մ սողում էին հատակին ինչ-որ մեքենայով, որը ենթարկվում էր միայն կոճակները որոշակի կարգով սեղմելուն, կա՛մ լամպ էին կպցնում մարտկոցին և ուրախանում հազիվ նկատելի լույսով: Ամբողջ օրն անցավ աշխատելով:

Սովորում եմ ավագ երեխաների համար նախատեսված անգլիական դպրոցում՝ իններորդ դասարանում: Մինչև ավարտելը երեխաները երկու, երբեմն երեք դպրոց են փոխում, տարրական դասարանները ավագի հետ չեն. այդպես էժան է, քանի որ ավագներին բավականին շատ հատուկ դասասենյակներ ու կաբինետներ են պետք: Այս դպրոցում լաբորատորիաների, արհեստանոցների, ստուդիաների, փորձասենյակների, մարզադահլիճների այնպիսի քանակություն կար, որ կես օրում չես հասցնի անգամ ուղղակի նայել: Իսկ դպրոցը սովորական պետական դպրոց է, և երեխաներն են սովորական: Շատ են սև երեխաները, և նրանք, իհարկե, վարքով տարբերվում են. իմ դասարանում մի քանի անգուսպ տղա կար: Մեկը, տետրն ստանալով ուսուցչուհուց, չարացած ինչ-որ բան մոթմոթաց ու տետրը շարտեց գետնին, բայց ուսուցչուհին անգամ հայացքով դիտողություն չարեց, կարծես չէր էլ նկատել: Տղան խոսեց, խոսեց, կռացավ, տետրը վերցրեց ու անցավ աշխատանքի: Կոնֆլիկտ չստացվեց: Ամերիկայում նույնպես սևամորթերն ու սպիտակները միասին են, բայց այնտեղ, հատկապես ավագ դասարաններում, ինչ-որ օտարացում կա: Իսկ այստեղ, մարդու հավատն էլ չի գալիս, ինչ աստիճանի հանգիստ է դասարանում: Երաժշտության դասին բաժանվեցին խմբերի և ձևավորեցին երաժշտական գործակալություններ, հումանիտար գիտությունների դասին բաժանվեցին խմբերի, թե ով որ կրոնն է ներկայացնելու, կենսաբանության դասին նույնպես բաժանվեցին փոքր խմբերի. ուսումնասիրում էին մատնահետքերը: Ինչպես ասաց դասարաններից մեկի ուսուցչուհին, լինում են լեզվական խնդիրներ, սակայն դպրոցում ռասայական խնդիր չկա:

Ուրեմն ռասայական խնդիրները հավերժական չե՞ն: Նշանակում է՝ այդ հարցը լուծելի՞ է:

Սովորում եմ անգլիական դպրոցում: Ամբողջ օրն աշխատում եմ փոքր խմբերի կազմում: Քսանական թվականներին խմբային («բրիգադային») մեթոդը տարածված էր նաև մեզանում, սակայն դա մերժեցին այն, թվում է՝ խելամիտ, հիմնավորմամբ, որ խմբում մեկն իսկապես սովորում է, իսկ մյուսը ավելի անարժեք բան է անում, ասենք՝ ցուցապաստառ է ձևավորում: Կարծես մեկը լաբորատորիայի վարիչ է, մեկը՝ լաբորանտ: Իսկ գիտելիքը բոլորին է պետք... Բայց այստեղ՝ անգլիական դպրոցում, ոչ էլ կարծում են,

թե բոլորը պիտի միատեսակ սովորեն: Բոլորը պիտի դասին միատեսակ աշխատեն, բոլորը պիտի թեմայով միատեսակ հետաքրքրվեն, բոլորը պիտի թեմային ծանոթանան. և դա բավական է: «Մենք սովորեցնում ենք մասին աշխատել, պատասխանատվություն կրել», - ինձ բացատրում էին ուսուցիչները: Կոնկրետ երեխայի գիտելիքների, ուսման արդյունքների պատասխանատվությունը ոչ թե ուսուցչի, այլ երեխայի և նրա ծնողների վրա է: Դա հիմնովին փոխում է ուսուցչի բնավորությունը: Ավագ դասարաններում նույնպես, ինչպես կրտսերում, աշակերտները հիմնականում աշխատում են դասարանում, առաջադրանքների գրառման փոքր գրքույկ-օրագրերում հիմնականում երկու բառ է՝ “non set” ոչինչ հանձնարարված չէ: Չնայած առարկաներն այնքան էլ հեշտ չեն՝ տեխնոլոգիա, անգլերեն, ֆրանսերեն, մաթեմատիկա, հումանիտար առարկաներ, բնական գիտություններ, դրամա: Հիմնավորումների հետևից մինչև ժամանակը չգա՝ մինչև հատուկ դասարանները, չեն ընկնում. այստեղ սովորեցնում են ոչ թե գիտությունների հիմքերը, ինչպես մեզ մոտ, այլ աշխարհի պատկերը: «Աշխատում են և ճանաչում են աշխարհը», - ասաց անգլերենի ուսուցչուհի Ջերրի Հիլբերտը: Տարին երկու անգամ ուսուցիչները ծնողներին հաշվետու են լինում «առաջընթացի և ձեռքբերումների» մասին (այդպես է կոչվում հաշվետվությունը): Մեկի մասին կարճ են գրում, մյուսի մասին՝ երկար: Հաշվետվությունը ներկայացնում են ոչ թե տարեվերջին, այլ երբ հարմար է, որպեսզի շտապողականության չտրվեն: Երեխաներն էլ են հաշվետվություն գրում իրենց ձեռքբերումների մասին: Տասնմեկամյա պարտադիր կրթությունից հետո (դրանից հետո մեկ կամ երկու տարի սովորում են՝ նախապատրաստվելու համալսարանին) կարող են և քննություն չհանձնել, դա պարտադիր չէ, սակայն եթե ուզում են վկայագիր (մեր ավարտական վկայականի նման մի բան) ստանալ, մոտ տասը դժվար քննություն են հանձնում: Մարդու կյանքը մեծապես կախված է նրանից՝ ունի՞ վկայագիր, թե՞ չէ, և այդ հանգամանքն էլ երեխաներին ստիպում է սովորել:

Մեր դպրոցի և անգլիականի տարբերությունն այն է, որ մերը պահանջում է (հաճախ անօգուտ, և դեռ բարոյական դրամաներով), իսկ անգլիականը հնարավորություն է ստեղծում: Չնայած արտաքուստ ամեն ինչ նույնն է: Նույն ձևով երեխաները դասամիջոցներին դասարանից դասարան են գնում, նույն ձևով փլվում-նստում են, ավագները նույն ձևով աղմկում են ճաշի ժամին, և դպրոցի տնօրենը՝ միսթր Սալբերին՝ վերնաշապիկով, առանց բաճկոնի, եռանդուն, գործնական մի մարդ, նկատելով, որ հեռու անկյունում մեկը չափից ավելի է երես առել, ցուցամատով սաստում է կարգազանցին և որոտաձայն կանչում.

- Իսթյուզ մի: Ներեցեք:

Եվ վերջ, կարգուկանոնը վերականգնված է:

Սովորում եմ ամերիկյան դպրոցում

Սովորում եմ ամերիկյան դպրոցում և միանգամից պետք է ասեմ, որ եթե ամերիկյան սուպերմարկետներում կարելի է անսովորությունից ուշաթափվել, եթե ամերիկյան

բուժհիմնարկներում մեր հիվանդանոցների մասին ավելի լավ է չհիշես, եթե ամերիկյան համալսարանում միայն հոգոց կհանես ու ձեռքդ թափ կտաս, ապա դպրոցի դեպքում ավելի բարդ է:

Դպրոցը, կարելի է ասել, ամերիկյան կյանքի ամենաթույլ օղակն է: Իսկ գուցե ամենաուժեղն է: Ժողկրթության համակարգը քայքայող հակասությունների մեջ ամերիկյան մանկավարժները խորհրդայինի ճիշտ հակառակ ընտրությունն են կատարել. մարդ իսկապես գլուխը կորցնում է՝ չիմանալով, թե որ կողմն է ավելի առողջ դատում:

Անկախ նրանից, թե մեզ մոտ ինչ են կարծում, ամերիկյան դպրոցները հրաշք-տեխնիկայով լցված չեն, և ուսուցման տեխնիկական միջոցների ետևից այնպես ընկած չեն, ինչպես մեզ մոտ:

Հեռուստացույց, ձայնարկիչ, տեսամագնիտոֆոն, համակարգիչ. սրանք հազվադեպ են սովորական դասարաններում: Ոչ մի անգամ չհանդիպեցի լինգվաֆոնային կաբինետի կամ սովորեցնող ինչ-որ մեքենայի: Հավանաբար միայն ԽՍՀՄ-ից գնացած բարձրաստիճան հյուրերին են դիտավորյալ ցուցադրում դրանք, որպեսզի քայքայեն մեր դպրոցական բյուջեն, քանի որ այդ հյուրերը հայրենիք են վերադառնում տեխնիկայի մասին սնանկացնող երեզանքներով:

Իսկ ամերիկյան կրթությունը տեխնիկայով չէ, որ հետաքրքիր է:

Ահա Քլիվլենդի դպրոցներից մեկի տնօրենի՝ Բոբի Մաքդաուելի հետ շրջում ենք իր դպրոցի դասարաններով՝ մի դասարան, մյուսը, իսկ այստեղ, ասում են, մտուր է: Մտուր: Մտուր: Կարելի է մտնել: Երկու մեծ, մթնեցրած սենյակներում մոտ քառասուն մահճակալ կա, և յուրաքանչյուրին՝ մի փոքրիկ՝ սև կամ սպիտակ: Բոլորը քնած են, հանգստի ժամ է: Մի քանիսի մոտ մայրերն են՝ այդ դպրոցի աշակերտուհիները: Եթե աշակերտուհին երեխա է ունենում, դպրոց է գալիս փոքրիկի հետ, նրան թողնում մտուրում, իսկ ինքը գնում է դասի: Ոչ մի արտակարգ բան:

- Երբ իմանում եք, որ 14-ամյա աշակերտուհին հղի է, ի՞նչ եք անում,- հարցրի տնօրենին՝ մարմնեղ, սև տղամարդուն:

Նա ուսերը թոթվեց.

- Ոչինչ: Խորհուրդ եմ տալիս, որ բուժքրոջը դիմի:

Այս դրվագում ամբողջ ամերիկյան դպրոցն է: Անչափահաս մայրերը երկրում մեծ անհանգստություն են առաջացնում, նրանց մասին գրում և խոսում են ամբիոններից, բայց աշակերտների իրավունքները, այնուամենայնիվ, խստորեն պահպանվում են:

Դպրոցներից մեկում տնօրենին խնդրեցի, որ մի աշակերտի քարտ ցույց տա, որպեսզի հասկանամ գնահատման համակարգը: Տնօրենը շփոթվեց. ամերիկացիները խնդրանքը մերժել չեն սիրում: Պարզվում է՝ օրենքն արգելում է սովորողի գնահատականներն ուրիշին հայտնել առանց ծնողի գրավոր համաձայնության: Գրավոր:

Հարյուրներով մետաղյա նեղ, կապույտ պահարաններ են դրված ամերիկյան դպրոցների միջանցքներում (այնտեղ հանդերձարաններ չկան): Պահարանները փակված են ծածկագիր կողպեքներով: Երեխաներն իմ խնդրանքով բացեցին. իսկական քառս: Իրեր, խաղալիքներ ու գրքեր էին լցված խառնիխուռն: Հետո ի՞նչ: Յուրաքանչյուրի անձնական գործն է: Մեզ մոտ իսկույն լավագույն պահարանի մրցույթ կկազմակերպեին, բոլոր հանձնաժողովները պահարանների մաքրությունն ստուգելն իրենց գործը կդարձնեին: Իսկ այստեղ ԱՄՆ Սահմանադրության IV լրացման համաձայն արգելված են բոլոր խուզարկություններն ու ստուգումները, միակ բացառությունն այն է, որ անձնական պահարանը կարելի է նայել, երբ ոստիկանը շան հետ թմրանյութ է փնտրում: Վերադառնալուց հետո այդ մասին պատմեցի մեր ուսուցիչներին: Անմիջապես հարցրին. «Իսկ եթե պահարանում սատկած մուկ լինի՞»: Ամերիկացիները սատկած մկներից չեն վախենում: Նրանց համար երեխայի հոգեկան վիճակն ավելի կարևոր է:

Նաև ուսուցիչն է պաշտպանված: Ահա աննշան թվացող, բայց դպրոցը հիմքից փոխող մի մանրամասն: Մեր ուսուցչին վճարում են ըստ նրա ծանրաբեռնվածության՝ շաբաթվա ընթացքում ունեցած ժամերի քանակի, մեկին՝ 18 ժամի համար, մյուսին՝ 30: Այդ ծանրաբեռնվածությունը, դրա հետ էլ, բնական է, աշխատավարձը, բաշխում են գարնանը: Քանի՜ անքուն գիշերներ, ինչքա՛ն վեճեր են լինում մեր դպրոցներում, նվաստացումներ, արցունքներ: Ուսուցիչն ամբողջությամբ կախված է տնօրենից:

Ամերիկյան ուսուցիչը մի քանի տարվա պայմանագիր ունի, և դասաժամերի քանակը չի ազդում նրա վրա: Ամերիկյան ուսուցիչներն իրենց գիտելիքներով ու մանկավարժական վարպետությամբ մերոնցից լավը չեն, նրանք էլ մերոնց նման տասնհինգ տարվա անընդհատ դասավանդումից սպառվում են և մերոնց նման խոսում են բյուրոկրատիայի ճնշման մասին: «Պատկերացնո՞ւմ եք, քսանի չափ մաթեմատիկայի դասագիրք կա, իսկ մեր դպրոցի խորհուրդը թույլատրում է ընտրություն կատարել միայն յոթից», - ամենայն լրջությամբ բողոքում էր մի ուսուցչուհի: Բայց ուսուցիչներն Ամերիկայում ավելի լավ պայմաններում են և այդ պատճառով էլ երեխաների հետ ավելի լավ են վարվում: Նրանց չեն անհանգստացնում, չեն ստուգում, նրանք դասը վարում են առանց լարման, անշտապ՝ չձգտելով բոլորին նույն գիտելիքները հասցնել. ով սովորում է, սովորում է, ով չի ուզում սովորել՝ ի՞նչ արած: Ծրագիրն ուսուցիչն ինքն է կազմում, իր հայեցողությամբ, դրա համար էլ չի շտապում անցնելիս: Ամերիկայում համարում են, որ սեփական ծրագրով ուսուցիչն ավելի լավ է դասավանդում, եթե նույնիսկ դա բացահայտորեն ավելի աղքատ է մեծ գիտնականների կազմածից: Գրականության ուսուցիչները պատառիկ ցուցակ չունեն՝ ո՛չ գրքերի, ո՛չ հեղինակների: «Իսկ եթե մի աշակերտ Շեքսպիր չիմանա»: «Նա էլ չի իմանա», - պատասխանեցին ինձ:

Ամերիկայում գրանցում չկա, բոլորը մշտապես տեղափոխվում են, որոշ դպրոցներում տարվա ընթացքում աշակերտների քառորդ մասը փոխվում է. և ոչինչ: Ոչինչ, ոչ մի սարսափելի բան չկա. ա՛յ, թե ինչ հասկացա Ամերիկայում: Մեզ դիտավորյալ վախեցնում են: Այստեղ ոչ մի բան մյուսի հետ չի կապվում, յուրաքանչյուրը սովորեցնում և սովորում է իր ձևով, յուրաքանչյուր ուսուցիչ իր կանոններն ունի. նա ուսուցիչ է, ոչ թե մեխի գլուխ:

Ման-Ֆրանցիսկոյի դոկտոր Բ. Քոբի անվան դպրոցում հանդիպեցի «14-րդ սենյակի կանոններին», իսկ Սիեթլի Սամանթա Սմիթի անվան դպրոցում՝ «Միսս Բերնեյթի կանոններին»։ Վերջինս Վաշինգտոնի նահանգի լավագույն ուսուցչուհին էր (այդպիսին էր նրա պաշտոնական կոչումը)։ Միսս Բերնեյթի կանոնները հինգերորդյանների համար այսպիսի տեսք ունեին. «Եղե՛ք բարի, հարգալից և հոգատար։ Լսե՛ք միմյանց։ Երջանկությունն այն չէ, որ ունենաս՝ ինչ ցանկանում ես, այլ այն, որ սիրես՝ ինչ ունես»։ Ամբողջ դպրոցական Ամերիկայում փակցված են տարբեր տեսակի ասույթներ, կանոններ, նշանաբաններ, խրատական ասացվածքներ. երեխային վարժեցնում են այն մտքին, որ բարոյական կանոններն անհարժեշտ են մարդուն, բայց դրանք պետք է բացահայտել, ընտրել, ինքնուրույն հայտնաբերել, քանի որ անձի բարոյականության աղբյուրը հենց իր մեջ է։ Ուսուցիչներին սովորեցնում են. «Կրթության սիրտը սրտի կրթությունն է»։ Նաև նրանց կոչ են անում ոչ միայն հարգել բազմազանությունը, այլ նաև ստեղծել։ Ուսուցչի աշխատանքը միմյանցից տարբեր մարդիկ կերտելն է։ Ուսուցչանոցներից մեկում հանդիպեցի այսպիսի ցուցապաստառի՝ «Բազմազանություն՝ ն ստեղծիր», մյուսում՝ «Գնա՛ և բազմազանություն՝ ն ստեղծիր»։ Մեծ քանակով մանկավարժական պլակատներ են տպագրվում, որոնք կոչ են անում յուրաքանչյուր երեխայի ընդունել՝ ինչպիսին կա, հարգել նրա ուրիշ լինելու իրավունքը, տարբեր լինելու, այսինքն՝ ինքն ինքը լինելու իրավունքը։

Իսկ ամերիկյան դպրոցների դասասենյակները (հատկապես տարրական՝ 6-11 տարեկանների), ուրախ են, զարդարված, խնդալից։ Սեղանները հիմնականում շարքերով չեն, ինչպես մեզ մոտ, այլ կիսաշրջանաձև. ամերիկացիներին չի հուզում, թե լույսը որ կողմից է ընկնում, միննույն է, ձախիկին ճիշտ չես նստեցնի, իսկ Ամերիկայում ձախիկներն ավելի շատ են, քան մեզ մոտ, նրանց չեն վերավարժեցնում։

Որպեսզի երեխաներին բացատրեն՝ որտեղից եմ եկել, վերցրի գրքուսը և դասարանում ցույց տվեցի՝ ահա Ամերիկան, ահա Խորհրդային Միությունը՝ երկու հսկայական երկրներ։ Մի փոքրիկ տղա ձեռք բարձրացրեց։ «Այո՞», - հարցրեցի ես։ «Կոստա-Ռիկա էլ կա», - ցածր ձայնով ասաց նա, և ես ամոթ զգացի։ «Իհարկե, - ասացի ջերմորեն, - և Կոստա-Ռիկա»։ Հավանաբար երեխաները նկատել էին իմ շփոթմունքը, քանի որ դասի ավարտից հետո ինձ մոտեցավ մի շատ փոքրիկ, սև աղջնակ, վճռականորեն ձեռքն ինձ մեկնեց և հստակ ասաց իր անունը։ Նա ինձ խրախուսում էր։ Օտարականը, ում առաջին անգամ էր տեսնում, նրա կարծիքով իրեն հավասար մարդ էր՝ իր աջակցության կարիքն ունեցող։

Հավասար իրավունքներով, հասարագոր մարդկանց այս ամուր ձեռքսեղմումը ամերիկյան դպրոցի ըմբռնման բանալին դարձավ։

Հիշո՞ւմ եք հանրահայտ առաջին հեռուստականուրջներն Ամերիկայի հետ։ Նրանցից մեկին դպրոցականներ էին մասնակցում. հաղորդման հաջորդ օրը բոլորը խոսում էին միայն այն մասին, թե ամերիկացի աշակերտներն իրենց ինչպես էին դրսևորում։ Մերոնք ավելի դմբո չեն, ավելի քիչ չգիտեն և զարգացած են. բայց կաշկանդված էին, ճնշված, փակ։ Իսկ նրանց անդրովկիանոսյան հասակակիցները հանգիստ էին, անկաշկանդ։

Անկաշկանդ էին, բայց ոչ կապկտրած՝ դաստիարակված էին:

Հնարավոր է՝ խնդիրն այն է, որ մենք ասում ենք «դժվար երեխաներ», իսկ Ամերիկայում՝ «դժվարություն ունեցող երեխաներ»: Մեզ մոտ պրոբլեմային երեխաներ են, նրանց մոտ՝ պրոբլեմներ ունեցող երեխաներ: Մեր ամբողջ մանկավարժությունն ուղղված է նրան, որ ծնողների և ուսուցիչների համար հեշտ լինի երեխաների հետ, դրա համար էլ հետո մեծերի հետ է դժվար լինում: Մեր դաստիարակության ամենակարևոր բառը «չի կարելի»-ն է: Ամերիկական դաստիարակության կարևոր բառը՝ «կարելի է»: Գործի՛ր: Ահա, իմ առջև դպրոցի տնօրենի նամակ է. նա սովորողներին և ծնողներին հայտնում է, որ նշանակվել է դպրոցի տնօրեն, տեղեկացնում է, թե առաջ որտեղ է աշխատել և գրում է, որ բոլորի համար չորս կանոն ունի՝ «Այստե՛ղ եղիր: Միացի՛ր: Գործի՛ր գիտակցաբար և պատասխանատվությամբ: Ամեն օր ինչ-որ նո՛ր բան իմացիր»: Ամերիկյան ամբողջ մանկավարժությունը դրական գործողության ոգով, դրական վերաբերմունքով է լցված:

Ես ամերիկյան դպրոցում եմ սովորում: Ինչպիսի՞ն է հիմա իմ աշխարհահայացքը: Կապիտալիստակա՞ն է դարձել:

Իմ այցելած մանկավարժական վեց քոլեջներից ոչ մեկում քաղաքական դաստիարակության ամբիոն չկար: Ամերիկացիներն աշխարհայացք չեն ձևավորում, նրանք դժվարությամբ են հասկանում այդ բառը, որն ամենակարևորն է մեր դաստիարակության մեջ: Բայց նրանք շատ են աշխատում բնավորության ձևավորման վրա (հատկապես սպորտի միջոցով) և ձգտում են դաստիարակել (ձևավորել) լավ քաղաքացի, հասարակական շարժումների գործուն մասնակից, ընտրող: Դասերից մեկի ժամանակ երեխաների հետ սենսատորին նամակ գրել էի սովորում: Մեզ սովեցին նրա հասցեն, սովորեցրին նրան քաղաքավարի դիմել և հատկապես շեշտեցին, որ պետք չէ ներողություն խնդրել նրա ժամանակը իլելու համար, քանի որ օգնելը նրա պարտականությունն է:

Եվ ոչ հատուկ տեխնիկա է պետք, ոչ անհավանական միջոցներ, այլ ընդամենը պետք է, որ յուրաքանչյուր դպրոցի մուտքի մոտ լինի թեկուզ շատ փոքրիկ մի պլակատ, նման նրան, որ տեսա Վերջինիա նահանգի «Ազատ երեխաներ» փոքրիկ դպրոցում.
«Մանկական տարածք: Ներս մտնենք սիրով և հոգատարությամբ»: Պարզապես:

Սովորում եմ ամերիկյան դպրոցում, և ավելին՝ փայլուն աշակերտ եմ: Իմ շրջապատում բոլորը փայլուն են, ուրիշ որակի չկա: «Մենք առաջինն ենք», - գրված էր մի դպրոցի կրծքանշանների վրա: Մեր մանկավարժական գաղափարախոսությամբ դա անմտություն է, ամբարտավանների դաստիարակություն. իսկ ամերիկյան դպրոցի փիլիսոփայությամբ դա անհրաժեշտ է: Բոլոր հաջողությունների հիմքը սեփական անձի նկատմամբ հավատն է: Պետք է ինքս ինձ հավատամ, որպեսզի մյուսներին հավասար լինեմ, լինեմ մյուսներից ո՛չ վատ, ո՛չ ցածր: Ես լավ եմ զգում: Դուք լա՛վ եք զգում: Ամեն ինչ կարգին է: Դու «օքեյ» ես: Ես էլ եմ «օքեյ»: Մենք հավասար ենք: Եթե մարդն այդպես է զգում, նա պատասխանատու, հասուն վարք կունենա: Իսկ եթե մարդուն թվա, որ ինքը մյուսներից վատն է կամ լավը, կամ մնացած բոլորը վատն են, ապա ամբողջ կյանքում

Ինդիք ու անախորժություն կունենա, չի կարողանա հաղթահարել խոչընդոտները:
Խնդիրներն իրականում լուծելու փոխարեն կմեծախոսի, կնեղանա ու կատի մյուսներին:

Բայց ինչպե՞ս, ներեցեք, կարող եմ ինձ փայլուն աշակերտ համարել, եթե ծույլ եմ, եթե վատ ընդունակություններ, թույլ հիշողություն ունեմ, իսկ երբ կանչում եմ գրատախտակի մոտ, երկու բառ չեմ կարողանում իրար կապել: Եվ դա բոլորն են տեսնում:

Սակայն Ամերիկայում երեխաներին գրատախտակի մոտ չեն կանչում: Ամբողջ երկրում ոչ մի տեղ ոչ մի անգամ աշակերտները դասը տեղից էլ չեն պատասխանում: Հաստափոր ձեռնարկում գետեղված են դասի ընթացքում կիրառվող աշխատանքների բոլոր հնարավոր ու անհնար ձևերը, բայց ոչ մի տեղ չի հիշատակվում, որ կարելի է աշակերտին կանչել գրատախտակի մոտ կամ բոլորի ներկայությամբ հարցնել երեկվա դասը: Ամերիկացի ուսուցիչներին դա անհնար, անհասկանալի է թվում.

- Ի՞նչ, ձեզ մոտ ուսուցիչն աշակերտից հարցազրո՞ւյց է վերցնում: Ամբողջ դասարանի ներկայությա՞մբ:

- Բա մյուսներն այդ ընթացքում ի՞նչ են անում:

- Տասնհինգ րոպե հարցման համա՞ր, քսա՞ն: Ինչպե՞ս կարելի է այդքան անիմաստ ծախսել ժամանակը:

- Կանչեմ գրատախտակի մո՞տ: Գժվե՞լ եմ, ի՛նչ է: Իմ դասարանում աշակերտների կեսից ավելին սևամորթ է: Բա որ նրանցից մեկին կանչեմ դասը պատասխանելու, և նա դասը չիմանա... Ախր, նրա վրա կծիծաղեն: Եվ ինձ կմեղադրեն ռասիզմի համար:

Ինչքան փորձեցի ապացուցել, որ բանավոր հարցման ընթացքում ավելի լավ կարելի է աշակերտին ճանաչել, որ զարգանում է բանավոր խոսքը, որ ... ո՛չ: Ոչ մի դեպքում:

Քսան տարի առաջ «Աշակերտական ժամը» գրքում նկարագրել եմ դպրոց, ուր առավոտյան աշակերտներն առանց վախի են վազում. նրանց անձանոթ են այն տանջալի րոպեները, երբ ուսուցչի գրիչը սահում է մատյանի ցուցակի վրայով, շունչները չեն պահում՝ «Միայն թե ինձ չկանչի»: Ինքս այդպիսի դպրոց չէի տեսել, գրական նյութերի միջոցով նկարագրել էի Լև Տոլստոյ ուսուցչի դպրոցը Յասնայա Պոլյանայում: Եվ ահա, պարզվում է, որ ոչ թե մեծ մանկավարժի փոքր ուսումնարանում, այլ հսկա երկրի բոլոր դպրոցներում կարելի է երեխաներին այնպես սովորեցնել, որ նրանք առավոտյան չվախենան դպրոց գալուց:

- Բայց ինչպե՞ս կարելի է սովորեցնել, եթե ոչ մեկը չի վախենում, - հարցնում էի Ամերիկայում:

- Իսկ ինչպե՞ս կարելի է սովորեցնել, եթե վախենում են, - անընդհատ պատասխանում էին ինձ:

Ամերիկյան դպրոցում հազար ու մի վատ բան կա, բայց մի բան չկա՝ երեխաների ծնկների դողը, չկա ուսուցչի «Նստի՛ր, երկուս»-ից առաջացող դառը չարացածությունը, գետնի տակն անցնելու այդ ցանկությունը կամ, հակառակը, հոգին ունայնացնող այդ հոխորտանքը:

Ամերիկյան սովորեցնում է թվանշաններով (այդ թվում՝ նաև վատ), բազում անախորժություններով, բայց առանց նվաստացնելու, առանց վախի, առանց պարտադրանքի:

Սովորում եմ ամերիկյան դպրոցում և սովորում եմ դպրոցական (և ոչ միայն դպրոցական) Ամերիկայի ամենակարևոր բառը՝ սելֆ-իստիմ: Վերջերս Կալիֆոռնիայում 357 հազար դոլար արժողությամբ մի հետազոտություն են կատարել և պարզել, որ այն ամենից, ինչը պետք է մարդուն, ամերիկացիներն առաջին տեղում դնում են «սելֆ-իստիմ»-ը:

Շշմելու է: Կա այնպիսի մի բան, որը մի երկրում ամենաթանկն են գնահատում, իսկ մյուսում՝ մեր երկրում, միայն հազվադեպ են հիշատակում:

Բառարանում self-esteem թարգմանվում է որպես ինքնահարգանք, արժանապատվություն, բայց ռուսական “достоинство” բառը երկու տարբեր նշանակություն ունի: Պայմանականորեն կարելի է այսպես ասել՝ անձի (կամ արտաքին) արժանապատվություն և սեփական (կամ ներքին) արժանապատվություն: Հենց վերջինն են արտահայտում սելֆ-իստիմ-ով:

Անձի արժանապատվությունը պահպանվում է օրենքով: Սեփական արժանապատվությունն ինքն է պահպանում մարդուն, հասարակությանը, օրենքը: Ինչպես ինձ ասաց լենինգրադցի գրող Նիկոլայ Կրիշչուկը, անձնային արժանապատվությունը վերաբերում է նրան, թե ինչ չի կարելի անել ինձ, իսկ սեփական, ներքին արժանապատվությունը՝ թե ես ինչ չեմ կարող անել: Անձի արժանապատվությունն անոթ է, որ չի կարելի կոտրել: Սեփական արժանապատվությունը ամանի պարունակությունն է՝ մարդու բարոյական էությունը: Դա ինքնագնահատական չէ, ինքնահավանություն չէ, ինքնագիտակցություն չէ, դա նույնիսկ իր մասին կարծիքը չէ («Ես-հայեցակարգ», դա մարդկանց այն հավասարության վիճակն է (ոչ միայն իրավահավասարության), որն ինձ շշմեցրեց դասից հետո ձեռքն ինձ համարձակորեն մեկնած աղջնակի դեպքում: Դա միացումն է ինքդ քեզ հետ և աշխարհի, խղճին լսելը: Հավատն է սեփական անձի նկատմամբ, բայց ոչ ինքնավստահությունը: Հոգու հանգստություն է, բայց ոչ ինքնահանգստացում:

Եթե մանուկ հասակում դաստիարակված է սեփական արժանապատվություն, ապա պատանեկության ճգնաժամային շրջանից հետո այն ամրապնդվում է առհավետ և դառնում բարձր բարոյականությամբ պահվածքի աղբյուր: Ով սիրում է իր երեխային, թող նրա մեջ սելֆ-իստիմ դաստիարակի՝ ներքին արժանապատվություն, ազնվության հիմքը:

Եկենք մտածենք, թե ո՞րն է մեր ժամանակի պատմական զարգացման ընդհանուր միտումը: Ֆրանսիական մեծ հեղափոխությունից, հավասար իրավունքների մասին առաջին գաղափարներից սկսած՝ «բոլորի համար» բառերը դարձել են պատմություն վճռող բառեր: XVII դարի վերջից սկսած՝ ցանկացած բարօրություն գնահատվում է

այնքանով, որքանով բոլորի համար է: Սկզբում՝ բոլորի համար հավասար իրավունքները: Հետո՝ մեր դարի կեսերից (նկատի ունի անցյալ դարը.- թարգմ.)՝ բոլորի համար բարեկեցությունը: Մոտավորապես նույն ժամանակ հայտնվեց բոլորի համար երրորդ բարիքը՝ երկարատև (10-12 տարուց ոչ պակաս) կրթությունը: Սկսվեց կրթական «բումը», որը վերջ չի ունենա:

Իրավունքներ բոլորի համար, բարեկեցություն բոլորի համար, կրթություն բոլորի համար. սրանք մեր ժամանակների երեք մեծ շարժումներն են:
Բայց մարդու ինչի՞ն են պետք իրավունքները: Ինչի՞ համար և ի՞նչ չափով լինի բարեկեցություն: Ինչի՞ համար և ինչպիսի՞ կրթություն է պետք:

Նրա համար, որ մարդը կարողանա գնահատել իրեն և իր կյանքը, իրեն երկրորդական չզգա: Մարդիկ ունեցվածքով չեն կարող հավասար լինել, իրավունքներով նույնպես բացարձակ հավասար լինել չեն կարող, չեն կարող միատեսակ սովորել. մարդկանց հասանելի միակ իրական հավասարությունը սեփական արժանապատվությանն է վերաբերում, երբ դպրոցականը ձեռքը հանգիստ մեկնում է նախագահին, իսկ փոքրիկ աղջնակը՝ օտարերկրացի հյուրին: Արժանապատվությունն իր մեջ ներառում է ամեն ինչ, քանի որ չի կարող լինել արժանապատվություն՝ առանց բարեկեցության, առանց իրավունքների և առանց կրթության. արժանապատվության մեջ սոցիալական բարիքները միանում են անհատական որակներին՝ զարգացմանը, դաստիարակությանը, ժառանգականությանը: Սեփական արժանապատվության զգացողությունը տրվում է բնությունից և պարզվում է հասարակության կողմից, այն դաստիարակվում և ձեռք է բերվում մարդու կողմից՝ հոգևոր շատ լարումների արդյունքում: Սա մարդկայնության համընդհանուր, համապիտանի ցուցանիշ է, որն ընդգրկում է ամեն ինչ, և շատ հնարավոր է, որ XXI դարը դառնա, գոնե ձգտումներով, մարդկային համընդհանուր արժանապատվության դար, երբ երկրի վրա մարդկանց ցանկացած հավաքույթ կլինի Արժանապատիվ հավաքույթ: Նոր ժամանակը սկսվեց մարդու իրավունքների համար, նրա անձնային արժանապատվության համար շարժումով, որը մեր աչքի առաջ վերափոխվում է, դառնում շարժում՝ հանուն մարդու սեփական արժանապատվության:

Պատմության իմաստը մարդկային արժանապատվությունն է:
Երեխաների մեջ սելֆ-իստիմ դաստիարակելով՝ ամերիկական դպրոցը շատ առաջ է անցել մերինից և դարձել իր հասարակության ամենապինդ հենասյուններից մեկը: «Ես փայլուն աշակերտ եմ»-ը դառնում է «Ես երջանիկ մարդ եմ»: ԱՄՆ-ում մարդկանց մոտ 80 տոկոսն իրեն համարում է երջանիկ, ինչը մի քանի անգամ գերազանցում է այդ ցուցանիշը մյուս զարգացած երկրներում՝ չխոսելով արդեն չզարգացած երկրների մասին: Այստեղ մանկավարժների մեծ մասը երեխաներին ինքնատիպ լինելու և երջանիկ լինելու գիտությունն է սովորեցնում:

Իրենց ա՛յ այսպիսի, արժանապատվության դպրոցն ամերիկացիները ժխտո՞ւմ են: Հայեոյո՞ւմ են: Հյուրերից մեկը՝ դեղագործության պրոֆեսոր, միանգամայն լրջորեն ասաց.

- Դե, դպրոցը, պարզ է... Դպրոցը պետք է սովորեցնի միայն նրանց, ովքեր ցանկանում են սովորել, մնացածները՝ գուղ բայ, Չարլի...

Ես հոգոց հանեցի: Ինձ տանն զգացի: Արժե՞ր այսքան երկար ճանապարհ կտրել, որ լսես սովորական ընտանեկան փիլիսոփայությունը, որը մեզ մոտ էլ այդքան շատ մարդ է կրում: Ինչի՞ համար բոլորին սովորեցնեն: Ինչո՞ւ բոլորը սովորեն: Գուղ բայ, Չարլի, ողջույն, Վանյուշա... Դպրոցը ձեզ համար չէ:

Իսկ ո՞ւմ համար է դպրոցը: Ի՞նչ է պատահել դպրոցին:

Սովորում եմ ամերիկյան դպրոցում ու համար-համար կարդում եմ մանկավարժական «Ֆի Դելտա Կապեն» փայլուն ամսագիրը և ամեն փաստի տակից, ամեն տողի ետևից լսում եմ «Գուղ բայ Չարլի» թեմայով «սովորեցնել, թե՞ ոչ» գաղտնի վեճը: Եվ եթե սովորեցնել, ապա բոլորի՞ն, թե՞ ոչ: Իսկ եթե բոլորին, ապա ինչպե՞ս: Ա՛յ քեզ անախորժություն. դպրոցը, իմիջիայլոց, պետք է նաև սովորեցնի:

Իսկ դա, ամերիկացիների ընդհանուր կարծիքով, իրենց դպրոցը չի կարողանում: Ամերիկական ավտոմեքենաները դո՞ւրս են մղվում ճապոնականների կողմից: Ո՞վ է մեղավորը: Իհարկե դպրոցը: Դպրոցը կարծես քաղության նոխագ է դարձել: Իսկ գուցե այդ ազատությունը երեխաներին պետք էլ չէ՞: Եվ ահա հասարակությունը երես է թեքում արժանապատվության իր դպրոցից և աչքը գցում սովետական ավտորիտար դպրոցին: Երկու հսկա պետությունների դպրոցական քաղաքականության մեջ նույնն է կատարվում, ինչ մեծ քաղաքականության մեջ՝ մանկավարժական ուրուրներն իրենց դեկավարությանը վախեցնում են մյուս երկրի ձեռքբերումներով (թող որ հնարովի): Կրթության մրցավազքը կարող է նույնքան վտանգավոր լինել, որքան սպառազինությանը: Արդեն վաղուց մեր դպրոցը կորցրել է գիտելիքի առավելությունը. ի՞նչ արած: Հիմա նույնը գրում են ճապոնիայի մասին, հաշվում, թե քանի դասաժամ ունի ունի ճապոնացի աշակերտը, և քանիսը՝ ամերիկացի, ու մարդկանց՝ և՛ մերոնց, և՛ ամերիկացիներին, թվում է, թե ինչ-որ բան եթե շատ լինի՝ փող, դասաժամ, տարվա մեջ ուսումնական օր, ապա արդյունքներն էլ ավելի լավը կլինեն: Բայց իհարկե, այդպես չէ: Հաշվելու ենթակա համարյա ամեն ինչ երեխայի դաստիարակության և կրթության գործում երկրորդական նշանակություն ունի:

Ես սովորում եմ ամերիկյան դպրոցում. նա շատ մեղքեր ունի, բայց երեսպաշտության մեղք չի երևում. նա բաց է, բազմազան, կարծես համաշխարհային մանկավարժական ցուցահանդեսում լինես: Այդ պատճառով էլ համաշխարհային դպրոցի հակասություններն այստեղ ավելի լավ են երևում, քան մի այլ տեղ:

Ընթերցող, եթե չես ալարում, վերցրո՛ւ թղթի մի կտոր և վրան եռանկյո՛ւն գծիր: Դրա զագաթներում գրի՛ր «արժանապատվություն», «գիտելիք», «համընդհանրություն»: Մանկավարժական այս եռանկյունը նման է դասական սիրայինին, հակասություններից է կազմված...

Մանկավարժական եռանկյան բոլոր զագաթները հավասարաչափ կարևոր են, բայց այդ

եռանկյունն աչքի առաջ քանդվում է: Մանկավարժները կարողանում են լավ սովորեցնել, առանց արժանապատվությունը վիրավորելու, բայց ոչ բոլորին, այլ միայն ընդունակ երեխաներին: Ամերիկայի մասնավոր դպրոցներում լավ են սովորեցնում ոչ թե այն պատճառով, որ շատ փող ունեն (հաճախ դրանք աղքատ էլ են լինում), այլ այն պարզ պատճառով, որ ծույլերին ու անընդունակներին հեռացնելու իրավունք ունեն: Մեր նորահայտ գիմնազիաներն էլ գերլավ արդյունքներ ցույց կտան, քանի որ ոչ բոլորին են ընդունում: Այստեղ ոչ մի խորամանկություն չկա. դա կարողանում էին անել և՛ հեղափոխությունից առաջ, և՛ նախնադարում: Մեր ընդհանուր դպրոցն էլ բոլորին չի սովորեցնում, այլ միայն ընդունակներին: Բայց միննույն ժամանակ մյուսների արժանապատվությունն այնպես է վիրավորում, որ շատերի դպրոցա-ծննդյան վերքերն ամբողջ կյանում այդպես էլ չեն լավանում:

Այս անելանելի վիճակից յուրաքանչյուր երկիր իր ելքն է փնտրում:

Ես սովորում եմ ամերիկյան դպրոցում. նա էլ չի կարողանում բոլոր երեխաներին լավ սովորեցնել, բայց գոնե ընտրություն է կատարել՝ կարևորում է արժանապատվությունը և հիմա քաղաքակիրթ ձևեր է փնտրում, որ չսովորեցնի բոլորին: Սա վրիպում չէ՝ չսովորեցնի բոլորին:

Չսովորեցնելու առաջին ճանապարհն այն է, որ ամերիկական օրենքներով դպրոցականը պարտավոր չէ յուրացնել ամբողջ նյութը, անցնել ամբողջ ծրագիրը և լավ թվանշաններով ատեստատ ստանալ, ինչպես մեզ մոտ, այլ պետք է միայն մինչև 16 տարեկանը լրանալը դպրոց հաճախի: Հենց որ 16 տարիդ լրացավ, կարող ես թողնել դպրոցը թեկուզ մարտին, ոչ ոք քեզ չի ստիպի սովորել. որոշ նահանգներում ավագ դպրոցականների կեսը դուրս է գալիս դպրոցից: Գուդ բայ, Չարլի: Հաճախելու, ոչ թե սովորելու մասին օրենքն սկզբունքորեն փոխում է վիճակը. ուսուցիչը մերոնց նման պարտավոր չէ բոլորին սովորեցնել, նա ուղղակի սովորեցնում է, իսկ հետո՝ ո՞նց կստացվի:

Բայց եթե դպրոցում երեխաներին չեն ստիպում սովորել, ինչպե՞ս են նրանց պահում դպրոցում թեկուզ մինչև 16 տարեկանը: Գոնե հենց այն պատճառով, որ դպրոցն ավելի էժան է, քան բանտը: Դպրոցականը տարեկան արժե 5 հազար դոլար, իսկ կալանավորը՝ 14 հազար: Եվ լավ օրից կամ բարձր մանկավարժական գաղափարներից չէ, որ ամերիկյան ավագ դպրոցն ամենատարբեր պարապմունքներ է առաջարկում. ուղղակի այլ ելք չունի: Մաթեմատիկայի ժամին մաթեմատիկա չիմացող երեխաներին պահել չի լինի. ամեն ինչ կքանդեն: Ավագ դպրոցում դասարաններ չկան: Յուրաքանչյուրն ընտրում է իր պարապմունքները: Կարելի է ընտրել շատ բարդ առարկաների դասընթացներ, կարելի է նաև պարզագույններով յուրա գնալ: Ավագ դպրոցականների միայն 4 տոկոսն է ֆիզիկա անցնում, իսկ ամերիկացի ուսուցիչների աչքերը ճակատն է թռչում, երբ իմանում են, որ մեզ մոտ բոլորն են ֆիզիկա, քիմիա, բարդ մաթեմատիկա անցնում: «Ինչպե՞ս էք կարողանում», - զարմանում են ազնիվ ամերիկացիները:

Կարողանում ենք, կարողանում... Մենք ամեն ինչ ենք կարողանում:

Չսովորեցնելու գլխավոր միջոցը հոսքն է: Երեխաներին մանկապարտեզից՝ հինգ

տարեկանից, արդեն թեսթավորում են և բաժանում հոսքերի՝ բարձր, միջին, ցածր: Անգլերենի ժամին հարցնում են ուսուցչուհուն: «Ինչո՞ւ են աշակերտներն այսքան քիչ»: «Սա ընդունակների դասարանն է, իսկ Ջորջիա նահանգի օրենքներով այսպիսի դասարանում կարող է լինել մինչև 18 աշակերտ, նույնիսկ մի հոգի չի կարող ավելանալ: «Բայց նրանք ինձ առանձնապես ընդունակ չթվացին, այս երեխաները...»: «Այո՛, ընդունակները միայն երկուսն են»: Բա ո՞նց կլինի»: «Մյուսները թեսթավորման ժամանակ բարձր արդյունք են ցուցաբերել, ոչինչ չենք կարող անել: Համարվում են ընդունակ: Օրենք է»:

Թվում է՝ ազնիվ է, ընդունակներին ավելի լավ են սովորեցնում, ոչ ընդունակներին՝ ավելի պարզ բաներ: Բայց ցավն այն է, որ եթե երեխան մի անգամ ընկավ ցածր հոսք, այլևս չի կարող դուրս գալ: Ամերիկացի առաջադեմ մանկավարժներն աղմկում են՝ սա հանցագործություն է, երեխաներին տեսակավորել չի կարելի:

Եվ հատկապես այդ վտանգավոր, վնասակար, հանցավոր մեթոդն են հիմա փոխ առնում մեր դպրոցներում: Հազար ու մի հոյակապ հայտնագործություններ են արվում ամերիկյան դպրոցում, բայց ոչ մեկին պետք չեն: Մի այլանդակ բան կա, և բոլորը կառչում են դրանից: Ամբողջ երկրով հիմա սնկի նման աճում են «հավասարեցման դասարանները», որոնցում հավաքում են հետ մնացողներին, և դա համարվում է նոր, առաջադիմական: Մեկ-երկու տավա հավասարեցումից հետո երեխան ավելի է հետ մնում և այնքան է կորցնում հավատն իր նկատմամբ, որ նրան սովորական դասարան վերադարձնելն արդեն անհանար է դառնում: Ոնց որ ուղղակի իվանուշկա-հիմարիկներ լինենք՝ ողբում ենք հարսանիքի ժամանակ և պարում թաղմանը:

Ես սովորում եմ ամերիկյան դպրոցում. նա պատեպատ է խփվում հակասությունների մամլիչում: Ա. Փաուելի, Է. Ֆերարի և Դ. Կոենի «Դպրոցը» «առևտրական հրապարակ» հայտնի գրքում ցույց է տրվում, որ անհնար է միաժամանակ և՛ պարտադիր ակադեմիական մակարդակը բարձրացնել, և՛ կրթություն տալ բոլորին: Սակայն ամերիկացիները չեն հաշտվում, նրանք ելք են փնտրում, ընդ որում՝ ամբողջ երկրով: Յուրաքանչյուր թերթում դպրոցի մասին մեկ-երկու հոդված կա, քանի որ համարվում է, որ Ամերիկյան երեք դժբախտություն ունի՝ էկոլոգիան, թմրանյութերը, դպրոցը: Անընդհատ հաղորդում են ինչ-որ նոր հայտնագործությունների, հետազոտությունների, ծրագրերի մասին:

Ամերիկացիները շատ են ցանկանում դպրոցը մարդկային դարձնել: Աստվածորեն մարդկային:

Բայց հակասությունները լուծելու մեր հնարավորություններն ավելի մեծ են: Մենք դեռ այդքան չենք թաղվել հոսքերի ճահիճը, մեզ մոտ ուսուցիչներն ավելի շատ են սովորած, երեխաները վարժվել են սովորելուն, մեզ մոտ այնքան կարևոր հայտնագործություններ կան: Մեզ ընդամենը մի երկու խելոք մարդ է պետք ամբողջ ժողովրդության համար: Տե՛ր Աստված, ուղարկի՛ր նրանց հանուն մեր երեխաների:

Սովորում եմ շվեդական դպրոցում

Երազանքս իրականացավ, ահա ես սովորում եմ շվեդական դպրոցում: Այդ մասին սկսեցի երազել, երբ երկու տարի առաջ կարդացի լոնդոնյան «Էկոնոմիստ» թերթի հոդվածը. հոդվածում գրված էր, որ Շվեդիայի դպրոցները համարյա լավագույնն են Եվրոպայում, որ այնտեղ ամեն ինչ այնպես չէ, ինչպես ամենուր, և մանկավարժական բոլոր ամենադժվար խնդիրները լուծված են: ԱՄՆ ճամփորդության ժամանակ, ելույթ ունենալով մանկավարժների առջև, ես միշտ վկայակոչել եմ այդ հոդվածը և ասել, որ կարծես բոլոր խնդիրները լուծված են Շվեդիայում, բայց ոչ ոք այնտեղ չէր եղել:

Եվ ամեն անգամ դահլիճը ծիծաղում էր. իրականում չէին եղել և չգիտեին: Ծայրահեղ դեպքում երեք մոտեցում կա ուրիշի փորձին՝ ամերիկական, սովետական և ճապոնական: Ամերիկական մոտեցումը՝ ոչ մի ուրիշ փորձ չկա, մեզ մոտ՝ Ամերիկայում, ամեն ինչ լավն է բոլորից: Ճապոնական մոտեցումը՝ աշխարհում օտար ոչինչ չկա. այն ամենը, ինչ լավն է, մերն է կամ մերը կլինի: Սովետական մոտեցումը՝ աշխարհում ամեն ինչ մերնից լավն է, բայց մեզ ոչինչ պետք չէ: Վերցրեք արևմտյան դպրոցների մասին գրեթե ցանկացած գիրք. դա փաթեթավորված մեղադրանք է հասցեագրված կապիտալիստներին և նրանց մանկավարժական ձեռքբերումներին:

Տեր Աստված, ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիային պատժի՛ր այն ամբողջ չարիքի համար, որ պատճառեց մեր երեխաներին:

Սովորում եմ շվեդական դպրոցում: Քաղաքային տեղեկատուի մեջ գտա մոտակա տարրական դպրոցը և ուղևորվեցի այնտեղ, անկոչ ու անսպասելի, ինչը բացարձակապես անհնարին է և ոչ հարգալից տեղական պատկերացումներով: Փողոցից հայտնվեցի դպրոցական մեծ հոլում, որտեղ դագամացի բարձրահասակ հավաքարարները հատակի մեծ փայտերով լվանում էին հատակը :

Ո՛չ երեխաներ, ո՛չ ուսուցիչներ, ո՛չ հերթապահներ. ոչ մեկը չկար, բոլորը դասի էին: Ոչ շունչ, ոչ հոգի: Շվեդական դպրոցում ուսուցիչը աշխատավարձ ստանում է անկախ ժամերի շաբաթական քանակից, դրա համար էլ տնօրինությունը ջանում է, որ բոլորը ուսումնական ամբողջ օրը զբաղված լինեն, և ուսուցիչները պատուհան չունեն: Վճարում են՝ աշխատիր:

Հավաքարարները ընկերասիրաբար ինձ ցույց տվեցին՝ որտեղ է ուսուցչանոցը, բայց այնտեղ էլ ոչ ոք չկար: Ես չգիտեի՝ ինչ անեի: Այդ պահին վերջապես հայտնվեց մի ուսուցչուհի և խիստ ուրախացավ, ասես ինձ սպասել էր մի քանի օր: Ես բացատրվեցի: Նա ինձ սուրճ լցրեց ուսուցիչների համար նախատեսված մեծ թերմոսից և գնաց ավագ ուսուցչին հարցնելու, թե ինձ հետ ինչպես վարվեն: Վերջինս դաս էր վարում:

Տնօրենը չկար: Շվեդիայում սովորաբար երեք-չորս դպրոցին մեկ տնօրեն է տնտեսում են:

Այո, ուսուցիչներին պետք չէր տնօրենի հսկողությունը:

Կա աշխատակարգ, բոլորն աշխատում են իրենց ուժերի չափով, ուրիշ ինչ:

Եթե ուսուցիչը լավն է, ինչի՞ համար է տնօրենը:

Եթե վատն է, նրան ինչո՞վ կօգնի տնօրենը:

Այստեղ այդպես են մտածում: Ոչ մի տիպի հսկողություն չկա ... գրո հսկողություն....

Մինչ ուսուցչուհի Իրենա Էլեմարը գնաց պլանավորելու իմ այդ օրվա ճակատագիրը, ևս մի կին մտավ սենյակ: Նա չէր կարող իմանալ՝ ով էմ ես և ինչու եմ այստեղ՝ մենակության մեջ նստած: Բայց ինձ տեսնելով՝ այնպես նա ուրախացավ, ասես միասին էինք սովորել, կրթոտ սիրել իրար, հետո քսան տարի բաժանված եղել, և հանկարծ ես հայտնվել էի:

Կյանքում ինձ համար ոչ ոք այդպես չէր ուրախացել, ինձ մարդ էի զգում: Սովորում եմ շվեդական դպրոցում, նշանակում է՝ ինձ զգում եմ ցանկալի, պետքական և բոլորին ուրախություն պատճառող մարդ: Ահա հիմա գրեցի այս տողերը, վերատպեցի, հիշեցի այդ օրը և այդ օրերը, նորից հանգստություն զգացի: Ուրախ եմ և ապրել եմ ուզում:

Ի՞նչ է դպրոցը: Դպրոցը այն վայրն է, ուր զարթնում է ապրելու ցանկություն, ուր երեխաներին սովորեցնում են և ընտելացնում են ապրել: Դպրոցը լավ, մաքուր և ուրախ տեղ է:

Սովորում եմ շվեդական դպրոցում: Չգիտեմ՝ ինչու այդ մասին չեն խոսում, չեն գրում, չեն գոռում, բայց Շվեդիայում դրված է մանկավարժական մեծագույն փորձը, կարելի է ասել դարի փորձը: Մանկավարժական երկու հավերժ հարցերի համոզիչ պատասխանները փորձված են ու ստացված:

Առաջին հարց. կարելի՞ է երեխաներին սովորեցնել առանց ստիպելու և մինչև անգամ առանց ոչ այդքան հարկադրանքի, ինչպիսին գնահատականն է:

Մեր հանրահայտ Շալվա Ամոնաշվիլին սկսեց սովորեցնել առանց գնահատականի տարրական դպրոցում և ապացուցեց, որ դա հնարավոր է: Բայց համարվում է, որ սովորեցնել առանց գնահատականի կարող է միայն ինքը՝ Ամոնաշվիլին, որովհետև նա գերազանց մանկավարժ է: Իսկ այն, որ նրա դպրոցում համատարած բոլոր ուսուցիչները սովորեցնում են առանց գնահատականի դրա վրա ուշադրություն չեն դարձնում:

Մի խոսքով, միայն Ամոնաշվիլին, առանձին վերցրած դպրոցում և միայն ցածր դասարաններում, ահա փորձարարության սահմանը: Իսկ Շվեդիայում բոլոր երեխաներին են սովորեցնում առանց գնահատականի մինչև 8-րդ դասարանի կեսերը: Իր կյանքում առաջին անգամ դպրոցականը գնահատական ստանում է ուսում սկսելուց

յոթ և կես տարի անց: Դնում եմ վերջակետ, որովհետև չգիտեմ, թե որքան բացականչական նշաններ կպահանջվեր դնել այսպիսի հայտարարությունից հետո: Եվ դա հիմա նույնիսկ նորություն չէ, այդպես այստեղ սովորեցնում են 1965 թվից: 25 տարի: Սա ինչ կյանք է: Պետք է գնաս այդ Շվեդիան, որ իմանաս մանկավարժական այդ մեծագույն իրադարձության մասին: Այնուամենայնիվ, կարելի է, բայց և այնպես մանկական բնությունը թույլ է տալիս սովորեցնել առանց հարկադրանքի կամ առանց գնահատականի: Հետևաբար, դպրոց առանց լացի հնարավոր չէ, ֆանտազիա չէ, այլ իրական:

Հենց Շվեդիայում առանց գնահատականի ուսմանը մինչև այժմ վերաբերում են երկակի: Ումանք գտնում են, որ այդպես լավ է, ումանք մինչև հիմա ասում են, որ գնահատականի հանելուց հետո սովորելու մակարդակը իջել է, և հիմա այն չէ, ինչ առաջ: Վեճը մնում է վեճ, բայց և փաստը մնում է փաստ: Դպրոցը չի քանդվել, դպրոցը դադարել է երեխաների նյարդերը սողցելուց: Իսկ շվեդ աշխատողը, ինչպես նախկինում, Եվրոպայում համարվում է համեմատաբար զարգացած: Նրան ուրիշների հանենատ հեշտ է մասնագիտություն սովորեցնել և վերապատրաստել: Շվեդիայում մարդիկ գերադասում են վերապատրաստվել՝ որպես մասնագետի, քան անգործության թռչակ ստանալ: Ցնցող արդյունք:

Երկրորդ փորձն էլ ավելի ապշեցուցիչ է: Այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհում երեխաներին բաժանում են ընդունակների և անընդունակների, ստեղծում են հատուկ դասարաններ հավասարության, առանձնացնելով նրանցից թույլերին, ստեղծում են հատուկ դպրոցներ տաղանդավորների համար, այդ ժամանակ, երբ մեր դպրոցական երկիրը հասարակության լռակյաց օգնությամբ գնում է դեպի կործանում, որից երբեք դուրս չես պրծնի: Երեխաների բաժանումը ըստ ընդունակությունների կործանարար է: Շվեդիայում միանշանակ եկել են այն եզրակացության, որ երեխաներին չի կարելի բաժանել ըստ ընդունակությունների, ոչ մի մակարդակում: Շվեդիայում առաջադեմ մաթեմատիկների կամ հումանիտար դպրոցներ չկան: Հենց գոյությունը նման դպրոցների վտանգավոր է, որովհետև դրանք մերկացնում են բոլոր մնացածին և ծնում են անհավասարություն: Իսկ Շվեդիայում Իսկ Շվեդիայում սոցիալական անհավասարությանը վերաբերում են ծայրահեղ սուր: Փորձով ընդգծում եմ, անգամ բազմամյա փորձով հայտնի է, որ երեխաները լավ են սովորում, երբ միննույն նստարանին նստած են խելացին և ոչ խելացին, բանվորի երեխան և նախարարի երեխան. ոչ մի խնդիր: Մեր նոր վարժարանները և հատուկ դպրոցները բոլորի մոտ առաջացնում են այն տպավորությունը, կարծես մարդկանց գրպանն են մտել, կարծես իմ փողերով հատուկ ձևով սովորեցնում են ուրիշի երեխաներին՝ հարուստների առավելությամբ:

Սովորում եմ շվեդական դպրոցում: Իհարկե, այս ամենը տարօրինակ է: Իննամյա հիմնական դպրոցը պարտադիր է բոլորի համար, բայց և դրանից հետո սովորաբար բոլորը ընդունվում են վարժարան: Միջնակարգ կրթություն ստանում են սովորաբար բոլոր պատանի շվեդներն ու շվեդուհիները: Այն, ինչ մեզ չհաջողվեց, այն, ինչից մենք հետ կանգնեցինք, դա Շվեդիայում գործում է: Իններորդ դասարանի կեսերին

քաղաքային հատուկ որոշման համակարգը ապագա ավարտողների և նրանց ծնողների հետ միասին հանգիստ որոշում են, թե որ վարժարանում պետք է շարունակի իննամյա դպրոցն ավարտողը: Որոշ վարժարաններ, օրինակ՝ շինարար աշխատողների համար՝ երկամյա, մյուսները՝ եռամյա և քառամյա, բայց բոլորը վարժարաններ: Ես եղա վարժարաններից մեկի տասներորդ դասարանում մաթեմատիկայի դասին. դասը մոտենում էր ավարտին, հանկարծ ուսուցչուհին ինչ-որ բան ասաց դասարանին, և տասնյոթ տարեկան բոլոր երեխաները հրեշտակի ձայնով երգեցին: Պարզվեց, որ դա գրեթե պրոֆեսիոնալ երգչախումբ է: Պարզվեց՝ ես ընկել եմ երգեցողության թեքումով վարժարան: Ես հարցուփորձ արեցի երեխաներին. ոմանք պատրաստվում էին դառնալ կիթեռնետիկներ, ոմանք՝ վիրաբույժ. երգել բեմում ոչ ոք չէր մտադրվում: Պարզապես նրանք սիրում են երգել և վարժարան ընտրել են այն բանի համար, որ այնտեղ սովորեցնում են նաև երգել: Կան նկարչության, դահուկային թեքումով վարժարաններ, բայց ոչ ճնշելու աստիճան խորացված ինչ-որ մի հիմնական առարկայով: Շվեդիայում մաթեմատիկայի պաշտամունք է: Կրթությունը համարվում է լավ այնքանով, որքանով նրանում շատ է մաթեմատիկան, և այդ առիթով ոչ ոք չի վիճում: Մեզ մոտ մաթեմատիկան հետզհետե դուրս է մղվում. գտնում են, որ չպետք է տանջել երեխաներին: Ով է ավելի ճիշտ, կիմանանք տաս տարի անց: Կամ չենք իմանա: Մեր հսկայական դպրոցը ինչ կապ ունի փոքր երկրի փորձի հետ:

Սովորում եմ շվեդական դպրոցում: Իրենա Էլեմարի հետ աստիճաններով բարձրացանք նրա դասարան: Դասի զանգն արդեն հնչել էր. երեխաները փակ դասարանի մոտ հանգիստ կանգնած սպասում էին ուսուցչուհուն: Վարդագույն, մանուշակագույն, դեղին բլուզներ: Շվեդ երեխաները կյանքի գույներ են: Երեխաները հանեցին իրենց կոշիկները և միայն նասկիներով, գրեթե բոլորինը սպիտակ, մտան դասարան: Հատակը ծածկված էր սովորական լինոլիումով, բայց մաքուր էր: Դասի վերջում տասնմեկ տարեկան աղջիկների և տղաների նասկիները այդպես էլ սպիտակ էին մնացել: Ուսուցչուհին մաթեմատիկայի դասը սկսեց փայլելով: Ես մտքում ձևակերպեցի ամենապարզ բանաձևը՝ պայծառություն + մաքրություն հավասար է դպրոց: Եվ իհարկե, կրթություն: Երեխաները նստել էինչորս հոգու համար նախատեսված սեղանների շուրջ: Ուսուցչուհին երեխաներին մեր մնան շարքերով նստեցնում է միայն այն դեպքում, երբ դժգոհ է դասարանից, որպես պատիժ: Այն, ինչը մեզ մոտ միշտ է, շվեդների մոտ պատիժ է: Երեխաները սովորում էին միասին, հետո սկսեցին վարժություններ լուծել, ստուգում էին պատասխանները: Ում մոտ չէր համընկնում, մոտենում էին ուսուցչուհուն: Երեխաները հետզհետե փոքր-ինչ չարաճճիացան, երեք աղջիկ երգեցին, քանոն, մատիտ և ռետին զենքերով վարժությունը լուծեցին (Շվեդիայում երեխաները հաճախ գրում են մատիտներով և ուղղում, եթե սխալ է, դա արգելված չէ):

Լուծում են վարժությունները և երգում ուրախությունից: Այնպես տարօրինակ է: Հետո ուսուցչուհին ուշադրություն դարձրեց նրանց, ինչ-որ բան ասաց ոչ խիստ, աղջիկները դադարեցին երգելը և դասարանը կենտրոնացավ ուցուցչուհու վրա: Դպրոցական կարգապահությունը կարգ չէ, ինչպես հաճախ մտածում են. դա թեթև անցում է կարգապահությունից անկարգապահության և հակառակը:

Էլ ինչ ասեմ շվեդական դպրոցի մասին, այն ամենից հետո, ինչ ասվեց: Այն սովորեցնում է առանց գնահատականի և երեխաներին չի բաժանում ըստ ընդունակությունների: Խոսեմ դասագրքերից: Ուսուցչուհի Իրենա Էլեմարի տրամադրության տակ կա չորս գիրք, որ հեշտ լինի երեխաներին մաթեմատիկա սովորեցնել: Մեկը՝ պատկերազարդ գիրք, որը պատմում է ինչ-որ դոկտոր Պյուսի արկածների մասին, բայց աշակերտներին տանում է մաթեմատիկայի թագավորությունով: Բոլոր խնդիրները կենդանիների մասին են, բոլոր էջերում թափառում են ակնոցավոր օձեր, նույն տիպի պահանջով՝ չափիր: Եթե օձ է նկարած, ուրեմն՝ չափիր:

Մյուս գիրքը ուսուցչի համար է, նույն գիրքն է, բայց ոչ գունավոր(տնտեսման համար), դաշտերի վրա էլ ուսուցչական խորհուրդներ են:

Հաջորդ գիրքը նորից երեխաների համար է՝ բարակ տետր՝ բոլոր խնդիրների պատասխաններով և օրինակներով: Դրանք առանձին են տպում. երեխաներին երբեմն թույլ են տալիս օգտվել պատասխանները ստուգելու համար, իսկ երբեմն չեն թույլատրում: Եվ վերջապես չորրորդ գլխավոր գիրքը՝ երեք մաս հաստության մաթեմատիկական օգնություն ուսուցչին: Չորրորդ դասարանի մաթեմատիկայի յուրաքանչյուր դաս մանրամասն նախագծած է՝ լրացուցիչ նյութեր և թեստեր, գիրքը զսպանակով է ամրացված այնպես, որ համապատասխան դասի կարևոր նյութերը կարելի է վերցնել և գնալ դասարան, հեշտությամբ հանվում են, վերցրու և մտիր դասարան, պետք չէ ոչ մի պլան, ոչ մի նախապատրաստում: Ամեն ինչ կա: Ամեն ինչ տրված է մեթոդիստ ուսուցչին: Պատկերացնում եմ քննադատ երեսներին ուսուցիչներին«... իսկ մանկավարժական ստեղծագործությունը», և գնացին պերճախոսելու: Գնացին ճառելու այն թեմայով, որ ամեն ուսուցիչ ստեղծագործող անձ է: Տեր Աստված, ինչպես եմ ստում ես այդ հռետորներին:

Տեր Աստված, պատժիր նրանց, խնդրում եմ: Եվս մի քիչ և նրանք այնքան կխոսեն մինչև ուղեղների մթազնումը:

Ընդ որում ուսուցչուհի Իրենա Էլեմարը հուշելու ձեռնարկից չի օգտվում, նա դասավանդում է քսանհինգ տարի և նրան ավելի հետաքրքիր է դասը ինքնուրույն հայտնագործել:

Շվեդիան մանկավարժական հայտնագործությունների երկիր է:

Սովորում եմ չեխական դպրոցում

Սովորում եմ չեխական դպրոցում՝ գերազանց ուսուցչի մոտ: Ամբողջ աշխարհում նա գուցե միակն է, որ հասկանում է, թե ինչի համար է երեխաների ուսումը՝ մարդուն սեփական ինքնությանը հասցնելու համար (նա է այդպես ասում): Նրա ստեղծած դպրոցում դասավանդում են՝ խստորեն պահպանելով նրա կողմից սահմանված երեք կանոն՝ հստակ, արագ և հետաքրքիր:

Այնտեղ տեսնում են մտքի հնարավոր արատները՝ ցրվածություն, քարացածություն, մեթոդի բացակայություն, և գիտեն այդ արատները բուժելու դեղերը: Այնտեղ հասու են ներշնչանքի արվեստին: Այնտեղ համառորեն սովորեցնում են փնտրել ճշմարտությունը և միաժամանակ հիշել, որ զգացմունքները կարող են խաբել, որ գիտակցությունը ոչ միշտ է հուսալի, որ հեղինակությունը ճշմարտությամբ պետք է ստուգվի, իսկ ուրիշ մարդկանց փաստարկները պետք է մանրամասն վերլուծվեն: Այնտեղ պատմությունը սովորեցնում են՝ նկատի ունենալով, որ նպատակը մարդկային գործողությունների ինքնահաշվետվությունն է, և օգուտը՝ հաճույքը, գիտակցության աճը, վեհ գործերի ցանկությունը: Այնտեղ սովորեցնում են կարդալու արվեստը, սովորեցնում են մարդկանց խելամիտ վերաբերվելու և հարաբերվելու արվեստը: Այնտեղ պրագմատիկ խրատներ են տալիս՝ գործ չստանձնես, եթե փորձ չունես, գործը չվստահես մեկին, որը դրան անսիրտ է վերաբերվում:

Այնտեղ ինձ և ուրիշ աշակերտների սովորեցնում են զրկանքին դիմանալու արվեստը՝ սովին, ցրտին, տապին անցավ դիմանալու: Էլ ինչե՛ր, ինչե՛ր... Այնտեղ «տատոտեխնիա» են դասավանդում: Չե՞ք լսել: Դա ցանկացած բան կարգի բերելու արվեստն է: Այնտեղ սովորեցնում են հասուն տարիքում, ծեր ժամանակ ապրելու և անգամ մեռնելու արվեստը:

Չեխական դպրոցում ինձ նաև սովորեցնում են, որ աշխարհի լավագույն դրվածքը մարդկությանը վերից չի տրվի. դա միայն ոչ մեկի կողմից և ոչնչով չսահմանափակվող մարդկային կամքի գործը կարող է լինել: Այո, իհարկե, աշխարհի համընդհանուր վերափոխումը նման է երազանքի և երազի (ինձ այդպես են սովորեցնում), բայց դա անպայման կլինի, որովհետև վերափոխման համար աշխարհում ամեն ինչ արդեն պատրաստ է. ընդամենը պետք է հաղթահարել գլխավոր խոչընդոտները՝ հոգու հետամնացությունը, անհոգությունը, ուղեղի ծուլությունից ծնված նախապաշարմունքները, համառությունը և կույր ձգտումը:

Այնտեղ ի՞նչ են խոսում աշխարհի հնարավոր վերջի մասին: Ոչ, իմ ուսուցիչն ինձ սովորեցնում է, որ աշխարհը և մարդկության պատմությունը ոչ մի դեպքում չեն կարող ավելի վաղ ավարտվել, քան աշխարհի վերափոխումը և այնտեղից չարի արտաքսումը կլինեն: Այո, 300 տարի առաջ դա կարող էին սովորել Յան Ամոս Կոմենսկուց՝ բոլոր ժամանակների և ժողովուրդների մանկավարժներից հզորագույնց (1592-1670):

Չեմ կրկնի մտքի սովորական ընթացքը և ընթերցողին ցույց չեմ տա վաղուց գրված բառերի հրատապությունը, չեմ գրի «Դեռ Կոմենսկին...». նման արտահայտությունների մեջ ի՞նչ է նշանակում «դեռ»: Դեռ Կոմենսկին, դեռ Պլատոնը, դեռ Ուշինսկին... Մենք բոլորս ապրում ենք մեկ աշխարհում և մեկ ժամանակի մեջ. և ես այսօր, այս տարի, իրապես սովորում եմ Կոմենսկու դպրոցում. նա հենց այնպիսին է ստեղծել դպրոցը, ինչպիսին դա այսօր է: Գուցե միայն նրանում այդ առանձին առարկան չկա՝ «տատոտեխնիան», և դրա համար էլ դեռ հեռու է կարգավորված լինելուց: ...Նորից 6 տարեկան եմ, անունս Յան է: Ունեմ իմ տեղը, ինձ համար նստարանիս դրված

են անվճար մատիտներ, ալբոմներ, տետրեր, քանոն, «Կենդանի այբուբեն», իսկ ուսուցչուհին շատ ցածր ու բարի ձայնով խոսում է՝ թեթևակի թեքվելով դեպի երեխաները:

Ուսուցչական ձայնը, դրա տեմբրը. ասի ամբողջը: Խորհրդային հայտնի նորարար-մանկավարժ Դմիտրի Օգորոդնովը, մարդ, ում բոլոր երեխաները երգում էին հրեշտակային ձայնով, ցույց տվեց, որ եթե առաջին ուսուցչուհին սուր ու տափակ ձայն ունի, ապա ամբողջ դասարանի երաժշտական լսողությունը փչանում է, և ընկնում են բարոյական արժեքները. երեխաներն ավելի հաճախ և ավելի վայրենի են կոչվում: Մանկավարժական ինստիտուտ, հասկապես ուսումնարան, որտեղ փոքրերի հետ աշխատելու են պատրաստում, ընդունելիս անհրաժեշտ է ստուգել ընդունվողի ձայնը և անդուր տեմբրով մարդկանց չընդունել, ինչպես կարճատևներին բալետի դասարան չեն ընդունում:

Չեխական դայլայլուն լեզուն կարծես հատուկ դպրոցական ուսուցչուհիների համար է ստեղծված, և գուցե այդ պատճառով Եվա Սեմելովան, որի մոտ սկսեցի սովորել, ինձ իդեալական մանկավարժ թվաց: Նրա ձայնը կարծես դաստիարակչական թանկարժեք գործիք լիներ, և նա դրան հանճարեղորեն էր տիրապետում: Նախկինում միայն Թիֆլիսում՝ Շավա Ամոնաշվիլու դպրոցում էի հանդիպել նման ուսուցիչների:

Դպրոցի տնօրեն Միլադա Ելինկովան, ի տարբերություն այլ երկրների իր գործընկերների, իր խնամակալության տակ չառավ հյուրերին՝ խնդրեմ, գնացեք, ուր ուզում եք: Այսպես, իմ ուղեկցորդի՝ փիլիսոփայության պրոֆեսոր Ալեքսեյ Բեխտինի հետ հայտնվեցինք 8-րդ դասարանում, որտեղ դասը վարում էր երիտասարդ մի ուսուցչուհի, որն այլ դպրոցից էր եկել այստեղ: Դա նրա առաջին դասն էր նոր տեղում, և խոստովանում էս՝ դպրոցի այդքա՛ն բաց լինելը զարմացրեց ինձ: Մեր երկրում ոչ մի դեպքում չէին թողնի նոր ուսուցչուհու մոտ. բա որ հանկարծ խայտառակի դպրոցը: Մանկավարժական սնապարծությունը՝ միշտ և ամեն ինչում բոլորից լավը երևալու ձգտումը, կկործանի մեր դպրոցը, եթե դրան վերջակետ չդրվի: Եթե խոսքով է աշխարհում ամենալավը, գործնականում կարող է և վատագույնը լինել: Եվ ի՞նչ փաստարկ է՝ «Բայց տունը մաքրում եք հյուր ընդունելուց առաջ, չէ՞»:

Այո, մաքրում եմ, բայց հարևանի կահույքը քարշ չեմ տալիս մեր տուն: Իսկ մի անգամ անզգուշորեն խնդրեցի քաղաքային ղեկավարությանը, որ որևէ դպրոցում բնագիտության լավ դաս լսեմ, շրջանի բոլոր դպրոցներից բնագիտության կարփնետ էին բերել թռչունների խրտվիլակները, որ յուրաքանչյուր նստարանին լինի: Դիտողականություն են ապահովել: Ըստ Կոմենսկու, ի դեպ: Դիտողականությունը նա է ներդրել: Բայց դժվար թե նրա մտքով այսպիսի բաներ անցնեին:

Ինչպե՞ս են վարվում երեխաների հետ, ի՞նչ ենք անում մեր երեխաներին:

Սակայն վերադառնամ դասին: Ութերորդիները՝ տղա ու աղջիկ, ճիշտ և ճիշտ մեր

ութերորդիների նման էին, և նույնպես դասարան էին եկել, կարծես մեծ պատիվ էին արել դպրոցին, և մերոնց նման պայուսակների փոխարեն մոմլաթ տոպրակներով էին և խաղաղարար թագավորների մասին ուսուցչի պատմությունն էլ կեսականջ էին լսում: Իսկ առաջին նստարանի անընդհատ շուռ ու մուռ եկող տղան այնքան բարկացրեց ուսուցչուհուն, որ նա սկզբում ասաց. «Մի՛ պտտվիր, թե չէ կուղարկեմ տնտեսվարի մոտ, որ քեզ համար ինչ-որ գործ գտնի», իսկ հետո, երբ սպառնալիքը չօգնեց, սիմվոլիկ հասցրեց ծոծրակին. «Դե, հանգստացի՛ր վերջապես»: Դեռ շատ կտանջվի այդ տղայի հետ: Իսկ գուցե ընկերներ դառնան. առաջին դասին ինչե՛ր ասես լինում են: Լավ ուսուցչուհի էր, նրանցից, ում ուժեղ են համարում, և իր պատմությունը նա վարպետորեն կառուցեց, հասցրեց մինչև մեր օրերը ու վերջացրեց այսպես.

- Գորբաչովն այն մարդն էր, որին աշխարհը սպասում էր:

Երեխաները ձգվեցին, լրջացան: Ուսուցչուհին վերջ ի վերջո կարողացավ «ներխուժել» նրանց ուղեղիկները, որ չգիտես ինչով էին զբաղված: Դասարանում ինչ-որ բան կատարվեց: Բա դասից ի՞նչ է պահանջվում: Պետք է, որ ինչ-որ բան պատահի, թեկուզ մի ակնթարթ: Ահա թե ինչու են ուսուցիչների համար վտանգավոր հիմար ստուգողները: Ցանկացած տեսուչ կգրեր, որ երեխաները պասիվ էին, ինչքան էլ ուսուցչուհին չարչարվեց, չկարողացավ նրանցից պատասխան կորզել, որ նրա պատմությունը լիովին տրամաբանական չէր, որ դասարանում դիդակտիկ նյութեր չկային: Կգրեին, և ցտեսություն, ուսուցչի հեղինակություն, դե՛, հիմա գնա՛ ու արդարացիր....

Իսկ իրականում դասն ստացված էր:

Այսօր չեխական դպրոցում եմ սովորում, և այդ պատճառով էլ բոլոր աշակերտների հետ միասին դասի ժամանակ հենց դասարանում ռադիոյով լսում եմ կրթության, երիտասարդության և ֆիզիկական դաստիարակության նախարար, ակադեմիկոս Կարել Յուլիշի սեպտեմբերմեյյան ճառը:

Տարիների փորձն ինձ սովորեցրել է սեփական նախաձեռնությամբ լուսավորության ղեկավարներին չմոտենալ, առանց հրավերի չգնալ: Թվում է՝ հողվածիս համար հարցազրույց է անհրաժեշտ, բայց, չէ, չեմ գնա: Այդ մարդկանց չեմ հասկանում: Երբ մանկապարտեզում խոսում եմ երեխաների հետ, ջանում եմ հասուն մարդու տոնը պահել, այլապես ինձ չեն հասկանա: Ժողկրթաժվարի կամ ավելի բարձր պաշտոնյայի սենյակում սարսափով զգում եմ, որ սկսում եմ խոսել սվսվացնելով, համարյա թե շշուկով, այլապես նրանք ինձ չեն հասկանա: Նրանք սովորաբար բավականին լավ կազմակերպիչներ են և որպես օրենք՝ փորձառու քաղաքագետներ: Բայց երբ գործը հասնում է մանկավարժությանը, հազվադեպ բացառությամբ մանկապարտեզի ոչ լավ դաստիարակչուհու մակարդակ են ցուցաբերում, եթե ոչ սանի: Ինչու է այսպես՝ չգիտեմ: Քանի տարի է՝ դպրոցական գործի եմ, հավանաբար 40 տարի, խելացի ուսուցիչների եմ տեսել, շատ խելոք տնօրենների, իսկ լուսավորության մի քիչ ավելի բարձր պաշտոնյաները դժբախտություն են:

Դե, երկու-երեք իրոք խելացի մարդու ամբողջ կյանքիս ընթացքում հանդիպել եմ, բայց նրանց էլ վաղուց են կերել: Համակարգ է:

Ների՛ր, ընթերցո՛ղ: Ծառայության բերումով այսօր չեխական դպրոցում եմ սովորում, բայց մտքով տանն եմ. ես էլ եմ կառուցված, ինչպես բոլորը: Նախանձ մարդ չեմ, բայց երբ այստեղ՝ արտասահմանում, ինչ-որ լավ բան եմ տեսնում, մտածում եմ՝ ինչու մեզ մոտ այսպես չէ: Մի՞թե այդքան դժվար է, որ ուսումնական տարվա սկզբին լուսավորության աշխատողները երեխաներին և ուսուցիչներին դիմեն մարդկային բառերով: Ահա, թե ինչ էի մտածում՝ ռադիոյով չեխ նախարարին լսելիս:

Իսկ նա ամենասովորական բաներից էր խոսում. ասում էր, թե շտապելն ինչ վտանգավոր է դպրոցի համար, որ էթե երեխան ամբողջ օրը լարված է (արդյոք ամեն ինչ հասցրե՞լ է), չի կարող նորմալ զարգանալ, որ դպրոցում բացասական երևույթների մեծ մասը շտապողականությունն է ծնում: Ավելի ուշ ես եղա չեխական գյուղական դպրոցում, և տնօրինուհին մի այլ առիթով ասաց. «Վաղուց այսպիսի նախարար չեինք ունեցել»:

Ես հոգոց հանեցի: Մեր լուսավորության ներկա ղեկավարներին անկեղծորեն ցանկանում եմ, որ մեր գյուղական ու քաղաքային դպրոցներում նրանց մասին էլ այսպես ասեն:

Այսպիսով, նախարարությունում չեմ եղել և պաշտոնական հարցազրույց չեմ վարել, բայց գրեմ, թե դպրոցում ինչն էր լավը: Բոլորը դպրոցում են սովորել, կարելի է ամեն մեկից էլ հարցազրույց վերցնել, և մտածելու տեղիք է տալիս, որ Սևերամորովսկի մարզի Կրշիշտյանովիցե գյուղի վարժարանն ավարտած թարգմանչուհին պատմում է, որ ընդունելության քննություններին ինստիտուտի դասախոսները, իմանալով, որ ինքը ծայրամասային վարժարանից է, հարցեր չեն տվել և ընդունել են: Չեխական ծայրամասային վարժարանում ավելի լավ են սովորեցնում, քան մայրաքաղաքինում: Իսկ Պրահայում ուսուցիչներին ավելի բարձր են վարձատրում (ինչպես մեզ մոտ՝ հյուսիսում աշխատողներին): Մայրաքաղաքում է կյանքը դժվար, բնակարանները՝ թանկ:

Հարյուր տարուց ավելի է, որ Չեխիայում կրթությունը պարտադիր է, Չեխիայում դպրոցի պաշտամունք կա. դպրոցում չեխական լեզուն վերածնվել է, դպրոցում է, կարելի է ասել, կազմավորվել ազգը և նրա մշակույթը: Հասարակությանը դպրոցական դաստիարակությամբ վերադաստիարակելու Կոմենսկու գաղափարը միշտ եղել է չեխակական հասարակական գիտակցության մեջ: Երկար ժամանակ կրթական սխեման այսպիսին էր՝ 3+3+ վարժարանային 8 տարի: 45-ին սովորում էին այսպես՝ ոմանք՝ 5+4 տարի, մյուսները՝ 5+ վարժարանում 8 տարի:

Հետևաբար, միջնակարգ կրթությունը ոչ թե 10, այլ 13 տարի է եղել: Բայց դա այնպիսի կրթություն է եղել, որի մասին շատերն են հիշում ամենաբարի խոսքերով, և այդ ժամանակներից «մատուրիտան», այսինքն՝ միջնակարգ կրթության վկայականը, շատ բարձր է գնահատվում մարդկանց կողմից, իսկ մատուրիտայի ցանկացած

թերագնահատումը մարդկանց համար համարյա վիրավորանք է:

Սակայն սոցիալական տարբեր խավերի տարբեր կրթության համակարգը, իհարկե, ոչ դեմոկրատական համարվեց, և 48-ից հետո առաջին օրենքն ընդունվեց ընդհանուր դպրոցի մասին՝ 5+4 բուլրի համար և 4 տարի վարժարան: Ընդամենը 13 տարի: 1976 թ., ոչ առանց խորհրդային մոդելի ազդեցության, պարտադիր տասնամյա դպրոց հաճախման մասին օրենք ընդունվեց:

Մի կարևոր նրբություն կա: Պարտադիր է ոչ թե միջնակարգ կրթությունը, ինչպես մեզ մոտ, այլ միայն 10 տարի դպրոց հաճախելը: Այստեղ առաջընթացն այն էր, որ աշխատանքի էին ուղարկում միայն տասը տարի դպրոցում սովորելուց հետո:

Խոսում էի չէի նշանավոր գիտնականի՝ նոր համակարգը կազմակերպողներից մեկի հետ: Նա բացատրում էր, որ խոսքը ոչ թե ուսումնառության մեխանիկական կրճատման կամ երկարացման, այլ կուրսերի բոլորովին նոր համակարգի մասին է: Բայց ինչ անես, որ մարդիկ ամեն ինչ յուրովի են հասկանում, որ տեսնում են՝ ուսման որակն ընկել է, և «մատուրիտան» սկսել է ավելի էժան համարվել: Մանկավարժներն անընդհատ դժգոհում են, որ աշակերտները սովորել չեն ուզում, նույնիսկ նրանք, որ ուղեղ ունեն, որ մի ժամանակ շաբաթվա բոլոր օրերին լեփ-լեցուն համալսարանական գրադարանն այժմ կիրակի օրերին փակ է, որ ուսուցիչների հեղինակությունը շատ ընկել է (ավելի ցածր հնարավոր չէ), որ ... բայց նման բողոքների համար ինչո՞ւ արտասահման հասնես:

Խնդիրներ, խնդիրներ... Աշխարհում կա՞ արդյոք առանց խնդիրների դպրոց: Չէիսական դպրոցում սովորելով՝ ես հետևյալ դասը քաղեցի՝ այսպիսի խոշոր սոցիալական վերափոխումների ժամանակաշրջանում բնական է, որ ավելի շատ պետք է մտածենք հավասարության, ընդհանուր դպրոցի մասին: Բայց ժամանակի հետ, նոր դարաշրջանի սկզբում, երբ խելացի գլուխներն ու տաղանդավոր ուղեղներն ավելի թանկ են գնահատվում և ավելի են անհրաժեշտ երկրին և ազգին, երբ առանց Շատ Խելացի Գլուխների ամենուր աղքատություն և հետամնացություն է, գուցե ընդհանուր դպրոցի մտքից պետք է վերջապես հրաժարվել և հզոր ջանքեր ներդնել 2 կարևոր ուղղություններով՝ բոլորի համար դպրոցի զարգացում, դպրոց, որից ժողովրդի մշակույթն է կախված, այն չի կարող 9-10 տարուց պակաս լինել, և ինստիտուտ գնացողների համար դպրոց, որը չի կարող 3-4 տարուց պակաս լինել, այլապես կտուժի բարձրագույն դպրոցը, որի վրա հենվում է առաջընթացը:

Բայց և այսպիսի որոշումը շատ ու շատ նոր խնդիրներ կառաջացնի: Միայն Յան Ամոս Կոմենսկին կարող էր իրեն թույլ տալ իր աշխատանքի վերնագիրը գրել «Մարդկային գործերը կարգավորելու համընդհանուր խորհուրդ»:

«Նովոյե վրեմյա», 1998թ. , № 50

Նվեր մտքեր

«Դպրոցի դաստիարակություն» գրքից

Դպրոցում կա չափելի արդյունք՝ գիտելիքը, և ոչ չափելի՝ զարգացումը: Չափորոշիչներ առաջադրելով՝ հայտարարում ենք՝ դպրոցում կարևորը չափելին է: Եվ այնուամենայնիվ դպրոցում գլխավորը անսահման է:

Փոփոխության կամք է անհրաժեշտ, որպեսզի ինչ-որ բան փոխվի: Ոչ թե դատարկ «կամենում եմ», այլ գործելու կամք է հարկավոր: Երբ այդ ցանկությունն արթնանում է, արտաքին կողմի փոփոխությունը կարող է շատ օգտակար լինել: Նոր բովանդակության մասին երազանքը դեռ շատ է տարտամ: Սակայն ձեր փոխում են, և դա ստիպում է ձգվել և կենտրոնանալ:

Բացատրելու, ապացուցելու և հավատալու կարողություն. ահա թե ինչ պիտի տա դպրոցը: Սակայն դրա համար ուսուցիչների մեջ մեծ փոփոխություն պիտի լինի:

Լավ տնօրենի դեպքում յուրաքանչյուր ուսուցիչ իր լավագույն կողմերով է ներկայանում աշակերտներին: Ինքներդ Ձեզ հարցեք՝ արդյոք դպրոց մտնելով՝ ավելի լավ վն եք դառնում, և կհասկանաք, թե ինչպիսին է ձեր տնօրենը:

Դպրոցում շատ բան կախված է նրանից, թե ինչին են ուղղված տնօրենի հիմնական ջանքերը՝ ոգու պահպանմանը, թե՞ կարգուկանոնի հաստատմանը: Լավ դպրոցում ոգին և կարգապահությունը իրար չեն հակասում: Վատ դպրոցում հանուն կարգապահության ոգին զոհում են: Բայց հակառակը չի լինում. այն դպրոցում, որտեղ ոգին բարձր է, միշտ առկա է նաև կարգուկանոնը:

Եթե ուրիշ դպրոցները չիմանաս, երբեք չես իմանա, թե որ աշխարհում ես, արդյո՞ք ճիշտ ես վարում գործը:

Ներքուստ ազատ մարդկանց դաստիարակելու հիմնական եղանակը համագործակցությունն է, հատկապես այնտեղ, որտեղ համատեղ աշխատանք է արվում:

Իսկ ի՞նչ կլինի, եթե թեկուզ հենց միայն մանկավարժական նկատառումներով ազատությանը վերաբերվենք որպես տաղանդի, նույն մեթոդները կիրառենք, այսինքն՝ առանձնացնենք օժտված երեխաներին, նրանց օգնենք, գովենք:

Երեխաները ոչ թե դաստիարակությունից են փչանում, այլ վերադաստիարակությունից: Նույնը նաև դպրոցն է: Լավ դպրոց չի լինի, եթե չսովորենք սիրել դպրոցը այնպիսին, ինչպիսին կա:

Որպեսզի երեխաները սիրեն դպրոցը և դրա հետ նաև ուսումը, պետք է փոխել ոչ թե կարգուկանոնը, ոչ թե ծրագրերը, ոչ թե ուսուցիչներին, այլ հենց դպրոցի հայեցակարգը:

Թարգմանեց Սուսան Մարկոսյանը

Ինչպես սովորեցնենք այնտեղ, որտեղ ուսումը չեն գնահատում

Ուզում ես ապրել՝ սովորել կարողացիր

Ուսուցիչները բողոքում են՝ շուրջը բազմաթիվ օրինակներ կան, որոնք հաստատում են, որ առանց ուսման էլ կարելի է լավ ապրել: Ուրեմն ինչպե՞ս սովորեցնենք: Ինչպե՞ս սովորեցնենք երեխաներին այնպիսի ժամանակ, երբ երեխաները չեն հասկանում՝ ինչու պետք է սովորեն, երբ անուսումը կարող է տասն անգամ շատ գումար վաստակել ուսյալից:

Հիշեցի Սուխոմլինսկուն. «Մարդը պետք է սովորի նրա համար, որ մարդ է»... Սովորել ոչ ինչ-որ բանի, պարզապես նրա համար, որ դու մարդ ես. մեծագույն առավելություն է՝ մատչելի ոչ բոլորին: Լև Տոլստոյը կարող էր իրեն թույլ տալ թողնել համալսարանը և ձևականորեն մնալ ոչ ուսյալ. նա հպարտանում էր, որ և՛ ինքը, և՛ իր նախնիներն ունեցել են ոչ «հանուն ինչ-որ բանի» սովորելու հնարավորություն: Բայց կարո՞ղ են, արդյոք, բոլոր երեխաներն ուսանել «ոչ մի բանի համար»:

Որոշ երեխաներ իրենց ուսուցիչների հոգին հանում են այն խոսքով, թե, խնդրեմ, հայրս անգամ դպրոցը չի ավարտել, իսկ վաստակում է ձեզնից մի քանի անգամ ավելի, հարգելի ուսուցչուհի:

Եվ իսկապես, ուսուցիչը մեր երկրում ավելի քիչ է ստանում օրավարձու օգնական բանվորից, պրոֆեսորը՝ հավաքարից, և խմբագրական մեկ սենյակի վերանորոգման համար անգրագետ ներկարարին հարկ է լինում վճարելու այնքան գումար, որքան գրական տաղանդավոր աշխատողը չի ստանում անգամ երեք ամսվա ընթացքում:

Ինչու է ուսումն արժեզրկված

Չի կարելի ասել, որ ուսյալներին չեն գնահատում: Կրթված մարդիկ հարգանք են առաջացնում, Ռուսաստանը բարձր մշակույթ ունեցող երկիր է: Բայց վերջին տասնամյակների ընթացքում սովորական մարդկանց կարողացան ներշնչել այնպիսի անհարգալից վերաբերմունք կրթված մարդու հանդեպ, որ դա՛ այդ վերաբերմունքը, չի հաջողվի շտկել անգամ առաջիկա 70 տարիների ընթացքում:

Անհարգալից վերաբերմունք ուսյալի նկատմամբ ներշնչել են երկու մեթոդով:

Նախ՝ պնդել են, որ միայն ֆիզիկական աշխատանքն է իսկական աշխատանք, որ միայն հաստոցի մոտ աշխատողն է աշխատող մարդ, և նրան է պատկանում ամեն ինչ (չնայած նրան ոչինչ էլ չէր պատկանում):

Երկրորդը, և դա ավելի սարսափելի է՝ անհարգալից վերաբերմունք ուսման հանդեպ ներշնչել են նրանով, որ կրթությունը շատ մատչելի էր և էժան գնով էլ մատուցվում էր բոլորին՝ առանց գումարի և ջանքի: Երկրում ուսումը ոչնչացնելու լավագույն միջոցը բոլոր բնակիչներին հասունության վկայական բաժանելն է, այնպես, որ կրթվածի և անկիրթի տարբերությունը վերանա, որ ջնջվեն ֆիզիկական և մտավոր աշխատանքի սահմանները, այսինքն՝ որպեսզի ուսյալ մարդը ոչ մի առավելություն չունենա: Կրթությանը հարվածելու այս երկրորդ մեթոդը հսկայական և սարսափելի հաջողություն ունեցավ: Չէ՞ որ կեղծիք է, թե մեր երկրում պարտադիր

միջնակարգ կրթություն կար:

Մեր երկրում վկայականների պարտադիր բաշխում կար, գլխաքանակի բռնի վկայագրում: Դա նույնը չէ, ինչ կրթությունը. հարկ կա՞ ապացուցելու:

Ես գիտեմ դեպքեր, երբ երեկոյան դպրոցում աշակերտը ոչ միայն չի մասնակցել դասերին, այլև ավարտական քննություններին էլ չի հայտնվել: Եվ, բոլոր դեպքերում, դպրոցը սովել է նրան ատեստատ (գնահատականներով) և հարկադրել խեղճ դասղեկին գնալու այդ կեղծ-աշակերտի տուն և հանձնել (վզին փաթաթել) միջնակարգ կրթության վկայականը. դպրոցին հարկավոր էր վկայական ստացածների անդորրագիրը: Այդ ստացականը դպրոցի հաջող գործունեության հիմնական ապացույցն էր: Եթե խորը մտածենք, ապա այդ ստացականներով էլ աշխատում էին բազմաթիվ ուսումնական հաստատություններ: Աշակերտը դրան մոտ դիմավորում էր ուսուցչուհուն և նրա երեսին շարտում այդ կնքված թուղթը: Տուն չէր էլ թողնում մտնել:

Մոտակա նպատակները

Իհարկե, լավ է ուսուցանել, եթե երեխաները գնահատում են գիտելիքները. բայց, խնդրեմ, չեն գնահատում: Հիմա ի՞նչ: Չի կարելի, չէ՞, չսովորեցնել երեխաներին միայն այն պատճառով, որ նրանք չեն ուզում սովորել: Այնուամենայնիվ պետք է նպատակների փոփոխություն լինի: Հեռահար նպատակները գործուն չեն կամ ոչ միշտ են գործում, նշանակում է, պետք է կենտրոնանալ մոտակա նպատակներին:

Միանգամայն անհեթեթ է դաս սովորելու կոչ անել «Չսովորես՝ կդառնաս հավաքարար» փաստարկմամբ: Միանշանակ անհիմաստ է այսօր քննարկում սկսել «Կթվորուհու ինչին է հարկավոր անգլերենը» թեմայով կամ երեխաներին հավատացնել, որ եռանկյունաչափությունը հարկավոր է խառատին, որովհետև նա այլ կերպ չի կարող սրել հատիչը: Հավաքարարն ակնհայտորեն վաստակում է ավելի շատ գումար, քան ուսուցիչը: Դե, չեն անցնում այս փաստարկները, ինչի՞ համար նորից կրկնեք:

Ակնհայտ է, որ պետք է փոքր-ինչ իջեցնել մեր զրույց-հորդորների նշանաձողը: Ուսուցման ամենատեսանելի նպատակը հաջողությունն է՝ այսօրվա հաջողությունը, ներքին արժանապատվության սատարումը: Ուսումը երեխայի համար որպես աշխատանք կարող է դառնալ գնահատելի, որպես կենսակերպ, որպես այսօրվա նրա գործ:

Քչերն են հասկացել համագործակցության մանկավարժության էությունը. դա այնպիսի մանկավարժություն է, որը հնարավորություն է տալիս թույլ աշակերտներին ինչ-որ բանի հասնելու և իր ձեռքբերումը որպես հաջողություն վերապրելու: Համագործակցության մանկավարժությունը երեխային ոչ թե վաղվա, այլ այսօրվա հավասարության և սեփական արժանապատվության զգացողություն է տալիս. ահա ուսուցման՝ արդի դժվարին պայմաններում հնարավոր ամենաուժեղ խթաններից մեկը: Միայն աշխարհագրությամբ և կենսաբանությամբ չես հարկադրի սովորելու և ամեն մեկին ուսման կողմը չես գրավի:

Դպրոցի սոցիալական կյանքը, ընդհանուր դրությունը, ուսման մեջ հաջողության համընդհանուր ձգտումը այսօր ամեն ինչից թանկ են, չնայած և հենց դասը, նրա ստեղծագործական ուղղվածությունը, հենց երեխաների աշխատանքը կազմակերպելու ունակությունը, որպեսզի յուրաքանչյուրը կարողանա իրեն դրսևորել, չափազանց կարևոր են: Բայց ինչ արած:

Ժամանակները փոխվել են, և դասական «Ինչի՞ս է պետք աշխարհագրությունը, եթե կառապաններ կան» արտահայտությունն ավելի ու ավելի է դառնում ճշմարտացի: Ինքնաթիռ ես նստում, և քեզ նստեցնում-տանում են երկիր մոլորակի քո առաջադրած կետը, և ոչ մի աշխարհագրություն հարկավոր չէ: Ինչո՞ւ է ծավալվում ֆունկցիոնալ անգրագիտությունը: Այն պատճառով, որ նաև անգրագետը կարող է լիովին պատշաճ ապրել: Այն ամենը, ինչ մարդկանց իսկապես անհրաժեշտ է, նրանք ձեռք են բերում: Ուրեմն, այլ գիտելիքներ են հարկավոր, ուրիշ դպրոց է պետք, ուսուցման այլ շարժառիթներ:

Այս ամենը նորություն չէ. դպրոցը մշակել է երեխաներին ուսման տրամադրելու բազմաթիվ մեթոդներ: Ցավոք, մենք դրանցից օգտվելուն ընտելացած չենք, մենք ավելի շատ վարժվել ենք նախատելու 10-ամյա տղային. «Ինչո՞ւ չես սովորում»:

Գլխավորն այն է, որ հետ վարժվենք մեր սիրելի զբաղմունքից, ճակատով պատը ծակելու փորձերից, որ ուղեկցվում են գանգատներով. պատը, չգիտես ինչու, չի ծակվում, իսկ ճակատը տրաքում է:

Ինչպե՞ս սովորեցնենք բոլոր երեխաներին այն երկրում, որտեղ ոչ բոլորն են գնահատում գիտելիքները: Սովորեցնենք նրանց այնպես, ինչպես կարելի է միայն սովորեցնել մի երկրում, որտեղ ոչ բոլորն են գնահատում գիտելիքը, սովորեցնենք այնպես, որպեսզի գոնե ինչ-որ ժամանակ մեր երկրում սկսեն գնահատել գիտելիքը, սովորեցնենք այնպես, որպեսզի նրանք՝ մեր երեխաները, աստիճանաբար վարժվեն գնահատելու գիտելիքը: Չէ՞ որ ամեն դեպքում Վասիլի Ալեքսանդրովիչ Սուխոմլինսկին միանգամայն իրավացի էր՝ մարդը պետք է սովորի նրա համար, որ մարդ է:

Բայց պետք է երեխաներին դա հասկանալու հնարավորություն տանք:

Թարգմանեց Անի Գրիգորյանը

Սոլովեյչիկյան ընթերցումներից

Ռեպորտաժային նյութեր 11-րդ ընթերցումներից. 2007թ.

Որքան տարբեր դպրոցները շատ են, այնքան մոտ ենք երեխաներին

...Եվ ահա Ուսուցչի տան՝ տոնով լեցուն տարածությունն իր դռները բացեց, և կրկին գրկախառնվեցինք, փայլեցինք, զրուցեցինք: Հարյուր անգամ ողջագուրվեցինք, նոր մարդկանց հետ ծանոթացանք, էլի շուրջներս նայեցինք, բեմի ետնամասում Մեմյոն Սոլովեյչիկի ծանոթ դիմանկարը տեսանք, նախաբեմում՝ կիսով չափ դեպի նա շրջված՝ Ալեքսանդր Տուբեյսկու մեծ լուսանկարը: Նա այս տարի կյանքից հեռացավ: Ընթերցումները նրա հիշատակին են նվիրված:

Ինչպիսի՞ դպրոց ենք ուզում կառուցել

Բեմում լարային «Դուլչե-կվարտետը» Վիվալդի, Բախ, Մոցարտ, Բոկերինի է նվագում: Վեհ երաժշտություն է, հավերժական կյանքի տիրույթը: Երաժշտության ներդաշնակությամբ և բարոյական զգացումներով ապացուցվում է ճշմարտությունների և Մեծ Ճշմարտության գոյությունը: Իսկ նրանք, ում համար դա դատարկ վերացարկում է, հրամաններին անսալով են ապրում:

Հիմա դպրոցին սովորեցնում են նորովի հասկանալ, թե ինչ է հաջողությունը. արդյունքների հաշվետվություն է: Իսկ ուսուցիչները տեսնում են՝ «հաջողության դպրոցի» երեխաներն ավելի առողջ են: Հասկանում են՝ պետք է ինչքան հնարավոր է երկար ձգել երեխաների մեջ կենդանությունը պահպանելը: Իհարկե, դա դժվար է, հատկապես առանց արտաքին աջակցության, կոլեկտիվ քննարկումների, որոնցում քեզ համար գլխավորի մասին հարցադրումը հաստատվում է, և խորհելու, քո և այլոց փորձը վերապրելու ցանկություն է առաջանում:

Այս տարի Սուլվեյչիկյան ընթերցումներին Մոսկվա գալը շատ ուսուցիչների համար մեծ հերոսություն անելու նման մի բան էր. դեկավարության նոր դիրքերից «Դպրոցը երեխայի կողմից է» ընթերցումներին մասնակցելը գործուղման կամ իր հաշվին արձակուրդի այնքան էլ ծանրակշիռ պատճառ չէ:

Դա է պատճառը, որ լրագրի 2-րդ և 3-րդ տետրերը այդ օրերի իրադարձությունների լրատվությանն ենք նվիրում՝ փորձելով հնարավորինս մանրամասն ներկայացնել:

Երկու դիմանկար

Ընթերցումները բացելով՝ մեր Հրատարակչական տան գլխավոր խմբագիր Արտեմ Սուլվեյչիկն ասաց.

- Շատ մանկավարժներ են վստահ, որ երեխաների համար են աշխատում, հանուն նրանց և նրանց ապագայի: Միայն թե պարզ չէ, թե ինչու են այնքան շատ այն երեխաները, որոնք դպրոցում դեռ դժբախտ են զգում: Ի՞նչ է ստացվում. Ձգտում ենք երեխաներին երջանիկ դարձնել, բայց հակառակն է դուրս գալիս: Ի՞նչ է կատարվում: Մեր բոլոր նախորդ ընթերցումներն այս հարցին էին նվիրվում: Սակայն այս տարի կյանքից հեռացել է Ալեքսանդր Նաումովիչ Տուբելսկին, մի մանկավարժ, որն իր դպրոցն այնպես էր սարքել, որ երեխայի կողմից լինի: Նա, ինչպես և Մեմյոն Սուլվեյչիկը, պատկանում էր այն սերնդին, որը մանկավարժության մեջ քառու սերմանեց. մեր համահարթված դպրոցները տարբեր դարձան: Իսկ տարբեր դպրոցներով ապրելը դժվար է: Պահ եղավ, որ շատերը ցանկանում էին, որ դպրոցները նորից միանման դառնան, սուր զգացողություն առաջացավ, թե հակառակ կողմն ենք անցել: Սակայն վերընթերցենք Ալեքսանդր Նաումովիչի խոսքը, որ նրա դիմանկարի տակ ենք զետեղել.

«Պատկերացրեք, որ դպրոց եք գալիս: Շեմին ձեզ դիմավորում է պահապանը, դուք անցաթուղթ եք ներկայացնում. ով չի ներկայացնում, տուն է գնում: Մուտքի մոտ դպրոցի տնօրենն է կանգնել և նայում է, թե արդյոք տղաները սանրված են, գլխների բան հո չկա, աղջիկների ականջներին՝ բան չի կախած, ինչպիսի փեշ են հագել, հո պորտը բաց չէ: Եվ բնական է, որ խոտանում էլ կլինի՝ դու հե՛տ գնա, դու առա՛ջ անցիր: Հետո միջանցքով ուսմասվարն է անցնում, ու բոլոր կանչում են.

«Թաքնվի՛ր, թաքնվի՛ր, ուսմասվարը գալիս է»: Ի՛նչ լավ կլիներ:

Ուզում եմ ձեզ ասել, սիրելիներ՛ս՝ ն՛ ես, ն՛ իմ ընկերները, ն՛ իմ ուսուցիչ գործընկերներն այդպիսի դպրոց չենք ուզում, այլապես վաղուց ստեղծած կլինեինք: Դա դժվար չէ, կարգ ու կարգապահություն հաստատելը բարդ բան չէ, մանկավանդ որ այդ մասին մանկավարժական շատ գրքեր են գրվել: Սակայն մենք ուրիշ գրքեր ենք կարդում: Եվ ահա, թե ինչ եմ մտածում. եթե այդպիսի դպրոց չէք ուզում և անկեղծորեն եք «ոչ» ասում, յուրաքանչյուրը մտքում պետք է ասի՝ իմ ներդրմանը, իմ երևակայությանը, իմ գործին կցված դպրոցը թող բարի, խելամիտ լինի : Ճի՞շտ եմ ասում»:

– Դպրոցի տնօրեն լինել և երեխայի պաշտպանը մնալ,- շարունակեց Արտեմ Սոլովեյչիկը,- դժվար գործ է: Դրսից ճնշումը մեծ է. և թվում է՝ անեմ, ինչ խնդրում են, ու լավ կլինի: Դպրոցի ներսում էլ ճնշում կա: Դու ժողովրդավարություն ես կառուցում, իսկ երեխաները կարգուկանոն են պահանջում: Նրանք խոսք ու զրույցից շուտ են հոգնում: Կամ բոլորը մի բան են ուզում, իսկ ինչ-որ մեկը՝ ուրիշ: Ալեքսանդր Նաումովիչը հենց այդ երեխայի մոտ էր գնում, նրան էր խոսք տալիս: Քանզի ինքնորոշումը թիմային չի լինում. դա մեզանից յուրաքանչյուրի մեջ երկար գործընթաց է: Հնարավոր է, որ տասնհինգ տարեկանում լինի, հնարավոր է՝ քառասուն, ինչ-որ մեկն էլ այստեղ՝ այս ընթերցումների ժամանակ դրան կհասնի:

Հասկանալի է, որ միայն բարի ցանկությունները չեն օգնի այնպիսի դպրոց ստեղծելուն, որը երեխայի կողմից է: Սակայն հիմա կրթա-քաղաքական որոշումների մասին չեմ խոսում: Խոսքն այն մասին է, որ շատ բան, որ մեզ ճիշտ է թվում, ոչ ճիշտ ուղղվածություն է պարունակում: Դա համակողմանիության ձգտումն է: Երբ մտածում ենք. «Ինչպե՞ս ավելի լավ անենք», սկսում ենք ելքեր փնտրել, որոնք ցանկացած երեխայի հետ արդյունքի հասնելու հնարավորություն կտան: Չենք մտածում. «Այս երեխային իր զարգացման համար ի՛նչ է պետք»: Եվ տխուր արդյունքի ենք հասնում: Եկեք տարբերենք. կրթական խնդիրների լուծման վարչական եղանակ կա, սակայն նաև մանկավարժականը կա: Առաջինը սովորական է, կարճ, պարզ, ընդհանուր, սակայն անտարբեր է առանձին երեխայի նկատմամբ: Երկրորդը երկար է, ոլոր-մոլոր, ոչ միշտ հասկանալի, դժվար: Սակայն մանկավարժորեն միշտ հաջող է: Ես դրան եմ հավատում»:

Եվ յուրաքանչյուրն ինքն իրեն էր հարցնում

Ընթերցումների առաջին օրվա ծրագրում կարևորվեցին ամերիկացի մակավարժների ելույթները: Յուրաքանչյուրը ներկայացվեց՝ Դեբորա Մայեր, որը ոչ միայն գիտե երեխաներին պաշտպանող դպրոց ստեղծելու ձևը, այլև կառուցել է, աշխատում է այդ դպրոցում, Ջերի Մինց՝ այլընտրանքային կրթական կենտրոնների ընկերացություն ստեղծողը, Բրետ Շլեզինգեր՝ «Քաղաքը՝ որպես դպրոց» շարժման հիմնադիր: Նրանք այն նույն խնդիրն են լուծում, որը նաև մեզ է հուզում՝ ի՞նչ անենք, երբ երեխաները դպրոցից են հրաժարվում, իսկ դպրոցը հրաժարվում է երեխաներից: Այս հարցին ուղղակի պատասխան չկա: Իսկ պատասխան գործողությունը այդպիսի երեխաների կարիքներին համապատասխանող «ուրիշ» դպրոցների ստեղծումը, մեր հյուրերի գործունեության մեջ կա: Սակայն որպեսզի դպրոցական աշխարհ ստեղծվի, որում սովորել չցանկացող երեխաները դեպի կրթությունը ձգվեն, պետք է սրբորեն հավատալ, որ ի սկզբանե բոլոր երեխաներն են սովորել ցանկանում: Եվ եթե սովորելու նկատմամբ երեխաների ձգտումն անհետանում կամ ատելության է վերածվում, դա մենք ինչ-որ բան այնպես չենք անում: «Եթե իրար նման դպրոցներն են շատ, մոլորվել ենք,- ասում էր Բրետ Շլեզինգերը,- տարբեր

դպրոցներն են շատ՝ ուրեմն ավելի մոտ ենք երեխաներին»:

Ջեկուցումներն սկսելուց առաջ «ափին» ելակետային դիրքորոշումների մասին պայմանավորվելը կարևոր էր: Մանկական խնդիրների թնջուկը քրտնաջանորեն, զգույշ քանդո՞ւմ ենք, թե՞ ուժով ավելի ու ավելի ենք ձգում: Երեխաներին ու ինքներս մեզ վստահո՞ւմ ենք, երբ նրանց ուսուցանում ենք, թե՞ ծրագիրն է մեր աստվածը: Պայմանավորվելու, զիջման գնալու պատրաստ ենք, թե՞ միայն պահանջել կարող ենք: Ջեկուցումների ներկայացման ժամանակ յուրաքանչյուր ունկնդրի առաջ անխուսափելիորեն այս հարցերն էին ծառանում, և կար մարդ, որ իր մեջ պատասխան էր գտնում ու մնում էր, գնում էր ավելի մոտ տեղ գտնելու, մյուսն էլ շտապում էր հեռանալ:

Շավվա Ամոնաշվիլին խոսք վերցրեց. «Այսօր այստեղ կրթության մեջ հրաշք գործելու ձգտող մարդիկ են հավաքվել: Միմոն Սոլովեյչիկը, Վլադիմիր Մատվենը, Ալեքսանդր Տուբելսկին այդպիսիք էին: Դահլիճում Սոֆյա Լիսենկովային եմ տեսնում, հայացքով փնտրում եմ Շատալովի, Շետինինի հետևորդներին, Տուբելսկու դպրոցից շատ մարդ կա, իսկ ինչքա՞ն նոր, երիտասարդ դեմքեր կան: Բոլորիդ ուզում եմ ասել՝ կրթության մեջ հրամաններով ու կարգադրություններով ոչինչ չես անի: Ոչ թե ղեկավարությունն է նորացնում կրթությունը, այլ մեր սիրտը»:

Ժողովրդավարական մանկավարժության կերպարները

Հետո զեկուցումներ սկսվեցին: Ինչպե՞ս դպրոցում երեխաներին պաշտպանենք: Ինչպե՞ս դպրոցը երեխայակենտրոն դարձնենք: Այս մասին էր խոսում Նյու-Յորքի համալսարանի մանկավարժական ֆակուլտետի պրոֆեսոր, Բոստոնի Mission Hill դպրոցի տնօրեն, «Չափորոշիչները կրթությունը կփրկեն ն», «Դպրոց, որին վստահում ենք: Թեպետի և չափորոշիչների դարաշրջանի կրթություն», «Լքված երեխաներ» գրքերի հեղինակ Դեբորա Մեյերը: Նրա գրքերը դեռևս ռուսերեն թարգմանված չեն, սակայն հեղինակի դիրքորոշումը նրա կրքոտ խոսքից հասկացվում էր. ցանկացած պայմաններում դպրոցում երեխայի համար շատ բան կարելի է անել, եթե մանկավարժը երեխայի պահանջմունքները տեսնում է, նրա կոչը լսում է, նրա համար պայքարում է: Նրա հնչերանգը լսելով, ժեստերը հասկանալով, հումորի համար ծափահարելով՝ չես կասկածում՝ Դեբորան մանկանց աշխարհի մարդ է: Նա պատրաստակամորեն է մասնակցում մանկական ցանկացած խաղի, ամենատարբեր զբաղմունքներ է ներմուծում դպրոց, շատ արհեստների է տիրապետում: Եվ երբ ընդմիջման ժամանակ ունկնդիրները տպավորություններն էին հաղորդում, պարզվեց, որ մարդկանց հոգին ամենից խոր թափանցել է նրա այն դատողությունը, թե փորձագետի կամ մեթոդիստի դիրք զբաղեցնող ուսուցիչն այլևս ուսուցիչ չէ, նա այլևս երեխաների աշխարհի մեջ չէ: Դա մասամբ բացատրում է այն պարադոքսալ փաստը, որ ընդունվող քաղաքական-կրթական որոշումները, որպես կանոն, երեխայի հարցում սխալ են լինում:

Թե ինչպես օգնեն այն երեխաներին, որոնցից դպրոցը հրաժարվում է, պատմում էր դպրոցի տնօրեն Ջերի Մինցը՝ Ժողովրդավարական կրթության միջազգային կոնֆերանսի հիմնադիրներից մեկը:

Զրույցի այն պարզությունն ու թեթևությունը, որ նա առաջին իսկ բոլորներից ցուցաբերեց, ունկնդիրներից շատերի համար անսովոր էր: Կես ժամ անց մանկավարժական քոլեջի՝ կողքիս

նստած ուսանողը հարցրեց. «Արժե՞ք, որ օվկիանոսը կտրեր գար, որ իր և երեխաների մասին այս սովորական պատմությունները պատմեր: Ի՞նչ պիտի տանենք այստեղից»:

Այո, չենք սովորել լսել մարդուն, երբ նա պատմում է այն մասին, ինչն իրեն այդ պահին հուզում է: Մեզ հետևություններ, դատողություններ, հեղինակություններին հղումներ են պետք: Իսկ ինչո՞ւ բանական վարքի այլ ձևը չընդունենք: Ինչո՞ւ սեփական «դատողական ուժը» չլարենք: Օրինակ՝ Ջերի Մինցին ուղղված իմ ներքին հարցը վերաբերում էր այն բանի գիտակցմանը, որ Ռուսաստանում այլընտրանքային, մանավանդ ընտանեկան դպրոցները չափազանց դանդաղ են զարգանում, սակայն պետական դպրոցներում աշխատող շատ մանկավարժներ ժողովրդավարական կրթության արժեքներն ընդունում են: Ուսուցիչը մենակ շա՞տ բան կարող է անել: Ընդմիջմանը իմ հարցը տվեցի և պատասխան ստացա. «Ուսուցիչ. սա արդեն ահագին բան է: Կարևորը աշակերտի նկատմամբ անտարբեր չլինելն է, չէ՞ որ միայն նրա նկատմամբ սերն ու ուշադրությունն են ուսուցչին օգնում, որ համակարգին դիմակայի: Երկրորդը նրան որպես անհատականություն ընդունելն է: Գիտե՞ք՝ հենց որ դա ստացվում է, մանկավարժի՝ ինքն իրեն թերագնահատելու միտումն սկսում է պակասել: Դա ամենուր այդպես է: Մի բան էլ. շատ-շատ մեծ գործ է, եթե իր դասարանի շրջանակում ուսուցիչն այնպիսի իրավիճակներ է ստեղծում, որ երեխան գգում է, որ ինքն է որոշում ընդունողը: Այդպիսի իրավիճակներն ամբողջ կյանքն են երանգավորում, քանի որ մարդուն օգնում են, որ սեփական անհատականությունը հասկանա: Մի բան է պետք՝ անհատականությունն ընդունե՞ք և իրավունքները մի՛ խլե՞ք»:

«Քաղաքը որպես դպրոց» շարժման հիմնադիր Բրետ Շլեզինգերը ողջ աշխարհի մանկավարժներին է հայտնի: «Քաղաքը որպես դպրոց» շարժման փորձից է առաջացել «Արդյունավետ կրթություն» հզոր շարժումը. այսօր կրթության մեջ դա ամենադինամիկ և ակտիվ զարգացող նորարարությունն է: Նա դատողություններ էր անում այն մասին, թե ինչպիսին պիտի լինի կրթությունն այն դեռահասների համար, որոնք ոչ մի տեղ չեն ուզում սովորել: Լսելով նրա պատմություններն այն մասին, թե երիտասարդ մարդը փորձի, մասնագիտական փորձառության միջոցով ինչպես է կրթության անհրաժեշտության գիտակցմանը հասնում, ընդ որում ընտրում է հենց այն, ինչի համար ինքը կարծես ի վերուստ ստեղծված է, հիշում ես մասնագիտական կողմնորոշման աշխատանքի մեր լավագույն օրինակները: Երբ քաղաքը դեռահասներից չի վախենում, ձեռնարկությունները նրանց համար աշխատատեղեր են բացում, իսկ դպրոցը, կրթության բաժինը այդ բարդ գործընթացները համակարգելու համար ջանք չեն խնայում: Սակայն այդպիսի օրինակները քիչ են: Դրա պատճառն այն չէ՞, որ գլխավոր գծով գործելուն, ընդհանուր հրամաններից ելնելուն ենք վարժվել՝ հույսներս միայն «լավ ղեկավարների» վրա դնելով, որոնք «հանկարծ հայտնվելու» և ամեն ինչ կարգավորելու են:

Ընկալման նրբություններ

Եվ դա՞ չէր պատճառը, որ զեկուցման կեսից մարդիկ հանկարծ վեր էին կենում և հեռանում, դուրսուներս էին անում:

- Մնալ չեք ուզո՞ւմ:

- Քանի գնում, ավելի տխուր է դառնում: Չեմ դիմանում. տասնհինգ րոպե համաձայնում եմ զեկուցողի հետ, տասնհինգ րոպե նրա վրա չարանում եմ: Նրանք ո՞ւր, մենք ուր: Ապա՛ մեր քաղաքում (Սամարայի մարզից եմ) դրա նման մի բան փորձիր: Կուլ կտան: Ու չգիտեմ՝ ի՞նչ պիտի լինի, որ մեր հասարակությունն այս անաբիոզից դուրս գա: Ներքուստ համաձայն եմ այն ամենի հետ, ինչ այստեղ ասվում է, իսկ գործնականում սա ի՞նչ է նշանակում: Չեմ հասկանում,

թե ինչպես կարելի է այլ կերպ սովորել ու ապրել, եթե ոչ ըստ «Գործն արել էս, հանգիստ քեֆ արա» ռուսական ասացվածքի:

Շատ գործող մանկավարժներ էին այս դրամատիկական բախումից տառապում: Թեև ոչ բոլորն էին ավելորդ զգացմունքայնությունից դահլիճը լքում:

- Սոլովեյչիկյան բոլոր ընթերցումներին ենք եղել, և այսօր այստեղ առանձնապես լավ ենք զգում, - ասում էին Իվանովոյից եկած ուսուցիչները, - որովհետև ութսունականներից և՛ Սոլովեյչիկին, և՛ Գազմանովին ենք լսել, նրանց հետ յուրացրել համագործակցության մանկավարժությունը, ուսուցիչ-նորարարների շարժմանը մասնակցել, և՛ Ջերի Մինցին, և՛ Բրետ Շլեզինգերին գիտենք, այնպես որ ինչ այսօր այստեղ խոսվում է, մեզ հասկանալի և հարազատ է: Բայց նա, ում համար երեխայի հետ աշխատանքը դեռ ֆանտաստիկա է, փախչում է:

Իսկապես, դեռ մեր ոչ մի միջոցառումը մտքերի և տպավորությունների այսպիսի խայտաբղետություն չէր առաջացրել: Ոչ մեկն անտարբեր չէր՝ տեսաբաններն ու գործող մանկավարժները, կրթության ղեկավարներն ու ուսանողները, պարզապես ծնողներն ու ինչ-որ ձևով այստեղ հայտնված տուրիստական ֆիրմաների մենեջերները:

Մեփական ինչ-որ բանի մասին

Իսկ հետո բոլորին միավորողը եղավ՝ և՛ դպրոցական ժողովրդավարության մասին Ջերի Մինցի, Բրետ Շլեզինգերի ու Դեբորա Մայերի մասնակցությամբ «կլոր սեղանը», որը քիչ էր մնում «Ռեկոորի» նման համր տեսարանով վերջանար, երբ մի պահ թվաց, թե իսկապես «ուրիշի զգեստով» ենք, ուրիշի դերում, և՛ Թոֆիկ Շահվերդիևի «Ալեքսանդր Նաումովիչը և իր երեխաները» վավերագրական ֆիլմը: Դրա մեջ նույնպես յուրաքանչյուրը տեսնում էր սեփական ինչ-որ բան, սակայն ցանկացած առանձին «ինչ-որ բանը», անշուշտ, բոլոր մյուսների հետ հարազատական կապ ուներ:

Նրա՛ դպրոցը

Ընթերցումների երկրորդ օրը «Ինքնորոշման դպրոց» ԳՄՄ-ի համագործակցային վարպետ-դասարանները բացեցին: Դպրոցի մանկավարժները «երեխայի կողմից դպրոցի» երեք նախագծի կազմակերպում ներկայացրին՝ ստորին աստիճանի, միջինի և ավագի համար:

Եթե ամերիկացի գործընկերները նախօրոք էին տեղավորված խմբերում, ապա մեր մանկավարժների համար ընտրությունը հեշտ չէր. ամեն ինչն էր կարևոր: Այս անգամ այստեղից-այնտեղից մտքերի պատառիկներ փախցնելն անհնար էր. ամենուրեք ըմբռնման գործընթացն էր եռում՝ ոչ նույն, սակայն կայուն կառուցված, գրագետ կազմակերպված: Տարբեր կարգի ներկայացումներում ներգրավված ուսուցիչներն ազահորեն որսում էին տեղի ունեցածը: Ծավալները: Ենթատեքստերը: Ընկալման հստակությունը: Փոխադարձությունը: Այն ամենը, ինչ մեզ ազատ և ուժեղ է դարձնում, սակայն մեր դպրոցում չունենք:

Ընդմիջման զրույցներից դատելով՝ միայն Տուբելսկու դպրոցի մանկավարժներին նախանձելը չէր. «Ինչ-որ բան էս էլ եմ հենց այսպես անում, ուղղակի ոչ ոք չի ասում, թե ճիշտ եմ անում, ընդհակառակը, նախատում են: Դե, հիմա արդեն գիտեմ՝ ինչ պատասխանեմ»... «Չենց դպրոց

հասնեմ, ավագ դպրոցում ինքնորոշվելու մասին զեկուցում կանեմ, համենայնդեպս հիմա պատրաստ եմ ուսուցիչների հետ այս թեման քնարկելու»... «Իսկապես, երբեք միջին տարիքի դեռահասների մասին չենք մտածում, ամբողջ ուշադրությունը փոքրերի և շրջանավարտների վրա ենք կենտրոնացնում: Իսկ այստեղ մեր առջև իսկական վիհեր են բացվել»:

Հասկանալի է, որ այսօր մանկավարժների էնտուզիազմն ավելացել է, հատկապես վարպետ-դասարանների արդյունքներն ամփոփող ոգևորիչ «կլոր սեղանից» հետո: Եվ, այնուամենայնիվ, միայն ոգևորությունը քիչ է: Նաև մանկավարժական կոլիկություն է պետք: Շրջահայացություն: Հարցի արժեքի ըմբռնում:

Ալեքսանդր Նաումովիչի սիրելի մուլտֆիլմը՝ Գարի Բարդինի «Ադաջիոն», ցուցադրեցին: Այլաբանություն է այն մասին, թե ինչ անհարմար, դժվար ու պատասխանատու է գորշ երամուս սպիտակ թռչուն լինելը: Եվ առողջ դատողության տեսանկյունից ի՞նչ անհաղթելի է: Եվ անհուն, անչափելի:

Սոլովեյչիկյան XI ընթերցումների եզրափակիչ մասը Ալեքսանդր Նաումովիչ Տուբելսկու հիշատակին էր նվիրված: Բարեկամները, գործընկերները, լրագրողները հիշում էին հիանալի մանկավարժին: Եվ տարբեր ելույթների մեջ նույն լեյտմոտիվն էր հնչում՝ Տուբելսկու առեղծվածն այդպես էլ չի բացահայտվել: Նրա կողքին են եղել, դիտել, տեսել, գրուցել: Ամառային դպրոցներում, սեմինարներին, հրատարակչություններում, գործուղումներին, փորձաքննությունների, խորհրդակցությունների ժամանակ: Եվ որոշ բաներ հասկացել են, որոշ բաներ՝ չէ:

Էկրանին Տուբելսկու մասնակցությամբ ֆիլմ է, կրկին տեսնում, լսում ենք նրան. «Նյութն զգալն ավելի կարևոր է, քան իմանալը... Դպրոցը երեխաներին ավելին կարող է տալ, քան հեռուստատեսությունն ու համացանցը... Կարևորն այն է, որ դպրոցից հեռանալով՝ աշակերտը կարողանա ասել. «Այս դպրոցում եմ եղել, այս դպրոցում եմ ապրել, այստեղ ինձ մարդ են համարել»... Դպրոցի մեծագույն արժեքը մարդուն օգնող պայմաններն են, որ իրեն զգա և իրեն զարգացնի»։ այո, այո, այդպես է, չէ՞ որ պարզ է: Բայց գնա փորձի՛ր: Իրականացրո՛ւ:

Ջերի Մինցի խոսքից. «Երեխայամետությունը նրա մեջ արմատական էր, երեխայի իրավունքը պաշտպանելիս մինչև վերջ էր գնում: Երբ տասը տարի առաջ Պրինստոնում էր՝ ԱՄՆ կրթական թեստավորման կենտրոնում, այնտեղ տեսավ ռուսական կրթության ապագան, և դա վախեցրեց նրան: Երևում է, այն ժամանակ է որոշել թեստավորման դեմ կռիվ տալ և մտել է այդ մեծագույն պայքարի մեջ»:

Արտեմ Սոլովեյչիկ. «Փետրվարին Ալեքսանդր Նաումովիչը մեր խմբագրությունում կրթական նոր չափորոշիչներին նվիրված «կլոր սեղանի» էր մասնակցում: Նա առանձին էր նստած, նրա դիրքորոշումը գիտեին՝ «Չափորոշիչներն իզուր են»: Եվ բոլորը ժպտում էին այդ տարօրինակին: Իսկ նա միշտ ասում էր. «Կրթության մեջ չափորոշիչը պիտի առավելագույնը լինի: Իսկ առավելագույնն օրինական լինել չի կարող»: Միտքը պարզ է. դպրոցը պարտավոր չէ չափորոշիչ համար թափ վերցնել, չի կարելի նրան ներշնչել դրա կարևորության գաղափարը, այլապես մարդու կրթությունը կիրականացվի «ժամկետ լրացնելու» տրամաբանությամբ: Սակայն այն ժամանակ նրան չլսեցին:

Չլսեցին... Չհասկացան... Հեռացած մտերիմ մարդու մասին այսպես ենք մտածում: Մտերիմ

չափազանց շատ մարդկանց, այդ թվում՝ նրանց, ում չէր ճանաչում, ուղղակի կողքով անցնելիս ջերմացնում էր մտքով, կատակով, խոսքով, հայացքով: Անըմբռնելի՝ հանելուկ: Գիտեք, մի ութ տարի առաջ փորձագետների խմբի հետ մեզ մոտ էր եկել, իմ դասին նստեց, իսկ հետո... ձեռքս համբուրեց: Բոլորի ներկայությամբ: Քիչ էր մնում՝ ուշքս անցներ, ախր, այդպես չի լինում»:

Բեմում երեխաները երգում են՝ «Ինքնորոշման դպրոց» ԳՄՄ-ին կից գործող «Իզմայլովյան արվարձան» գիտա-մանկավարժական միավորման սաները: Անսովոր է. յուրաքանչյուր պատանի կատարող բառերն ու երաժշտությունը յուրովի է զգում, ինքն իր հետ է: Եվ հնարավոր է երգչախումբ պահել՝ ապավինելով միայն ներքին միաձուլմանը, առանց որևէ մեխանիկականության: Սակայն ժամանակը չէ՞, որ դադարենք զարմանալուց: Չէ՞ որ սա էլ Նրա դպրոցն է...

Թարգմանեց Սուսան Մարկոսյանը

Դպրոցը երեխայի կողմից է

Կրթական կրտսեր աստիճան կառուցելու փորձ

«Ինքնորոշման դպրոց» գիտամանկավարժական միավորման համագործակցային վարպետության պարապմունք

Վարդուներ՝ Դեբորա Մայեր, Օլգա Լոնտևա

Վարպետ դասարանն սկսեց գլխավոր հարցի քննարկումից՝ ի՞նչ է նշանակում «դպրոցը երեխայի կողմից է»:

Պարզվեց, որ տարբեր մասնակիցներ այդպիսի դպրոցի մասին նման պատկերացումներն ունեն: «Դա այն դպրոցն է, որտեղ երեխաները մեծերի համար են հետաքրքիր, իսկ մեծերը՝ երեխաների... որտեղ ուսուցիչը վստահում է երեխային... որտեղ մանկավարժը երեխայի օգնությանը դիմելը հնարավոր է համարում... որտեղ մեծը նախօրոք չգիտե, թե որն է կոնկրետ երեխայի «կողմը», և երեխայի հետ երկխոսության մեջ մտնելով՝ ամեն անգամ դա է փորձում հասկանալ»:

Նույնիսկ երբ դահլիճում բանավեճ էր ընթանում, դա վեճ էր, որը չէր ժխտում, այլ ավելի շուտ զրուցակցի միտքն էր շարունակում, բացահայտում քննարկվող թեմայի ծավալն ու բազմակողմանիությունը:

Մի այսպիսի բանավեճ, օրինակ, Դեբորա Մայերի այս խոսքից սկսվեց.

- Երեխայի կողմից դպրոց կառուցելու համար պետք է ստեղծել մի միջավայր, որտեղ երեխաները չեն վախենում, պաշտպանված և ապահով են զգում:

- Իսկ մեծե՞րը,- լսվեց դահլիճից,- մի՞թե կարևոր չէ, որ մեծերն էլ իրենց ապահով զգան:

- Իհարկե կարևոր է: Սակայն եթե մենք ապահովության զգացում ունենք, դա դեռ չի նշանակում, որ երեխաներն էլ են ապահով զգում,- պատասխանեց Դեբորան:- Այնպես պետք է անենք, որ

անպայման բոլոր երեխաներն էլ հասկանան, որ դպրոցն այն վայրն է, որտեղ իրենք պաշտպանված են, և որը միշտ անվտանգ է:

- Իմ կարծիքով, խոսքը հատուկ անվտանգության մասին է,- շարունակեց Ալեքսանդր Լոբոկը:- Այն անվտանգության, որն անհրաժեշտ է, որ թե՛ մեծը և թե՛ երեխան ինքն իր հետ լինելու պահանջմունքը բավարարեն:

- Երեք-չորս տարկան երեխաները բացարձակ անվտանգություն են ուզում,- նկատեց Դեբորան:- Նրանք ուզում են, որ շատ ուժեղ լինեն մեծերը, որ իրենց կողքին են: Այդ ժամանակ նրանք սխալներ անելու հնարավորություն էլ կունենան:

Մասնակիցներից մեկը պատմեց՝ ինչպես է իր թոռնիկն օգնել հասկանալու, թե «երեխայի կողմից լինելն» ինչ է նշանակում: «Մի անգամ թոռնիկիս հետ խաչքառ էի լուծում: Մի բառ թոռնիկս էր գտնում, մի բառ՝ ես: Ինչ-որ պահի թոռնիկս զգաց, որ ես պատասխանն արդեն գիտեմ: «Դու արդեն գիտե՞ս, դե՛ ասա»: Իսկ ես չէի շտապում բառն ասել: «Ես էլ ուզում եմ, որ դու գուշակես», - պատասխանեցի ես: «Բայց այդպես հետաքրքիր չէ»: Հասկանո՞ւմ եք, հետաքրքիր չէ, երբ աշխատում ենք իրենց հետ «սովորել» այն, ինչն արդեն գիտենք: Երեխայի կողմը լինել՝ նշանակում է նրա հետ զրուցել այն ամենի մասին, ինչը քեզ հետաքրքրում է, և ինչը ինքդ էլ ես ուզում հասկանալ: Միայն այդ ժամանակ մեծ ոգևորությամբ երեխան կսովորի մեծահասակի հետ»:

Բայց սրանք միայն ընդհանուր կողմնորոշիչներ են, այսպես ասած՝ «առաջին մոտավորության» դպրոց: Իսկ այս բոլոր հրաշալի սկզբունքներից ինչպե՞ս անցում անենք մանկավարժական պրակտիկային: Երեխայի հետ աշխատելու ո՞ր մեթոդներն են օգնում և որո՞նք են խանգարում դրան:

Այս հարցն ուսումնասիրելու համար վարպետ-դասարանի մասնակիցները որոշ ժամանակով դարձան սովորողներ, որոնց հետ պարապմունքներ էին անցկացնում «Ինքնորոշման դպրոցի» մանկապարտեզի դաստիարակներն ու դասվարները: Մինչև դասերին անցնելը լսարանին առաջարկեցին հինգ խմբի բաժանվել:

Առաջին խումբ հրավիրվեցին նրանք, ում հետաքրքրում էր «Մանկապարտեզը հեքիաթ է ներկայացնում» երաժշտական պարապմունքը: Մանկապարտեզի սանի դերն ստանձնած մանկավարժներն սկսեցին հեքիաթներ հորինել. նկարում էին, իրենց նկարները պատմում, մտքեր փոխանակում, ընտրում ամենագեղեցիկ հեքիաթը: Դաստիարակը օգնում էր, որ տեքստերը գրի առնվեն (ինչպես անում են մանկապարտեզի իրական սաների համար, որոնք դեռ գրել չգիտեն): Հետո նախատեսվում էր «հեքիաթային» տեքստերից մեկը ներկայացնել՝ «հեքիաթի հերոսների» դերերը բաժանելով խմբի անդամներին: Մանկապարտեզում երաժշտական շարժման պարապմունքներին պարբերաբար այդպիսի հանպատրաստից ներկայացումներ են լինում, որոնք ուղեկցվում են երաժշտական շարժումներով. մի օր Յուրայի հեքիաթն է բեմադրվում, հաջորդ օրը՝ Պետյայի...

Երկրորդ խմբի կազմում ընդգրկվեցին այն մանկավարժները, որոնց ավելի շատ հետաքրքրում էր մեծա-մանկական խաղային նախագիծը: Գաղափարը հետևյալն էր. երկրորդ դասարանցիները մեծահասակների հետ կառուցում են իրենց քաղաքը, բնակեցնում են և իրենց հայեցողությամբ կազմակերպում են քաղաքի ամբողջ կյանքը: Ընդ որում քաղաքի նախագծումն սկսում են

կառուցման տեղի լանդշաֆտը որոշելուց և հետո շինարարության ժամանակ օգտագործվող նյութերը քննարկելուց: Օգտագործվում է ամեն հարմար բան՝ սովորաբար տուփեր, պլաստմաս, թուղթ, ծեփոն, սպունգ... Շինարարությունն ավարտելուց հետո քաղաքն սկսում են «բնակեցնել» («Ինքնորոշման դպրոցի» վերջին նախագծում քինդեր-մարդուկներ էին), «բնակիչների» համար երեխաները պաշտոններ, աշխատանքի տեղեր, հետաքրքրություններ և նախասիրություններ են որոշում: Աստիճանաբար բնակիչներն ինչ-որ հարաբերություններ են հաստատում միմյանց հետ՝ աշխատանքի են ընդունվում, իրենց սեփական գործն են ձեռնարկում, քաղաքապետին գրություններ գրում և նրանից ստանում... Մի խոսքով՝ սովորական կամ էլ արտասովոր (կախված է հեղինակի երևակայությունից) քաղաքային կյանքն է սկսվում: Ամբողջ նախագիծը երկու ամսվա համար է նախատեսված: Պետք է ասել, որ դա ոչ թե միայն խաղ է, այլ նաև ուսուցում. նկարչության պարապմունքների ժամանակ երեխաները նկարում են լանդշաֆտը, մաթեմատիկայի դասերին շինարարության ժամանակ մակերեսների համարաբերությունները որոշելուն անհրաժեշտ հաշվարկներն անում, որոնք թույլ են տալիս հաշվի առնել շինհրապարակների վիճակը: Երբեմն նույնիսկ փիլիսոփայական բնույթի լուրջ բանավեճեր են ծավալվում: Ասենք՝ արդյոք արժե՞ քարի քաղաք կառուցել, որտեղ չարություն ընդհանրապես չկա...

Երրորդ խմբում «սովորողները» մաթեմատիկայից հաղորդակցական խնդիրներ էին լուծում և հորինում. պետք էր ոչ միայն խաղ հորինել այն քարտերով, որ ստացել էին, այլ նաև մյուսներին պայմանները բացատրել, պայմանավորվել, թե ինչպես պետք է միասին խաղան:

Չորրորդ խմբի աշխատանքի թեման Էդվարդ Լիրի «Ճանապարհորդություն դեպի Ջամբլեյ» բանաստեղծությունն էր: Ընթերցումների մասնակիցներին ուսուցչուհի Ելենա Տուբելսկայան առաջարկել էր Ալեքսանդր Նաումովիչի սիրելի բանաստեղծության բովանդակության մասին մտածել (սեպտեմբերի մեկին նա նույն աշխատանքն իր աշակերտների հետ էր արել): Բանաստեղծությունը բարդ է, ոչ միանշանակ, ասելիքի մասին ամբողջ կյանքում կարելի է մտածել...

Հինգերորդ խումբը միջանցքում էր անցկացնում պարապմունքը, որ մյուսներին չխանգարի. մասնակիցներն իրենց և իրար համար ճարպկությունը, շարժումների ներդաշնակությունը և... ստեղծագործական երևակայությունը զարգացնող հրաշալի շարժում-վարժություններ էին հորինում:

Ինչպես միշտ, հարց առաջացավ՝ իսկ ինչ անենք, եթե միաժամանակ մի քանի խումբ ենք ուզում հաճախել:

Տուբելսկու դպրոցի ուսուցիչների պատասխանը շատ պարզ էր.

- Այս իրավիճակը, որ հիմա առաջարկում ենք, հատուկ է մեր դպրոցին: Ուրբաթ օրը առաջին երկու ժամից հետո կրտսեր դպրոցում դասերը դադարեցվում են և բացվում են 15-20 արհեստանոցներ: Երեխաներն ընտրում են այն, ինչն իրենց համար շատ հետաքրքիր է: Իսկ հաջորդ շաբաթ մի ուրիշ բան են ընտրում:

Խմբերից յուրաքանչյուրն աշխատեց ուղիղ 30 րոպե, իսկ հետո բոլորին ներկայացրեց իր աշխատանքի արդյունքները: Դա ևս մի պարտադիր պայման է. այն, ինչ երեխաների ձեռքով է պատրաստվել, անպայման պետք է ներկայացվի մյուսներին: Ի՞նչ հաճույքով էին ռուսաստանցի և ամերիկացի մանկավարժները հենց նոր հորինած հեքիաթը ներկայացնում, «պատանի

ձեռնածուները» ցույց տալիս, թե ինչ են սովորել... Իսկ ինչպե՞ս էր ծափահարում բարեհամբույր հանդիսատեսը... Մաթեմատիկական խաղեր, կախարդական քաղաք, արտասանվող բանաստեղծություններ. և ներկայացումն ավարտված է:

Դրա ավարտից հետո երկու ֆիլմի հասված ցուցադրվեց. մեկում Տուբելսկու դպրոցի երեխաները պատմում էին իրենց մասին, մյուսում Դեբորա Մայերի դպրոցի պարապմունք էր նկարահանված: Պարզվեց, որ տեղի ունեցող ամեն ինչում՝ և՛ մոսկովյան «Ինքնորոշման դպրոցի» պարապմունքի, և՛ Դեբորայի դպրոցում ամերիկացի ուսուցչի անցկացրած դասի մեջ ինչ-որ մոտ ու հարազատ բան կար: Նույնիսկ թարգմանելու կարիք չէր լավ...

Հետո սկսվեց խմբերի աշխատանքի քննարկումը:

- Երբ մեր խմբի ղեկավար Ելենա Տուբելսկայայի հետ Էդուարդ Լիրի բանաստեղծության ընթերցանության մեջ էինք խորացել, ես զգում էի, որ դա Ելենային իսկապես շատ է հետաքրքրում: Դա ոչ թե մանկավարժի հետաքրքրություն էր, որը ցանկանում է ինչ-որ արդյունքի հասնել, այլ մարդկային հետաքրքրություն: Այստեղ անգամ «հետաքրքրություն» բառը հարմար չէ, քանի որ մանկավարժը զարմանքով, կարծես թե նորովի, իր համար բացահայտում էր Էդուարդ Լիրի տեքստը: Ամեն ինչ անկեղծ էր, ոչ մի վայրկյան այն զգացումը չունեցա, թե ինձ հետ խաղ են անում: Եվ այն ժամանակ երբ ֆիլմն էի դիտում, ոչ մի վայրկյան չէի կարողանում էկրանից կտրվել, որովհետև այնտեղ էլ էր ամեն ինչ բացարձակ ազնիվ:

- Բայց եթե ամեն ինչ այսքան լավ է, ինչո՞ւ շատ դպրոցներ հայտարարում են, որ «երեխայի կողմից» են, բայց իրականում շատ քիչ բան են անում, որպեսզի այս բոլոր հրաշալի արժեքներն ու սկզբունքները իրականացնեն:

Եվ ահա, վարպետ-դասարանի ավարտական փուլում իրական բանավեճ ծավալվեց, կարծես ներսում կուտակված էներգիան հանկարծ դուրս եկավ:

- Կարծում եմ, որ այս համակարգով աշխատելն ուսուցչի համար շատ դժվար է,- պնդում էր մասնակիցներից մեկը:- Որովհետև պետք է մտածել, վերլուծել, պետք է ակտիվ ուսուցիչ լինել: Իսկ գլխավորն այն է, որ շատ ուսուցիչներ այդպես աշխատել չեն ուզում: Նրանք ասում են՝ մեզ քիչ են վարձատրվում, էլ ինչ մտածենք: Ավելի հեշտ է գալ ու ծրագրով դաս տալ. ուզում եք՝ վերցրե՛ք, չեք ուզում՝ մի՛ վերցրեք:

- Դա ուսուցչի մեղքը չէ,- չէր համաձայնվում մյուսը,- բանն այն է, որ սկզբում ուսուցիչների հետ են այնպես աշխատել, որ ստեղծագործելու հակումը վերանա: Եթե ուսուցիչն ստեղծագործող է, տալիս են գլխին, իսկ եթե սովորական է, դա բոլորին ձեռնտու է: Իր ստեղծագործելու իրավունքը պաշտպանելու համար մարդ պիտի քաջություն ունենա, ինչպես Դեբորան: Ճիշտ է, մի խնդիր էլ կա: Չգիտեմ, գուցե դա ռուսական մենթալիտետի հատկությունն է, բայց մենք շատ շուտ ենք հանձնվում և անում այն, ինչ վերնից են թելադրում:

- Բայց ուսուցիչն ի՞նչ կարող են անել, եթե նրան պարտադրում են միայն գիտելիքների, կարողությունների և հմտությունների համար աշխատել,- կասկածում էր երրորդը:- Չէ՞ որ հիմնականում դրանք են ստուգվում:

- Հիմա ամբողջ աշխարհում «գրոհում են» երեխաների վրա,- բանավեճի մեջ մտավ Դեբորա

Մայերը: Նրանց ավելի ու ավելի շուտ են դպրոց ուղարկում: Արդյունքն այն է, որ երեխաները խաղի անգնահատելի փորձից են զրկվում: Ի՞նչ արենք: Կարծում եմ, որ նախ՝ բոլորին լսելի պետք է հայտարարենք, որ խաղը շատ լավ բան է: Ծնողների հետ համատեղ՝ որպես փորձագետներ պիտի խոսենք այդ մասին: Եվ գիտնականներին աստիճանաբար մեր կողմը պետք է գրավենք:

- Այսինքն՝ քաղաքականությամբ զբաղվելու կո՞չ եք անում, - նկատեց զրույցի այդպիսի զարգացումից ակնհայտորեն դժգոհ մի մանկավարժ: - Իսկ եթե դա անել չեմ ուզո՞ւմ: Իմ դասարանում, այն պայմաններում, որ կան, ես ցանկանում եմ աշխատել երեխաների հետ: Այս իրավիճակում երեխաներին ինչպե՞ս կարող եմ օգնել:

- Կարելի է օգնել, - ի պատասխան լսվեց դահլիճի հեռավոր անկյունից: - Ես դասավանդելու փորձ ունեի, երբ որոշեցի՝ վերցնեմ ու երեխաներին ազատություն տամ: Ընդ որում, ես վերցրի շփվելու խնդիր ունեցող երեխաներին: Առաջին քայլը, որ արեցի՝ երեխաներին թույլ տվեցի պարապմունքների գալ ծնողների հետ: Հետո թույլ տվեցի զբաղվել նրանով, ինչով ուզում են: Ցանկանում ես մայրիկի՞ դ հետ լինել՝ եղի՞ր, ուզում ես մեքենայո՞վ խաղալ՝ խաղա՞լ: Դա ինձ չէր խանգարում անգլերեն սովորեցնել: Երեխաներին անգլերեն ասում էի. «Խնդրում եմ, ձեռքերը հատակին հասցրեք», և բոլորը ձեռքերը մեկնում էին հատակին: Ասում էի մեկ ուրիշ բան, և նրանք դա էին անում: Շատ հեշտ է երեխաներին թույլ տալ, որ լինեն այն, ինչ կան: Դա դասարանը չի քանդում և պարապմունքը չի խափանում:

- Իմ կարծիքով, նրանք, ովքեր ցանկանում են աշխատել երեխաների հետ և միշտ նրանց կողմից լինեն, պետք է միավորվեն, - ամփոփեց «Ինքնորոշման դպրոցի» մանկապարտեզի վարիչ Մարգարիտա Ֆյոդորովնա Գոլովինան: - Բայց դա դժվար է: Ա՛յ, երեկ խոսում էին «Արագիլ» դպրոցի մասին: Դա ծնողական դպրոց է: Դա ստեղծվել է նրանից, որ ծնողները չէին ցանկանում, որ իրենց երեխաները սովորական դպրոցում սովորեն: Այդ ժամանակ նրանց սկսեցին ստեղծել իրենց դպրոցը: Այնտեղ բազմիցս եղել եմ. իսկական երջանկություն է: Պետք է գտնել այն մարդկանց, որոնց հետ լինելը քեզ իսկապես հետաքրքիր է, և անել այն, ինչն անելը հետաքրքիր է: Այդ դեպքում անպայման ձեր շուրջ կհավաքվեն նրանք, ովքեր ձեզնով հետաքրքրվում են: Եվ կարևոր չէ՝ հատուկ գաղափարներ ունե՞ք, թե՞ ոչ:

Վերջում Մարգարիտա Ֆյոդորովնան առաջարկեց.

- Ամեն ուսումնական տարվա սկզբին՝ սեպտեմբերի մեկին, առաջին դասարանցիների ծնողներին առաջարկում ենք իրենց երեխաների համար նվեր անել և համերգ տալ: Եկեք մենք էլ մեր մյուս գործնկերներին ուրախացնենք, ովքեր այսօր մյուս խմբերում էին աշխատում: Համաձայն եք: Հրաշալի է: Ուրեմն սկսե՛նք:

Թարգմանեց Նաիրա Դալուզյանը

Երեխաներին դաստիարակելն ինչու է դժվար մեզ համար

Ռեպորտաժային նյութեր 12-րդ ընթերցումներից. 2008թ.

Եվ իսկապես՝ ինչո՞ւ: Այս հարցին ամեն մեկը յուրովի կպատասխանի: Մեկը կասի, որ փորձն է պակաս, մեկը կորոշի, որ համբերություն չունենք, մեկն էլ... Պատասխանների ողջ բազմազանությունից մեկի վրա կուզեինք կենտրոնանալ: Երեխաներին դաստիարակելը դժվար է, քանի որ հաճախ ինքներս էլ լիովին չենք հասկանում, թե մարդկային բնույթի որ դրսևորումներին ենք առնչվում, երբ դատողություններ ենք անում դաստիարակության մասին:

Վերջին ժամանակներս դաստիարակության մասին շա՛տ են խոսում, խանութների գրադարակները լիքն են համապատասխան մեթոդականներով ու տեղեկատուներով:

Դաստիարակության համար այդ մտահոգությունը ցույց է տալիս, որ իրականում դաստիարակության մեջ ինչ-որ բան այն չէ: Թեկուզ այն, որ երեխաներին դաստիարակելն առաջվա նման դժվար է:

Սակայն այդ դժվարությունը, մեր տեսանկյունից, հենց դաստիարակության խնդիրը չէ: Չէ՞ որ դա մի ուրիշ մարդու ներաշխարհի հետ փոխազդեցություն է: Այդպիսի փոխազդեցությունն իր սկզբունքներն ունի, հոգևոր գործընթացների ընդհանուր օրինաչափություններից (և հակասություններից) բխող իր հնարավորություններն ու անհնարիությունները: Իսկ առանց այդ օրինաչափությունների և հակասությունների մեջ մտնելու, առանց դրանք ընդունելու դաստիարակությունը դառնում է ինչ-որ արտաքին, մեխանիկական բան:

Ուրեմն ինչպե՞ս դաստիարակենք երեխաներին, որպեսզի նրանց ոգին ու համառությունն ամրացնենք: Մանկավարժական ի՞նչ սկզբունքներ պիտի լինեին այն դպրոցի հիմքում, որը դաստիարակեր առանց քարոզների և պատիժների:

Ընթերցումներին հավաքելու ենք շատ տարբեր մարդկանց՝ ուսուցիչների, մանկավարժության տեսաբանների, փիլիսոփաների: Եվ միասին փորձելու ենք գտնել այդ հարցերի պատասխանը: Կարծում ենք, որ այսօր հենց այսպիսի խոսակցությունն է պետք բոլոր նրանց, ով ինքն իրենց հարցնում է՝ ինչու՞ է մեզ համար դժվար երեխաներին դաստիարակելը:

Ընթերցումների թեման մեկն է, պատասխանները՝ շատ...

Լյուդմիլա Կոժուրինա

Ամեն տարի Մոսկվայի Ուսուցչաց տան դահլիճներում միմյանց հանդիպելը երկրի շատ ուսուցիչների համար դարձել է ավանդական: Ո՛չ եղանակը, ո՛չ էլ ծրագիրը մեզ ոչ մի անգամ հուսախաբ չեն արել: Ընթերցանության օրերը միշտ էլ պայծառ են եղել: Գեղեցիկ, մի քիչ էլ՝ հանդիսավոր: Հետաքրքրի՛ր: Տոնակա՛ն: Խելացի՛: Այս տարի հյուրերին դիմավորեցին խնձորներով: Կարմիր, դեղին, կանաչ: Սկուտեղների, անձեռոցիկների, մրգամանների, զամբյուղների մեջ. կե՛ր ինձ: Խորհրդանի՛շ է: Փոխաբերությո՛ւն: Այո, իհարկե՛: Իմացության ծառի պտուղը, կյանքի և ընտանեկան հարաբերությունների խորհրդանիշն է:

Իսկ նրանց համար, ովքեր ճանաչում էին Տատյանա Բաբուշկինային, սա նաև ուղղակիորեն զուգակցվում էր նրա ինքնատիպ մանկավարժական աշխարհի

մի բացատրի՝ «խնձորային մանկավարժության» հետ: Այս գարունը Տատյանա Բաբուշկինան հեռացավ: Տասներկուերորդ Սուլվեյշիկյան ընթերցումները նվիրվում են նրա հիշատակին:

Առաջին օր

Ընթերցումները բացեց, թեման հայտարարեց, հյուրերին ողջունեց «Սեպտեմբերի մեկ» հրատարակչական տան խմբագիր Արտեմ Սուլվեյշիկը.

- Որ^ոն է դաստիարակության դժվարությունը: Դա մեկ այլ մարդու ներաշխարհի հետ շփման դժվարությունն է: Այստեղ ամեն ինչ չէ, որ կախված է մեզանից, ամեն ինչ ուղղագիծ չէ: Յուրաքանչյուր ոք իր առանձնահատկություններն ունի, երեխաները շատ տարբեր են, և երբ դատողություններ ենք անում դաստիարակության մասին, կարդում ենք ձեռնարկներ և տեղեկատու գրականություն, հարց է առաջանում՝ իսկ ինչպե՞ս այս ամենը կիրառենք կոնկրետ իրադրության մեջ, կոնկրետ երեխայի դեպքում: Դաստիարակողի ընտրությունը դժվար է՝ հետևենք հրահանգների^ն, թե՞ մեր նպատակը երեխայի արժանապատվությունն ու ոգին ամրացնելն է: Եկեք մտածենք՝ ինչպիսի^ն մանկավարժական սկզբունքներ պիտի լինեն դպրոցի հիմքում, որը առանց բարոյախոսական խրատների և առանց պատիժների կդաստիարակեր: Հարցեր, հարցեր... Արդյո՞ք ընթերցումները սրանց պատասխանները կտան: Դա էլ է հարց:

Երբ ամեն ինչ ըստ ծրագրի էր ընթանում, ակնհայտ դարձավ, որ պատասխաններ կլինեն: Դատելով դահլիճի մտախոհ լարվածությունից, ինչ-որ ներքին զսպվածությունից՝ դրանք այնքան էլ ակնհայտ չեն լինի, ինչպես նախապես ենթադրվում էր:

Առաջին պատասխան

Լիարժեք չապրած մանկությունը մարդու և հասարակության բազմաթիվ հիմնախնդիրների աղբյուրն է: Մանկությանը պետք է հասունանալու հնարավորություն տալ:

... Տատյանա Բաբուշկինայի Ռոստովյան ակումբի ելույթին բոլորը չկարողացան մասնակցել. ազատ տեղ չկար, անգամ կանգնելու տեղ չկար: Կապույտ հյուրասրահում ուղիղ հեռարձակում էին, սակայն այնտեղ էլ նստելու տեղ չկար: «Երեխաներին վաղ ենք սոցիալականացնում, նրանց շտապող ու անազատ դարձնում... Նույնիսկ երեխայի՝ խաղալիքի նկատմամբ վերաբերմունքից միշտ երևում է՝ նա ազատ է, թե ոչ», - հնչում է Տատյանա Վիկտորովնայի ձայնը, նրան տեսնում ենք էկրանին: Սակայն մի բան է երեխայի մասին նրա խոսքի ճշգրտությունը, հիասքանչ անսովորությունն զգալը, բոլորովին այլ՝ հասկանալ, ինչ գնով է դա ձեռք բերվել:

Բեմում ռոստովցի Վետա Խրյաշչևան, Վոլոդյա Ցեխը, Իրա Գոնչուկը, Մարինա Կիրնոսովան են. նրանք թեն հուզվում են, բայց իրենց ուղուց չեն շեղվում. «Փակե՛ք աչքերը... լսե՛ք... հիշե՛ք...». Մեծ դահլիճում, անծանոթ մարդկանց մեջ իսկական արհուրթություն է: Նրանք փորձում են յուրաքանչյուրի մեջ կենդանացնել իր մանկության սիրելի վայրերի մասին հուշերը: Դժվար է, սակայն այլ կերպ չի լինի: Երեխայի տարածությունը մտնել, նրա ժամանակում կարելի է հայտնվել միայն ինքն իր մեջ ամենից նվիրականն ու ամենահարազատը՝ սիրած խաղալիքի ջերմությունը, բլիթների բույրը, ձմռան սառնամանիքին դրսից բերված սպիտակեղենի թարմությունն արթնացնելով: Այդ ժամ բոլոր չափանիշները այլ են դառնում. լավը շատանում է, վատը՝ քչանում: Կարելի է խոսել բազմոցի հետ, իրեն հայտնաբերել կաղանքի մեջ, լույս խմել ...

Որպեսզի ներաշխարհով մարդ ծնվի, երեխան խորքային մեծանա և մակերեսային էակ չդառնա, մանկությանը չի կարելի ի միջի այլոց վերաբերվել:

Կինոկադրերը շարունակվում են, Տատյանա Վիկտորովնան ասում է.

«Ի՞նչ է մանկավարժը: Սա իմ հարցը չէ, իմ երեխաների հարցը չէ»: Մենք նայում ենք, դիտում ենք նրա երեխաներին. թռչկոտում են անձրևի տակ, երգում են, քայլում են լեռնային արահետով, նստում են խարույկի մոտ, խնձոր կծում, քամի են բռնում, անձրև սարքում, ոզնի կերակրում: Կչկչում են ռեպ պարելիս՝ դիմակահանդեսային հագուստներով, նկարված մարմիններով և երջանիկ աչքերով. ահա արևի շտեմարանը:

Եվ բոլորին հասկանալի դարձավ. Տատյանա Բաբուշկինան դրա բանալին իր հետ չի տարել:

Երկրորդ պատասխան

Մեծահասակը երեխայի կողքին ոչ թե ինքն իրեն պետք է վստահի, այլ իր միջի երեխային: Դրա համար մեզանից յուրաքանչյուրում ապրող երեխան պիտի պահանջված լինի:

... «Ինչպես մեծահասակը բացահայտի իր ներսի երեխային» դասախոսության սկզբում Ալեքսանդր Լոբոկը միանգամից չէր գտնում ելակետը, երևում էր, որ նա ենթագիտակցորեն «շոշափում» էր այն. ո՛չ մեջբերում, ո՛չ կոնկրետ իրադրության օրինակ: Այդպես էլ հավանաբար երեխայի հետաքրքրությունը հնարավոր չէ պլանավորել, չի համապատասխանում մեր սպասելիքներին:

- Հարկավոր ոչ թե վերհիշել քո ներսի երեխային, այլ պիտի կարողանալ հասնել այդ բացառիկ իրավիճակին, երբ քո ռեակցիաները առավել ինքնաբերիկ են դառնում, - ասում է դասախոսը:

Դահլիճում տարակուսում են. այսինքն ի՞նչ՝ սեփական խոսքերի համար պատասխանատու չլինե՞ն: Այդքան էլ այդպես չէ: «Անցման» օրինակը չհապաղեց. դասախոսը ճմռթում է թղթի կտորը. «Ինչի՞ նման է»: - «Ժապավենի»: «Եվ այս ժապավենը...» - «Տոնի ժամանակ կարելի է կապել»: - «Եվ...» ... Երկխոսությունը ձգվում է, տեմպը՝ համաչափ արագանում, ո՞ր՞ թմ, ո՞ր՞ թմ. մարդը չի կարողնում պատասխանները կշռադատել, նա տրվում է ակնթարթային գուգորդումների, հասնում ենթագիտակցության մակարդակ: Նա դուրս է պրծնում «ինչպես ճիշտ է»- ի գերությունից և ամբողջովին տրվում ինքնարտահայտմանը: Հենց սա էլ պետք էր ապացուցել՝ հենց այս մանկական ազատությունը, անկանխատեսելիությունը ուղեկցվում է երկխոսության մասնակիցներից յուրաքանչյուրի դեմքի երջանիկ արտահայտությամբ:

Յուրաքանչյուր ստեղծագործող մարդ իր սեփական փորձառությունը հորինելով է զբաղվում, սակայն ինքն իրեն, իր ներսի մարդուն վստահել կարողանալը այնքան էլ հեշտ գործ չէ:

Ահա բոլորին արտամոտ թեմա՝ կարգապահության սովորեցնելը: Ենթադրվում է, որ կարգապահության սովորություն պիտի մշակվի: Պայքարում են կարգապահության համար: Սակայն սա ինքնին նշանակում է մարդու իրավունքների հաստատում առարկայական խառնաշփոթի տիրույթի վրա՝ դրա կարգավորման սեփական հետագծով, կարգավորման գործողության համար սեփական նվիրապետությամբ: Ներքին ջանքերով, այլ ոչ թե ուրիշի կամքի ինքնաբերաբար կատարմամբ: Տարբերությունը շատ մեծ է: Մանկական քայլը արդեն իսկ ստեղծագործական է՝ իրականություն – ենթագիտակցություն – գործունեության փորձ: Մեծերը «այսպես է պետք» ալգորիթմների գերիններն են:

Իսկ միշտ այլ կերպ է պետք...

Քննարկումների մեջ թերություններ չկային: Ծայրահեղ դեպքում շատերի համար սեփական մանկավարժական, ծնողական փորձից ինչ-որ բան պարզվեց. «Ամեն ինչ անում եմ, ինչպես հարկն է, և՛ հասկանում եմ, և՛ հաշվի եմ առնում նրա հետաքրքրությունները, պայմաններ եմ ստեղծում, սակայն ոչինչ չի ստացվում»: Չի ստացվի, քանի դեռ օտարված ենք մեր մանկությունից: Մեր ներսի երեխայից հեռու ենք:

Երրորդ պատասխան

Ինչպես ցանկացած բարդ համակարգում, մանկավարժության մեջ չի կարելի ուղղակի և արագ օգուտի ձգտել: Պետք է ձգտենք մանկավարժական մշակույթի բարդ բազմազանությունը և գեղեցկությունը հասկանալուն:

...Վասիլի Կուլչենկոն դահլիճի հետ «Դաստիարակությունը և բարդ համակարգերը. երեխաներ, մեծեր, դպրոց» թեմայով զրույց է վարում:

- Կանխատեսելիությունը պարզ համակարգի հատկություն է,- ասում է Կոլչենկոն:- Մինչդեռ այն, ինչ տեղի է ունենում մարդու, երեխայի հետ, չափազանց մեծ թվով գործոններից է կախված: Եվ եթե ստիպված ենք մեր առջև դաստիարակչական նպատակներ և խնդիրներ դնել, ապա ամեն օր դրանք պետք է խմբագրել: Չէ՞ որ անիրականանալի ցանկությունների դաշտ ստեղծելը նշանակում է մշտապես հիասթափվել:

Սակայն դպրոցը, ընտանիքը, երեխան մշտապես չափում են: Չափորոշիչներ ստեղծում են մարդիկ, ովքեր ոչինչ չեն հասկանում ո՛չ դպրոցից, ո՛չ երեխայից և ո՛չ էլ մանկավարժությունից: Բարդ, բաց համակարգում պարզ, փակ համակարգի չափսերը կիրառելը արկածախնդրություն է: Այո, չինովնիկներին այդպես ավելի հարմար է: Բայց ինչպես է դա ջղաձգում դպրոցը և այնտեղի մարդկանց: Դաստիարակությունը այս դեպքում դառնում է կախյալ, ենթակա, պարզունակ: Դառնում է իր հակադրությունը:

...Դահլիճի վերաբերմունքից հասկանալի է. թեման ցավոտ է: Չէ՞ որ երեխաների կողքին ոչ թե պետական պաշտոնյաներն են, այլ ուսուցիչները, տնօրենը: Դպրոցական դաստիարակության վերաբերյալ «պատասխանատու» ղեկավարության տգետ որոշումների հետևանքների հետ նրանք են գործ ունենում: Ուսուցիչները խոսում էին իրենց դաստիարակչական անհաջողությունների, մրցակցության և համընդհանուր վերահսկման մթնոլորտում նորանոր սխալների անխուսափելիության մասին, այն մասին, թե ինչ դժվար է այդպես ապրելը, երբ հարկավոր է երեխաներին հաշվետվության համար անհրաժեշտ գործողությունների վարժեցնել...

Օրն ավարտվեց Ֆեդերիկո Ֆելինիի «Ամարկորդ» ֆիլմի ցուցադրությամբ: Մի պատմություն է, որի հիմքում ռեժիսորի հուշերն են սեփական մանկությունից: Գաղափարն այն է, որ մարդկանց գոյության միօրինակությունն ու միաչափությունը ոչ այնքան արտաքին հանգամանքների հետևանք է, որքան մարդկային զանգվածների հոգեբանական հատկություն...

Երկրորդ օր

Այս օրը նվիրված էր դաստիարակության փորձին: Սեմինարներ, վարպետ-դասարաններ, բաց դասեր: Հյուրերի տրամադրությունը գործնական է, սակայն չի խանգարում շփվելուն:

Խոսակցությունների հիմնական միտքն այն է, որ լավ է՝ այս թեման բացել են: Շատ կարևոր բաների վրա ուշադրություն դարձրին. դատարկ ջուր չծեծեցին:

Ընթերցումների երկրորդ օրվա միջոցառումները հուսախաբ չարեցին:

Չորրորդ պատասխան

Թեև «բացահայտում», «հայտագործություն» բառերը մանկավարժության մեջ վաղուց արժեզրկվել են, այնուամենայնիվ, ո՛չ ուսուցիչը, ո՛չ սովորողը առանց «Էվրիկա, գտա» զգացողության չեն կարող կայանալ:

... Ծրագրում նշված է. «Բաց դասը վարում է Շավվա Ամոնաշվիլին»:

Բեմի վրա իսկական նստարաններ են, աթոռներ, գրատախտակ:

Շավվա Ալեքսանդրովիչը «աշակերտներին» դասի է հրավիրում:

- Կգնամ,- շնչում է մի ուսուցչուհի մյուսին,- հետո կկարողանամ բոլորին ասել, որ Ամոնաշվիլուց եմ սովորել:

Դասարանը արագ հավաքվում է: Կարծես թե պարզ դաս է՝ տարրական դպրոցի մաթեմատիկա, թվեր, վանդակներ, գծեր: Բայց և անսովոր է. աշակերտների ենթադրությունների, կռահումների հիման վրա է կառուցված, հաճախ սխալ: Իսկ ի՞նչ անես: Անսխալականություն պահանջես՝ պասիվություն կստանաս: Միայն առարկան սովորեցնես՝ կհոգնես և ոչինչ էլ չես սովորեցնի:

«Մաթեմատիկան թվերի սիմֆոնիա է», - սկսում է Շավվա Ալեքսանդրովիչը: Նա գեղեցկություն և ներդաշնակություն է փորձում սովորեցնել, իսկ առաջադրանքներն «ի միջի այլոց» կլինեն: Ամենալավն այն է, որ մարդ կարողանում է դժվար խնդիրները լուծել՝ առանց լուծելու:

...«Աշակերտները» մտածում են, լարվում, ջանում, հիշում. կարծես այնքան էլ չի ստացվում: Բայց ահա դասերի դասը. իրենց սեփական ենթագիտակցության նկատմամբ մանկավարժների անվստահության խնդիրը բացահայտ դրսևորվում է:

Ենթագիտակցությունը վարժված չէ, որովհետև պահանջարկ չի ունեցել:

Այնուամենայնիվ, Ամոնաշվիլու դասի քառասուն բոլորն մեծամասնության համար բավական եղավ, որ դասի ամենավերջում դեմքերը լուսավորվեն ըմբռնման պահի հաճույքից:

Իմ հարևանուհին իր տեղը վերադարձավ միանգամայն երջանիկ. «Տեսա՞ք: Իմ ձեռքը սեղմեց»:

Տեսանք: Ամոնաշվիլին իսկական ուսուցիչ է:

Հինգերորդ պատասխան

Հազար բացատրություն կլինի, թե ինչու դասին աշակերտի անձնական կարծիքը տեղ չունի: Իսկ երեխաների թանկարժեք դատողությունների հետ աշխատելու

պատրաստակամություն մանկավարժները շատ հազվադեպ են դրսևորում: Ինչու շատ հաճախ չես հանդիպում այնպիսի մանկավարժների, ովքեր պատրաստ են աշխատել արժանի մտքեր ունեցող երեխաների հետ:

Երբ Մարինա Բիտյանովան սկսեց «Դասի դաստիարակչական ներուժը» թեմայով սեմինարը, ունկնդիրներին պարզ դարձավ, որ խոսքը լինելու է այն մասին, թե դասի ժամանակ ինչպես պետք է աշխատել արժեքների և մտքերի հետ: Պատրաստվում էին պատասխանները գրի առնելու. հարկավոր է աշխատել ահա այսպես, կարելի է նաև այսպես և ահա այնպես:

Պարզվեց՝ ամեն ինչ այդքան ակնհայտ չէ: Նախ պետք է ինքդ քեզ պատասխանես՝ իսկ ինչպիսի ուսուցիչ ես: Որն է քո մանկավարժական ոճը: Դրանից ելնելով էլ փորձիր քո առարկայի դասերին արժեքների հետ աշխատանքը «տեխնոլոգիացնել»:

Ինչ կանխադրություններից պետք է ելնել: Առաջին՝ ներկա պահին մարդը ինչով զբաղված է, հենց դա է նրան դաստիարակում է: Երկրորդ՝ մարդու համար ամենակարևորը մյուս մարդկանց հետ հարաբերություններն են: Երրորդ՝ մարդուն անհրաժեշտ է անհատական ուշադրություն. «Այ հիմա, այս ժամանակահատվածը քեզ հետ եմ անցկացնում»: Եվ վերջինը՝ գիտակցումը, ձևակերպումը և արժեքների ստեղծումը լինում են այն ժամանակ, ուսուցիչը ընտրություն և դրա հիմնավորումը պահանջող իրավիճակներ է մոդելավորում:

...Սեմինարն ավարտվեց, մինչդեռ ունկնդիրները շարունակում էին լուռ նստած մնալ տեղերում: Իհարկե, սովորեցնելը մեր առաջին գործն է: Մակայն գլխավորը, պարզվում է, բոլորովին այլ բան է: Այն է, ինչ չեն էլ հարցնում:

Վեցերորդ պատասխան

«Ճիշտ մոդելները» պատճենելուց անիմաստ բան չկա: Վարքի օրինակների համար չենք թրեյնինգների և վարպետության դասերի գնում:

...Բայց այդ մասին մտորող երիտասարդ ուսուցիչները Իգոր Վաչկովի «Ուսուցիչ-աշակերտ փոխներգործություն: Ընթացում փոխաբերական խաղի միջոցով» վարպետության դասն սկսվելուց առաջ շատ չէին: Դա էր պատճառը, որ «ընդվզող» աշակերտի համատեղ քննարկումը որոշակի պահի դրամատիկական ձևեր ընդունեց:

Պարապմունքի սյուժեի համաձայն հարկավոր էր պառավ Շապոկյլակի (բողոքավոր վարքի փոխանուն) անկարգություններին վերջ դնելու միջոցներ մտածել: Ցանկը կազմելը դժվար չէր՝ անկեղծ գրույց, նվերներով բարիացում, ինքնասիրությունը շոյելու փորձ, թեկուզ կեղծ պաշտոնի շնորհում: Բայց ինչն է միմյանց հետ չվիճելը՝ սեփական «այդպես ճիշտ է»-ն պնդելով: Եվ ահա արդեն վարպետության դասի վիրավորված մի մասնակից ցուցադրաբար դուրս է գալիս դահլիճից:

Պետք է ընդամենը բոլոր աչքերին նայել. ահա ամեն մի մարդու բողոքական վարքի պատճառը՝ իր կարծիքի նկատմամբ հասարակության անուշադիր վերաբերմունքը, դա ընդունելու անհնարինությունը, իրեն ուղղված ցանկացած «չէ»-ն: Նախ և առաջ սա պետք է հաշվի առնել, իսկ մանկավարժական հնարքները արդեն կարող են շատ տարբեր լինել՝ ուղղակի և փոխաբերական, ընդունված և ինքնատիպ:

Յոթերորդ պատասխան

Դա գաղտնիքի մասին է:

Երկրորդ օրվա ընթացքում Կապույտ հյուրասրահում Տատյանա Բաբուշկինայի ռոստոլյան ակումբը ճամփորդություն էր անցկացնում նրա մանկավարժական աշխարհի տարբեր անկյուններով: «Խառնաշփոթ մանկավարժություն», «հովանոցային», «խնձորային», «պատուհանային», «գարդաստուփային», «հեքիաթային», «սովերների մանկավարժություն». Ընդգրկուն և, թվում է, անվերջ տեղագրություն է: «Եվ էլի...». պարապմունքների ժամանակ սա Տատյանա Վիկտորովնայի սիրած նախաբանն էր: Իսկ դեպքերը չէին շարվում մեկը մյուսի հետևից, այլ մի պլանից անցնում էին մյուսը, փոխակերպվում էին:

... Գործընթացը Իրա Գոնչուկն է վարում, Տատյանա Վիկտորովնայի քսանի չափ աշակերտներ ընկերակցում-ձայնակցում են: Ահա հասարակ չփչված փուչիկը: «Ինչպիսի՞ն է»: - «Վարդագույն... Անցյալում կարմիր... Տխուր... Հարկավոր է փչել»: - «Նա գովաբանությունից կուռչի: Գովեք փուչիկը»: Սկզբում պարզունակ խոսքեր են. «Դու գեղեցիկ ես... Քեզ սիրում ենք»: - «Էլի՛, էլի՛»: Ճիշտ որ այնքան էլ հեշտ չէ գովելը: Պետք է խորանալ: «Երբեք ոչ մեկին չես նեղացնի, չես վախեցնի», - վերջապես համոզիչ խոսք է հնչում, և փուչիկները, բազմաթիվ ձիգ փուչիկներ պտտվում են մեր գլխավերևում: Թռիչքներ: Բայց արդեն ոչ միայն փուչիկներ են թռչում, այլ նաև թղթե ծիտիկներ: Ահա. թռիչքը՝ թռիչք, փուչիկից հասանք թռչունին: Իսկ թռչունի՞ ց: Բնին. շուր տված հովանոց՝ թղթե ծիտիկներով: Վա՛յ, սա արդեն ոչ թե բույն է, այլ ճոճվող օրորոց, և այնտեղ՝ գույզգույն թղթերի կույտի տակ (դրանք արդեն ծիտիկներ չեն) լաթե մանկիկն է... «Նրա անունն ի՞նչ դնենք... էլի... էլի»: Անընդհատության մեջ ամեն ինչ անտեսանելի թելերով կապված է ամեն ինչի հետ՝ անվան գաղտնիքը, իրի գաղտնիքը, մանկության գաղտնիքը:

Եվ ահա, թե ինչն է հետաքրքիրը. այս ամենը հասկանալ էին ուզում (վարպետության դասին եկել էին) երկու խումբ ուսուցիչներ՝ ամենաերիտասարդները և ամենափորձառուները, նրանք, ովքեր ավանդական հոսքային մանկավարժությունը չէին հասցրել ճանաչել, և նրանք, ովքեր արդեն հիասթափվել էին:

Ութերորդ պատասխան

Թող դաստիարակը երջանիկ լինի:

Ընթերցումների ծրագիրը Նինա Ալահվերդովայի հետ հանդիպմամբ եզրափակվեց: Սա կարծես «Կյանքի գիծն» էր, միայն թե առանց շպարի, առանձնահատուկ էֆեկտների և խմբագրումների: Եսի պատմությունն էր՝ մեծ և բովանդակալից կյանքից եկող լուր: «Ինչո՞ւ է մեզ համար դժվար երեխաներին դաստիարակելը: Որովհետև ամբողջ ընթացքում մասնավորից դեպի ընդհանուր ենք գնում»:

Ինչ որ ճիշտ է, ճիշտ է. մտածում ենք, դատողություններ անում արարքի հորիզոնում, իրավունքներին ապավինում, և այս ամենը դատարկ խոսակցություններ են: Եթե մեծահասակը ինքը կոտրված է, ճնշված, հոգեկան հենարանից զրկված, նրա կողքին երբեք երեխաները չեն կարող պաշտպանված զգալ, լավատեսորեն տրամադրվել: Լավատեսությունը շատ կարևոր է: Լավատես մարդիկ հեռու են գնում:

Եվ խոսքն ամեննին էլ սոցիալական խնդիրների մասին չէ, և ոչ էլ այն մասին, թե «պետությունը մեզ ինչ է անում»: Պետությունը վանդակից բացի այլ բան չի էլ կարող լինել: Հարցը այլ կերպ դրեք. այդ ամենի առումով դուք ինքներդ ինչի՞ կրող եք, ինչո՞վ եք պատրաստ պատասխանելու, ի՞նչ եք հակաճառելու: Հարցն այն չէ, թե նրանք ինչ են ասում և անում, կարևորն այն է՝ մենք ինչ ենք անում, ինչպես ենք մտածում, ինչպես ենք վերաբերվում դժվար հարցերին: Այդ պատճառով էլ երեխաների դաստիարակության խնդրի շուրջ խոսակցությունը առավել ընդհանուր հիմնախնդիրների համեմատ մասնավոր է: Ինչո՞ւ է մարդու համար սեփական կյանքում լիարժեք ներկայության զգացումը, սեփական արժանապատվության զգացումը պահպանելն այդքան դժվար: Ինչո՞ւ նա չի կարողանում կյանքն ընդունել որպես օրհնված, հրաշքներով լի մի բան: Իսկ ինչո՞ւ է այդպես վախենում սիրելուց...

Իններորդ պատասխան

Կամ Ինչ պատմեցին ընթերցումների հյուրերը: Դաստիարակության մեջ շատ բան, եթե ոչ ամեն ինչ, կախված է մեծահասակների դրվածքից:

Ամենակարգում ընթերցումների եկած հյուրերին հարցաթերթիկ էին բաժանվել. հարկավոր էր «Ինչու է մեզ համար դժվար երեխաներին դաստիարակելը» թեմա-հարցի մեջ ընդգծել բառերից մեկը, որում թաքնված է խնդիրը:

Մանկավարժները ոչ միայն ընդգծել էին բառը, այլ նաև հիմնավորել: Երեխաներին չէին քննադատել: Դաստիարակության դժվարության պատճառները համարել էին մեծերի և երեխաների մեկուսացումը, սոցիալական հիմնախնդիրները, դպրոցում դաստիարակչական գործընթացի կառավարման արատները: Մակայն գլխավոր պատճառը, մեծամասնության կարծիքով, հենց մեր մեջ է: Մենք կամա թե ակամա ջանում ենք երեխաներին մեզ հարմար, լսող դարձնել: Տանը, դպրոցում: Ձանք ենք թափում ազդեցության և ոչ թե փոխազդեցության վրա: Դրանից չէ՞, որ այդքան հաճախ է մեր առջև հառնում այդ հուսահատ, անելանելի «Բայց ինչո՞ւ»-ն:

...Պատասխաններն ամբողջությամբ կարող եք կարդալ երկրորդ տետրի էջերում, որտեղ ընթերցումների բոլոր ելույթների սղագրությունը բերված է:

Սուլվեյշիկյան XII ընթերցումների իրադարձությունների ժամանակը սպառված է: Փակման արարողությունը եղել է. «Շատ շնորհակալ ենք ձեզանից, որ գալիս եք ընթերցումներին: Ձեզնից յուրաքանչյուրը օգնեց, որպեսզի ընթերցումները լինեն հենց այնպիսին, ինչպիսին եղան: Եվ դրանք յուրահատուկ եղան»:

Այնքան յուրահատուկ, որ դեռ երկար ժամանակ չէինք կարողանում հեռանալ:

Թարգմանեց Նունե Մովսիսյանը